ուն. 3539
1958-1911

ԳԻՐՔ

Պատմութեան

ՈՐԴՈՁԻ ՊՂՆՁԻ ՔԱՂԱՔ:

Որ՟ բանք խրատականք և օգտակարք՝ Խիկարայ Իմաստնոյ:
Որ՟ այլ բանք պիտանիք:

պագրեցեալ ՚ի Հայրապետութ՟ն Գերագահ Ս՟Թոռոյն Այ Էջմիածնի Տ՟ն Ղուկասու Սրբգն Կաթողիկոսի Ամ՟ Հայոց:

Որ՟ ՚ի Պատրիարգութ՟ն Սյ Ե՟մի Տ՟ն Յովակիմայ Երջանկափառ Վարդապետի:

Վեհափառ Հրամանաւ Մեծի Աթոռանիստ Մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Սբ՟գն Արհի Եպիսկոպոսի Տեառն Զաքարիայ Ազգասէր Կարդացեալ Ածաբան Պատրիարգի:

՚Ի Թուին Հայոց՝ ՌՄԽԱ. Յունվ՟ Ը
՚ի Տպարանի Յօհաննէսի և Պօղոսի:

1792թ.



7560-57

առ ամիրմումէն առ յարևմտից տէրն · որ երթայք երկուքդ 'ի ժուռ գայք , մինչև գտանէք զայն կուժն · և ինձ հաստատուն զրոյց առէք թէ՝ ինչ կայ 'ի ծով կամ 'ի ցամաքի։

Նա՛ ետ խալիֆայն շատ գանձ տուլեւլին և պատուական ակունք , տաճիկ ձիանք , և ազնիւ ծառայք։

Գնաց տալխին առ ամիրմումէն։

Նա՛ ելաւ՛ ամիրմումէն շատ հեծելովք յ՟ն ականացուոց թղթերին։

Կարդաց թագաւորն ականացուոց զհրամանն տալխիլին · և կոչեց զինչ իւր աշխարհն հին մարդ կայր , ու զշատաշուրջ վաճառականքն։ Գտան ալևոր մարդ մի , որ գիտէր զծով և զցամաք · և զամենայն աշխարհն տեսել էր։ Հարց թագաւորն զծերն և ասէ , սիրելի՛ գիտես զայն տեղն՝ որ սողոմոն բարկացաւ դիւացն , և'ի պղնձէ կուժն՝ եած ու արճիճով մատնեհարեաց , և 'ի ծովն ձգեաց։ Ասաց ալևորն՝ այո՛ գիտեմ։

Ասաց թագաւորն թէ՝ պիտի որ տանիս զխալիֆոյն և ամիրայքն յայն տեղն: Ասաց ալևորն՝ յոյս ունիմ առ Ած, որ զբարին առաջնորդէ: Բայց ճանապարհն մուխաթարայ է և հեռի. ես որ անջուր պիտի գնամ և գամ: Ապա շատ զարմանք կայ ՚ի ճանապարհին: Յայնժամ ասաց թագաւորն ցամիրմուաէն. այդ գիտեմ ծերդ՝ որ յաշխարհիս այլ չկայ, ՚ի քեզ եմ տուեալ: Ետուր էած ամիրմուաէն՝ և խիլաթեց զծերն: Ապա եհարց ցծերն՝ ի՞նչ պէտք են ՚ի ճանապարհին: Ասաց ծերն՝ հազար ուղտ աւելի պիտի քան զմեր գրաստն՝ որ ջուր բառնամք ու մըտնումք ՚ի պուլի ճ̃ն: Այլ զջուրն պիտի ապլիկե կժով բառնամք՝ որ չցամաքի. զի հողմն սաստիկ կայ, որ ցամաքեցնէ զջուրն ՚ի տկին:

Յայնժամ զուգեցին՝ և ուղևորեցին ՚ի ճանապարհ: Ապա գնացին բ̅ռ̅ ձիաւորօքն ՚ի շէն և անշէն ՚իններս·

և հանին յանմարդաբնակ աշխարհն, և լմընցաւ տարի մի։ Եւ գիշեր մի ծերն զաստղն նշան էր եդեալ՝ և երթոյլին. և ծածկեաց ամպն զաստղն, և մոլորեցան ՚ի ճանապարհէն։ Եհարց ամիրմուսէն զծերն և ասէ. յոր աշխարհի եմք։ Ասաց ծերն՝ ոչ գիտեմ։ Ասաց ամիրմուսէն. կարես դառնալ յայն տեղն՝ որ զճանապարհն կորուսաք։ Ասաց ծերն՝ ոչ գիտեմ։ Յայնժամ շատ լացին, և գնացին ա̅յ անապատն մ̅ջ մինչև ՚ի կէս օր Եւ մտան ՚ի դուր ճ̅ մի. և կայր ՚ի մէջ ճ̅ին սևագոյն բլուր մի բարձր. և ՚ի հեռուստ ո̅պ զծուխ երևէր. և դիմեցին ՚ի նա։ Եւ իբրև մօտեցան՝ տեսին, զի գմբէթ էր բ̅րձր գեղեցիկ. և շէնքն ամէն պատուական ակունք էին. եախուտ և զմրուխտ, և շուրջ զանազան ակամբք զարդարեալ։ Ասաց ամիրմուսէն՝ փառք ա̅յ. որպէս գեղեցիկ շինուածք են։ Եւ դուռն գեղեցիկ մարմարիոնեայ էր։

և

Ե՜ւ ղուպպէին նստուա՜ծքն՝ հազար ըղտոյ քոյլք էր. և գմբէթն բարձր՝ արճիճով կապած։ Տեսա՜ն ամիր մուսէն՝ և զարմացա՜ն ՚ի բարձրութ՟են ղուպպէին։ Ե՜ւ էր անվայր և անմար դարբնակ. և բուն ճչէր ՚ի վ՟ր պարսպացն։ Երբ զայն տեսին՝ շատ լացին։ Ե՜ւ ասաց ամիրմուսէն թէ՝ զատ ՚ի յա՟յ ո՛չ ո՛ք կարէ շինել. զի փառք և վայելչութի՟ աշխարհիս սուտ է։

Ե՜ւ գրած էր ողբն այս։

Գնաց ժամանակ նց՟, երբ երազ մութն ՚ի գիշերին. չըկայ դառնալու ճարակ, յոյս տեղս զոր ՚ի յետ թողին Աւա՛ղ թէ կարեմք գիտնալ, թէ բարի գործով գընացին. կ՟մ թէ հարա՜ծով անցին, վ՟ն մեղաց որ մէկ չէր՜ին Յայնժամ ասաց ամիրմուսէն. ո՞ւր էն սոցա տէրքն կամ շինօղքն. և ո՞ւր էն, որ շատ դատեցան, և ոպ՟ ծաղիկ թարշամեցան և պակասեցան Ասաց ալևորն. պա՛րտ է քեզ գոհանալ զա՟յ, որ փրկեաց զմեզ յայս

մու

մուխաթարոյէն , և հասոյց 'ի յայն վայելուչ տեղիքս։ Գիտեմ ամիրայ՝ որ քո ա͞ծսիրութ͞եդ փրկեաց զմեզ։ Իմ հայրն կասէր թէ՝ ո՛վ որ յայն տեղն մոլորել է՝ որ մեք մոլորեցաք, այլ ո՛չ են երևեալ։ Բայց աստից մին չև 'ի պղնձէ քաղաքն երեք ամսոյ ճանապ͞րհ է. զայս աղէքսանդր շինեց՝ և ը͞ այսր գնայր 'ի պղնձէ քաղաքն։ Յայնժամ ասաց ամիրմուսէն՝ յա͞ռջ 'ի քաղաքս մտնումք և տեսանումք ըզ վայելչուի քաղաքիս, և ապա երթամք։ Ե՛ւ մտեալ 'ի քաղաքն՝ տեսաք գեղեցիկ դարպաս մի շինած մեծ և լայնանիստ. և 'ի դուռն գրած էր նօտր գրով։ Ասաց ամիրայն՝ ո՛վ կարէ կարդալ զայս գիրս։ Ասաց ալևորն՝ ես եօթն ազգի գիր գիտեմ։

Ասաց ամիրայն՝ կարդա՛, որ տեսանում։

Ե՛ւ գրած էր այս բաներս։

Մարդըն որ գաս 'ի յայս տեղիս ,
Թող լայ ըզմեզ՝ ինքն խրատուի .
որ մեք 'ի մեր շատ իրացն , եմք բա

ժամն ողորմ ու լալի։ Ա՜յ քիչ մի յառաջ երթայք, ու տեսնուք երբ զարմանալի. և փառք ո՜յ նա տայ, քանզի նա՛ է միշտ կենդանի։ Տեսէք դուք բազում զարմանք, թէ քանի մարդ հող է դարձեր. մահըն բաժանեց ըզ մեզ, կորուսաք զոր ինչ ունէաք։ Համարըս տալոց եմք մեք արարչին՝ զոր ինչ եմք գործեր. ոյ վա՜յ անաչառ ատենին, ուր զահեղ բարբառն է հնչէր։ Ժողվեցաք գանձս բազումս, ու այլոց թողաք գնացաք. ըզ քիչըն շատին տըւաք, ու զանդէնքըն մեք մոռացաք։ Ա՜յ 'ի հետ մեզ այն երեկ, զինչ որ յայս կենքս գործեցաք. նա թէ չար արարել եմք

զամէն գործոց հաշիւն տի տամք։

Յայնժամ մտին 'ի կայսրն և տեսին զարմանալի շինուած՝ և'ի գետնամէջն տաշէր կապած էր. արծաթած և ոսկէջրած. և գնացին 'ի մէկ այլ դուռն։

Ա՜յս գրած էր դռան այս։

Քանի՛ ադամայ որդիք, ծընէր է

յոյս կեանքս ու մեռեր · և քան զանասուն անբան, կենդանեօքս աստէն մոլորեր: Այլ որ գիտունք են եղեր, զայս կեանքս սուտ են համարեր · անդէնն իւրեանց տուն շիներ, ու

վըստահ 'ի ներս գնացեր:

Ասեց ամիրմուսէն՝ և աղխողորմ ելաց և ասաց · որ ունի խելք և միտք և իմաստութի՝ նա կարէ ճանաչել զայս կեանքս, որ ամէն մեծութիւն ոչ ինչ է: Ա՜յ կայր 'ի յայն կայորին մէջն ղուպպէ մի · և 'ի բոլորն ղուպպէին դ̅ձ̅ գերեզման կայր մարմարոնէյ քարէ՜՝ ազգի ազգի գունով: Ա՜յ գրած էր 'ի վ̅ր̅ տապաններուն՝ փորած ու ոսկուով լցած՝ յունարէն գրով շատ ողբեր · և գերեզման մի ուրիշ կայր զարդ̅ր̅ծ՝ որ կարդ·ց ալեորն

Ա՜յ գրած էր ողբս այս:

Մ՜ամ թէ քանի կացի, կենդանի ու վայելեցի · գործոյս ամէնըն հաշուի, ահա էհաս ժամ՝ որ խընդրի:

Քանի կենդանի էի, նա բազմաց

պար

պարգևք բաշխէի · ես զիս անմահ
կարծէի, նա եղայ սակաւ մի փոշի:

Այս գրած էր ըե՝ հեծուպեն գերեզմանն է. որ ՚ի մահուան ժամանակին առաջ եղերած իւր անձինն:

Բանի որ յոյս կեանքն եկիր, նա կացեր զամէնն ՚ի յերեր · բերթեր ու բազում քաղաք, դու զամէնն այլոց խըլեցեր: Հիմի ես խաւար դարձեր, որ որդունքն ՚ի քեզ կան ՚ի կեր · դու ես պատասխան տալու,

զոր ՚ի յոյս կեանքըս զըրկեցեր:

Յայնժամ մտան ՚ի մէկ այլ դուռն · և գրած էր · երբ մահն երեկ՝ իմ զօրքն չկարացին թափել զիս · իմ անչափ մեծութիւն ոչ կայր այլ մարդ · իմ բաժին պատանքս է, ու տանօղքս, ու փորօղքս, ու գերեզմանս · և ամէն մեծութիւնս կորեաւ՝ և այլոց մնաց: Այս արդ՝ իմացայ որ մարդկոյս սէրն կորոյս զիս · երբ իմ անչափ մեծութիւնս ինձի դէմ չեկաւ, նա այլ մարդ կայ, որ այս սուտ կեանս ցաւղոյս կու հաւատայ:

Այս մտան 'ի մէկ այլ ղուպպէն. և տեսան՝ որ զարմանալի շինուածովք զարդարած էր: Ո՛վ եղբարք՝ ա̄ծ միայն է անմահ ու անեղ. մի՛ վստահանայք 'ի սէր աշխ̄իս. զի խաբեբութ̄ և սուտ է, և երազոյ նման:

Այս գրած էր ողբս այս:

Ո՛վ իմ սիրելի եղբարք, աչք 'ի յիս տուէք զենեհար. գեմ շատ 'ի մէկ տեղ կեցայք, և եղայք ուրախ հաւասար: 'Ի յայս տեղս իմ խիստ գուամար, զի դժոխքն է մութն ու խաւար. զիս տեսէ՛ք արէ՛ք ձեզ ճար, զենէհար հազար զենէհար:

Այս գրած էր թէ՝ ո՛վ զիս տեսնու, թող վայ տայ ինձ. զի ես թագաւոր էի հզօր և յաղթօղ 'ի պատերազմի. այժմ լաւ է մուրացկան մի քան զիս:

Այս գրած էր ողբս այս:

Այլ ես կենդանի էի, տէր էի ու̄ քաղաքի. բերդեր ու գաւառ բազում, անհամար և անթըւելի: Տասն հազար ձի ունէի, պէտաւի և զարմանալի․ երբ ես 'ի տընէն ելնէի, քըղաքն ա̃ մարդ հեծցնէի։ Ինչափ ոսկի ու արծաթ, ակ և մարգարիտ ունէի․ որ պըրձերով լցեր էի, ու ապրեցայ ձժ տարի։ Յանկարծակի մահ անկաւ, 'ի յիմ դարըստան և չըմնացաք․ ո՛չ ծեր և ո՛չ տղայ ասաց, հանց որ թաղել ո՛չ կարցաք։ Բայց թէ զմեծերն թաղէաք, և զայլսըն 'ի բաց ընկեցաք․ այլ այժմ մեք յոյժ յաղթեցաք, ու զայս բաներս առ ձեզ գրեցաք։ Որ ըզմեր խեղճ մահըն լսէք, ու դուք ձեզի մեզ մէն խրատ առէք․ լսելով հասեալ բարկութին, 'ի մանկութէ ձերում ապրէք։ Ես մեծ թագաւոր էի, հըզօր զօրաւոր և արի․ շատ գանձ ղումաշ ունէի, որ չունէր մարդ վերայ երկրի։ Զ հոգիս իմ անտես արի, ու զընչից շահըս թողէի․ զամէնն այժմ այլոց թողի, մէն ըզպատանքս առի գնացի։ Մեռայ ես որ տէր էի, բարութես զոր դուք տեսանէք․

մարդ ու հանց աղուոր վայելք , չէ հասեր ունեք հայրենիք ։ Նա՛ դեռ զըրկել զայլ ոք , մինչ որ մահն ասաց թէ հերիք · մոխրիս եմ հասար եղեր , ո՛վ եղբարք իմ դուք մի՛ խաբուիք ։

Նա̂ երբ ցաւ̂ն զիս նեղեց՝ կոչեցի զիմսն զա̃մ · և ասի թէ օգնեցէ՛ք ինձ · Թափեցէ՛ք զիս ՚ի մահուանէ , որ կու բաժանէ զիս ՚ի ձեզանէ ։ Ասացին , թէ չարկամ ունիս, ասէ որ կռուինք · թէ չէ՛ ՚ի հետ Ա̃յ ո՛վ կարէ կռուիլ , մահն առաջի ա̃մցն կայ ։ Յորժամ որ զայն լսեցի , նա կայի Ա̃յ ՚ի հրամանքն · բերել տուի զապրանքն իմ զա̃մ , ու կուտեցի ո̃պ զբլուր մի ։ Նա̂ ասացի իմ գանձիս թէ՝ գնեցէ՛ք զիս , որ մէկ տարի մի այլ ապրիմ · Նա՛ ասացին , թէ այդ բանիդ այլ ճար չկայ · նա կացի Ա̃յ հրամանքն , ու արձակեցի զհոգիս ։

Աւա՛ղ մեռած անուանս իմ , որ այլ

ո՛չ ընաւ յիշուի բարի ․ Թագաւոր որդի գաղատոյ , որդի շատոյ Թագաւորի ։ Ինչ գանձ ու ղումաշ կայր ինձ , զոր միողջք էի ժողովեր ․ չըկարաց ինձ մէկ օգնել , կամ սակաւ մի ցաւ փարատել ։ Դուք զայս կենանքս ու զայն առէք , երբ մահուան ճարակին է հասեր ․ չըկայ հողածին ծընունդ , կենդանի որ զինքն է պահեր ։

Այս բըրջոյ մի կայր 'ի մէջ դարպասին ․ ու ոսկի արծիւ մի՝ գրած 'ի վ̄ր ն̄ր ․ Ջուրն 'ի բերանն 'ի վայր թափէր ․ տակն ա՛լ էր կապած , որ ծաթած ու ոսկեջրած ։ Այս գրուած էր թէ՝ ով որ տեսնու զայս վայելչութ̄իս , նա թող փառաւորէ զա̄ծ ։

Այս գրած էր ուղէս այս ։

Ո՛ մարդ՝ իմացիր զայս կենանքս , և գիտես որ չէ՛ մնացական ․ զմահըն մոռացերէք դուք , ամենիս է ապընջական ։ Զոր ինչ ադամոյ 'ի վեր , են ծըներ ամէնն ու գընան ․

Ջանամ որ բարի գործես, որ անդէ‿
նըն չլինիս փոշիման։

Այս գնացին 'ի չորս դուռն. և գրած էր
ըսէ` երբ ես 'ի սեղան նստէի` տասն հազար
մարդ 'ի ծառայութեան կանգնէր առաջի իմ.
ու երկու հարիւր հազար մարդ իմ շիլան կու-
նստէր. և որ էր այս։

Հիմի եմ 'ի հող դարձեր, կերա‿
կուր որդանց եմ եղեր. և 'ի յիմ ան-
ձուն բարեացն, դատարկ ՞'ի բայց
եմ մնացեր։ Ոստ մարդ անար‿
ժան ատօք, յիմ տունս եկել ժուռ
դայր կոխեր. այժմ այլ ոք յիմնէ
չվախեր, աղքատաց նման եմ եղեր։
Ո՛ մարդ` որ երբ գաս առ մեզ, լաց
ու զմեր կորուստն որոնէ. մահ մար-
դոյն դիւրաւ հասանի, ըզկեանք մար-
դոյն դիւրաւ կփոխէ։ Մինչ մեք
կենդանի եաք, նըստեաք ընդ ում
արժան է. հիմի ամենէն 'ի զատ, որ
անանց հուրն ըզմեզ կայրէ։

Այս գնացին 'ի հինգ դուռն. և գրած էր
'ի վերայ դրանն ոսկէգրաւ շատ խրատ,
և որ էր այս։

Այս աստընւորիս բարիքն, չէ՛ իսկի մարդոյ մնացական. մահըն զօրաւոր կուգայ, և տանի 'ի հող ու 'ի զընտան: Որչափ որ անհոգ լինիս, ու շատ գանձ ունիս 'ի խազնան. մահըն գոյ քակտէ տանի, որ իսկի հետքըն չերևան:

'Ի վեց դուռն գրած էր ողէս այս:

Յիմար ադամայ որդիք, որ յ̃ս էք դուք շըփացեր. տեսէ՛ք թէ քանի՛ մարդիք, յադամայ 'ի վեր են անցեր: Դուք իսկի ընաւ չյիշէք, այլ անբանից պէս էք եղեր. ու անմըխիթար քոյլըք, ըզմահուն օրն էք մոռացեր:

'Ի եօթըն դուռն գրած էր ողէս այս:

Այս աստընւորիս բարին, երազի ինքըն նըման է. ու վայ նր̄ ասեմ, որ զայս կեանքըս խիստ կուսիրէ: Երանի տամ այն մարդոյն, որ անդէնն ըզտուն կու շինէ. որ երբ այս կենացս ելնէ, յ̄տյ ինքըն չամաչէ:

'Ի յութն դասուն գրած էր ոսկւով այս:

Իսկ ո՛չ խրատուին մարդիկք, թէ մահուն օրըն գալոց է. մոռնան զահագին տանջանքն, որ ըշքազուման անդ ժողովէ: Ո՜ ինչ որ աստ գործած լինի, անդ մէկին ո̄ւ վճարէ. Ջանա՛ զքեզ 'ի զատ պահել, 'ի մեղաց և 'ի չարեաց գործէ:

Նա̂ գրած էր թէ՝ տեսէ՛ք որ այս ամ̄ շինուածոյս և գանձոյս որ ես տէր էի, նրատէի կայս ղուպլէս ու վայելէի. և 'ի յայս անուշահոտութէս անմահանայի: Արդ՝ տեսէ՛ք զայս ամ̄ թագաւորութիս, որ տուն է եղեր այժմ գազանաց և թռչնոց. քանի զայս տեսանէք, այլ մի՛ հպարտանայք, և մի՛ գործէք չար, և մի՛ նախանձիք 'ի սուտ փառքն: Յիշեցէ՛ք զայն՝ որ համարս տալոյ էք առաջի քի̄. զի ո՛չ կարէք պատաճառել, թէ ո՛չ գիտացաք:

Նա̂ գրած էր ոսկւով այս:

Արի՛ք դուք այս տեղս եկէք, ու-

տե

տեսանէք զիս ՚ի մէջ հողին · Թողերեմ զամէնն ՚ի բաց, նմա համար կուզեն իմ գործին։ Լացէք զամէնին պատրօնս, որ տէր էի ա̅ երկրի · այսօր յամէնէն զըրկած, այն ունի հոգիս գեհենի։

Եւ այլ շատ ողորմ բաներ գրած էր, այլ թեթեւացոյց ամիրմուսէն զՏ̅ն՝ յիւր աչքն։ Եւ գնացին յայն ղուպպէն՝ որքան զծուխ երեւէր · այնչափ բարձր էր ու արճըճով կապած · զայն տեսան՝ և զայլոց վայելչութեն մոռացան ։ Քանզի պատերն ամէն ոսկեով շինած, ու դըռուներն ամէն ծխանելիք էր, մէք ոչ կարացաք գրել։ Յայն ղուպպէին մէջն սեղան մի կայր, որ դեղին ականք ճօհարով ու ոսկով և մարգարտով էր կազմած · և կայր շուրջ ՚ի նմա Ժ̅Բ̅ ակն · և բոլորն սեղանոյն Ճ̅ թիզ էր։ Եւ գրած էր թէ՝ ո՞ւր են նոքա, որ զուարճանային շուրջ զսեղանովս · և ՚ի բոլոր սեղանոյն ամէն լուսատու ակունք էին։

Ա՛ս գրած էր ուրիշ այս:

Շատ թագաւորք ճաշակեալ, ՚ի սմա այսօր մէկ մի չերևին. և այն որ գալոց է աստ, գընալոց է անհընարին: Փոխին ցեղ ու ցեղաւորքս, որ լինի ամէն մեռանին. անտէր թողին զայս սեղանս, ու լալով ելան գնացին:

Ա՛ս ՚ի Դէմացն տէն գրած էր ղայս ուրիշ գեղեցիկ:

Ո ինչ կոյս գեղեցիկ շինուած, մահըն գոյ զամենն խափանէ. ճարտար դու մըտի՛կ արէ, թէ սոցա շինողքն այժմ ո՞ւր է: Այնպէս արծեցի զնա, ու մըտօք զինքներդ դու քըննէ. երկնաւորին դու փառք տուր, որ ամէն հոգւոց նա տիրէ:

Ա՛ս գրած էր, թէ այս սեղանս զըմբուխտ թագաւորին է: Հազար թագաւոր է կերակրեր ՚ի վերայ սեղանոյս, ու ամէն թագաւորաց անուանքն գրած է. ու ամենեքեան անցեալ են ՚ի ներքև հողին:

Ապա իբրև տեսաւ ամիրմուսակէն՝ հրամայեց հեծելին թէ՝ գրեցէք զայս բաներս · և մնացին ի յայն ղուպղէն զ՟ օր: Ապա ապա այլ գնացին երեք աւուր ճանապարհ, և տեսան բարձր բլուր մի , ու ի վ՟ր բլրին կայր ձիաւոր մի պղինձ · և գրած էր ի վ՟ր բումբին թէ՝ կա՛լ զիս և ծ՟ հետ ի շուրջ ած · ընդ որ դադարի՝ այն է պղինձ քաղաքն: Արարին որպէս և գրած էր · և ըղորդեցաւ բումբին ծայրն ընդ յարևմուտս · և գնացին ընդ այն, և անցան է՟ դիժար կապան մի, և տեսան բարձր բլուր մի քարէ: Ապա յայն սիւնէն ծայրն կայր կենդանի մի ի մարդոյ ձև · թաղած ի յայն սիւնն մինչև ի մէջքն: Ապա ունէր երկու թևք մեծամեծք · ձեռքն ոպ՟ առիւծու էր · մազն ոպ՟ ձիու · աչքն մեծամեծք և կարմիր զէտ ըղբոց ի վառ · և կերպարանք նր՟ ոպ՟ զթուխ սադի: Գոչէր ահագին ձայնիւ և ասէր · փառք ա՟յ անեղին և

ան

անմահին բարձրելոյն և միշտ կենդանւոյն , որ զայս անտանելի չարչարանքս 'ի վ̄ր յինձ էած ։ Եւ իբրև տեսան, յոյժ զարմացան ։

Եւ ասաց ամբոխուածն գոչէր զայս 'ի վերայ նորա ։

Զարմանք մենք այսօր տեսաք , չէր տեսած այլ մարդ հողածին ․ կենդանի մի թևաւոր , որ յաչացըն հուր փայլէին ։ Կերպարանքն որո̄յ թուխ ամպի , փառք ասէր անմահ արարչին ․ զայս չարչարանքս որ յինձ եա , չէր կրրէր այլ քաջ անմարմնին ։ Եւ գնացին 'ի մօտ ն̄ր ։ Եհարց ալևորն և ասաց , ո՞վ ես դու ․ կամ ո՞վ է դրեր զքեզ յայդ սիւնդ ։ Ասաց թէ` ես այն դևն եմ , որ 'ի հետ Սողոմոնի պատերազմեցայ ․ իմ անունս ասմշէր է ․ ես աստ կամ 'ի չարչարանս հրամանաւ Սողոմոնի , մինչև ո̄յ հրամանն հասանէ առ իս ։ Ասէ ամբոխուածն ․ վ̄ էր եդ զքեզ Սողոմոն 'ի յայդ չարչարանքն ։

Ասաց քաջն · կայր Թագաւոր մի աբտիւլազիզ անուն, որ ինձ քրոջ որդի էր, Այն ունէր է̄ կուռք · կանաչ զմրուխտ, ու եախուտ · և ես ըսպասաւորէի կուռոցն: Ու մեր Թագաւորին բազում հեծել զօրք կայր · և ոչ ոք կարէր դէմ կենալ նմա · ու է̄ զում քաջք 'ի նր̄ հրամանքն էին: Այն կայր մեր Թագաւորին դուստր մի անօրինակ զարմանալի պատկերաց տէր: Ուղարկեց սողոմօն էլչի առ Թագաւորն մեր և ասաց · տո՛ւր զքո դուստրն ինձ 'ի կնութ̄ի · և կոտորեմ զկուռքն քո · և հաւատամ յա̄ծն իմ, որ արար զերկինս և զերկիր: Թէ զայս առնես՝ եղբայր լինիս ինձ · ապա թէ ոչ՝ պատրաստեա՛ ըզքեզ 'ի պատերազմ, որ գամ տամ զմահն 'ի քեզ բաժին:

Լսեց մեր Թգ̄աւորն և բարկացաւ · կոչեց զիւր հեծելն ա̄մ, ու էհարց թէ՝ զի՞նչ տամք պատասխանի սողոմօնի: Ասացին մեծամեծքն թէ՝ 'ի

մարմնաւորաց քան զքեզ ոչ կոյ
մեծ · դու մեծ ես քան զսողոմօն:
Բայց մի՛ւտ դու առաջի չալծոցն ,
ու աղաչեմ նց̃ , թէ օգնեցէք ինձ ·
զի սողոմօն գալ կամի ՚ի վր̃ մեր առ
՚ի կոտորել զմեզ: Յայնժամ ես ան
բան տխմար ու հպարտ և շփացած
իմ մեծութ̃ս · որ ոչ ճանաչէի զսող
մօն հզօր դաւ̂թի որդին՝ ես հար
ցի զկուսան վս̃ այս բանիս: Պատաս
խանի տու̂ին թէ՝ մի՛ վախէք ՚ի սո
ղոմօնէ արքայէն ես կարօղ եմ առ
նուլ զգործ սողոմօնի · և տամ ՚ի
ձեզ յաղթութ̃ի: Լսեց աբտիլազիզ
թագաւ̂որն մեր ու խիստ ուրախա
ցաւ̂ · և զսողոմօնի էլջին ծեծեց , ու
շատ վատ ասաց սողոմօնի · և ասաց ,
թող պատրաստի՛ ՚ի պատերազմ ·
որ ես եկեալ տամ նորա բաժին
զմահն:

Գնաց էլջին՝ և ասաց սողոմօնի զամ̃:
Եւ սողոմօն պատրաստեց զինքն
՚ի պատերազմ · ժողովեց զզօրքն և

քաջք բազումք մարմնաւորք և անմարմինք · հազարք հազարաց և բիւրք բիւրոց օձք և վիշապք, գազանք և անասունք և թռչունք · և ուսոյց նց՟ զկռուելն։ Ապա եկեալ սողոմօն յած՟ն մեր՝ ուղարկեց էլջի առ թագաւորն մեր թէ, ահա՛ եկի ՚ի քո ած՟ն · լսէ՛ իմ հրամանացս ու եկ առիս · և կոտորեմ զկուռքն քո · և հաստատ յած՟ն իմ · զի ո՛չ կարեն դուքս պահել զքեզ ՚ի ձեռաց իմոց։ Լսեց մեր թագաւորն՝ ու կալաւ զէլջին սողոմօնի · զերեսն սևացոյց զէլջուն · և ուղարկեց առ սողոմօն թէ՝ պատրաստ լեր, որ կռուիմք · տեսնումք՝ ո՛ր ած՟ կարօղ է և յաղթօղ։ Գնաց էլջին՝ և ասաց սողոմօնի զամ՟։

Յայնժամ գնաց սողոմօն ՚ի դուռ դաշտ մի · և իմ թագաւորն ՚ի դուռ լեռ մի։ Ժողովեցան զօրք բազումք անթիւ և անհամար՝ և քաջք բազում, և յաջողեցաւ կռուին։

Ո՜վ հրամայեց սողոմոն գազանացն՝ որ կեան ընդաջմէ կոյէն, և կեան 'ի ձախմէ: Ո՜վ թռչնոցն հրամայեաց՝ որ բարձրանային 'ի վ͞ր ձայթելով, ու կտուցով ծածկէին զերեսս և զաչս մեր, և չտային բանալ: Գազանացն հրամայեաց թէ՝ զգրաստանին լափեցէ՛ք և փախստական արէ՛ք: Օձիցն և մրջնակացն հրամայեաց թէ՝ աւ͞ր ներուն մէջն մտէ՛ք ու պաշարէ՛ք: Ո՜վ իմքն սողոմոն նստած էր ոսկի ակրազմ թախտ օձուն վ͞ր, զարդարած ազգի ազգի: Ո՜վ հրամայեաց սողոմոն՝ որ բարձրացուցին զթախտն, որ հայէր 'ի վ͞ր պատերազմին: Ո՜վ հրամայեաց սողոմոն իւր վէզիրին՝ որ կայր 'ի յիւր աջոյ դիհն, և այլ հեծելք ընդ անմարմնոցն 'ի ձախմէ կոյէն: Ո՜վ դրին կուռի դ͞ օր և դ͞ գիշեր. և ով կարէ պատմել զահագին պատերազմն, թէ զդղրդմներն՝ և թէ զգոռումն: Ո՜վ քան զամենն յառաջ ես յաղթեցի սողոմոնի հեծե-

լին

լէին · ու պարծեցայ, թէ զսողոմօնի վէզիրն ամիրաթ՝ բերեմ առաջի իմ թագաւորին։ Կանչեցի և խառնեցայ 'ի հեծելն ասելով թէ՝ զայլոք չուզեմ, բայց զքեզ ամիրաթ · էկ՝ զի տեսցուք զիրար։ Ապա նա ևս գոչեաց ահեղագոչ ձայնիւ · և ինձ այնպէս թուեց թէ՝ երկինքն պատառեցաւ և փլաւ 'ի վերայ իմ · բեկան մէջք մեր հեծելին · 'ի սաստիկ ձայնէ նորա։ Ապա երբ խառնեցաք ամենքս իրար, թռչունքն չտային 'ի մեզ աչք բանալ · գազանքն ու սողունքն ափշեցուցին զմեզ։ Ապա այնպէս խստացաւ կռիւն՝ որ ոչ հայր որդւոյ ողորմէր, և ոչ եղբայր եղբօր կարէր օգնել · և բազումք 'ի մեր զօրացն մեռան։ Ապա առաք ես ու ամիրաթն յիրար · և վեց ժամ կռուեցաք, մինչ որ ձանձրացաք երկուքս · և ես կամէի՝ որ բաժնուէի յամիրաթէն։ Տեսաւ սողոմօն զիմ դառնալն 'ի յետ · հրամայեց թէ՝ բռնեք զայդ-

ան

անհաւատ։ Փախեայ ես, և ամիրաթն անկաւ ՚ի վր̅ իմ. ասացի ամիրաթին՝ երդմնեցուց̅նեմ զքեզ յա̅ծ կենդանին. որ երբ տանէիս զիս առաջի Սողոմոնի արքային, սպանանել չտաս։ Ու տարաւ զիս առաջի արքային։ Ու Սողոմոն ետ բերել զայս քարէ սիւնս, և զընդանեց զիս աստ երկաթով, ու արճըճով, ու պղնձով։ Ու հրամայեաց ամիրաթին՝ որ շալկեց զիս այս քարովս, ու եբեր յայս լեռս՝ որ կու տեսանէք։

Լաց ալևորն. այն պատերազմն զի՞նչ եղև։ Լաց քաջն. յորժամ ամիրաթն զիս փախոյց ու բռնեց, իմ թագաւորն փախեաւ. և Սողոմոն յետևանց ընկաւ, ու զիմ թագաւորն սպան և ղզօրքն կոտորեաց։

Աւերին զկղզին, ու զկուռքն ջարդեցին. և զթագաւորի դուստրն էառ Սողոմոն իւրն ՚ի կնութ̅ի. և զերկիրն ամիրաթին ՚ի ձեռն ետ. և ինքն դարձաւ ուրախութ̅բ ՚ի տուն իւր։

Ասաց ամիրմումէն · օրհնեալ է ած որ յամ տեղիս փառաւորանի անուն նր: Եհարց զքաջն Թէ՝ զայն տեղն գիտես, որ Սողոմոն զդևքն 'ի պղնձէ կուժն եդեալ՝ ու 'ի ծովն ընկեց:

Ասաց քաջն Թէ՝ մօտ է 'ի կուակուաւեայ լեռն 'ի ծովն · և բնակեալ են յայն լերինն մարմնաւոր սև մարդիք: Ապա ետ քաջն զնշան լերինն և զպղնձէ քաղաքին:

Գնացին շատ աւուր · և իջան 'ի դաշտ մի, որ կայր ծառ և տունկ · ևպտուղն անուշահամ: Գտեալ ևաղբերակունք և ջուր քաղցր: Ապա այլ անտի գնացին խ օր, և ապա հասին 'ի պղնձէ քաղաքն · և էր որպէս զհուր 'ի վառ:

Ասաց ալեւորն · ահա այն է պղնձէ քաղաքն: Ապա իջան 'ի դուռն քաղաքին, և ոչ դտին զմուտն · և հեծցուցին երեք մարդ 'ի յուղտն, և շրջեցան ընդ պարսպաւն է օր և է գիշեր · և ոչ գտան այլ տեղի, որ ցած էր

քան

քան զայն տեղն՝ որ իջեալ էին։ Եւ պարիսպն ամէն խնդամանդ սև քար էր. և այնպէս թուէր որպէս միաքերթ։ Վաթսուն կանգուն բարձրութիւն էր. և խ̅ թիզ լանքն էր պարսպին. և ունէր ի̅է̅ դուռ. 'ի ա̅ դռնէն 'ի մէկ այլ դուռն ոչ երևէր մարդն։ Յայն ժամ էառ ամիրամուսէն ընդ իւր զտապլխայն ու զայլևորն, և գնացին 'ի բարձր լեռ մի, որ մօ՛տ էր քաղաքին։ Հայեցան 'ի վերայ քաղաքին ու ասացին թէ՝ ոչ եմք տեսեալ այսպիսի շինուածք 'ի վերայ երկրի. և բուն ձգէր 'ի վերայ պարսպացն։ Յետ դարձին և գտին տապանք մարմարինեայ գոյն զգոյն. և գրած էր 'ի վերայ սև փորուած ու ոսկով լցած։

Այս գրած էր ողբս այս։

Ո՛ մարդ ադամանց որդիք. դուք բերէք ըզխելքերտ վերայ. մտօք իմացէք ըզսուտ կեանքս, ու ըզմահուգալն 'ի վերայ։ Զի քակէ զամէն շինուածք, որ շինու տէրն ոչ իմանայ.

մեզ կոյս պատասխանի տալու, ամենի որ մէկ մի չմնայ:

Ա՜ ՚Ի ՔԷՆ ԱՅԼ ԳԵՐԵԶՄԱՆՆ ԳՐԱԾ ԷՐ
ՈՂԲՍ ԱՅՍ:

Ա՛ դուք ադամայ որդիք, չլինի որ զանձ մոռանայք. անձ խուր բարեցն տուաս, համբերէ՝ դուք զայն չիմացայք: Այլ դարձի՛ք ՚ի պիղծ գործոյն, որ անանց հուրն չիմանայք. մեք ՚ի մեր անհուն բարեցն, քան զպատանքն այլ իրք չտարոք:

Ա՜ ՚Ի ՔԷՆ ԱՅԼ ԳԵՐԵԶՄԱՆՆ ԳՐԱԾ ԷՐ
ՈՂԲՍ ԱՅՍ:

Ա՛ ադամայ դուք որդիք, Թափեցէ՛ք զգինին ՚ի ձեռնէ. զմարմինդ կու պարարես, դու հոգւոյդ բաժին պատրաստէ՛: Որ երբ ճանապարհ ելանես, նա դողումն ըզքեզ չիպատէ՛. հագըր և պատրաստ կացէ՛ք, որ երկան դեն զձեզ չարգիլէ:

Ա՜ ՚Ի ՔԷՆ ԱՅԼ ԳԵՐԵԶՄԱՆՆ ԳՐԱԾ ԷՐ
ՈՂԲՍ ԱՅՍ:

Պ. խոսեցէ՛ք քըչիկ քըչիկ, որ գնաց

մեր օրն 'ի մաղպուն · քանի 'ի մեզ զարմանք Թու̂ի, գընալոց եմք ներքև հողոյն ։ Արթուն և պատրաստ կացէք, դատողին տուէք պատասխան։ վայ այն ադամոյ որդւոյն, որ չունի խակի առ մահու̂ան ։

Այս 'ի դէ այլ գերեզմանն գրած էր
աղէս այս։

Ա՛յ իմ բարերար ա՟ծ, աղաչեմ որ զիս խըրատես · ծառայիս քո միտ դընես, զիս իմ մեղացն այլ ազատես Ու տաս ինձ բարի խըրատ, ու զիմ շատ մեղքըրն ոչ յիշես · դու ես ողորմած ա՟ծ, ընդ մեղաց ըզ մարդ ոչ դատես։

Այս 'ի դէ այլ գերեզմանն գրած էր
աղէս այս։

Ա՛յ ադամոյ դուք որդիք, զայն տարայք զինչ աստ որ ունիք · յոյժ ցեղ ու ցեղ շատ դատիք, աստ Թողուք անդէն ոչ տանիք։ Գիտեմ սողոմօն ասաց, զորըն կերայ զորն խաբեցի · զոր տու̂ի ձեռօքս աղքատայ, անդէնն ես ամէն զայն գըտի։ Այս բաները՝ որ գրած էր 'ի վ՟ր տապաններուն՝ զամէնն գրեցին, և եկին 'ի հեծելն։ Ու կապեցին սանդուխտ և ելին 'ի պարիսպն։ Ասաց մէկ մարդ մի թէ՝ ես ելնեմ 'ի պարիսպն։ Երբ ելաւ 'ի պարիսպն՝ ծիծաղեցաւ․ ծափ էզարկ և ասաց, շապա՛շ շապա՛շ, թէ ինչ աղուոր է ջաղաքս․ և անկաւ 'ի ջաղաքն ու մեռաւ։ Մէկ մարդ մի այլ երեկ՝ ու ասաց՝ ես ելնեմ 'ի պարիսպն․ զի այն մարդն թեթևախելք էր, չը կարաց զխելքն 'ի վ՟ր պահել։ Ասաց անմտութէն․ խելաց բան չէ՛ որ զիւր ընկերն մեռած տեսանէ և ինքն չը վախենայ։ Ապա է՟ մարդ այլ ելան 'ի պարիսպն, և ա՟մէքն ծիծաղեցան․ ծափ զարկին ու անկան 'ի ջաղաքն և մեռան։ Ուշաթափեցաւ անմտութէն՝ և ելաց դառնապէս։

Երբ ասաց ողղէն այս 'ի պարսպէն վերայ։

Պարիսպ ես դու աննըման, ընկե-

ցեր ՚ի վայր զ̃ամ · մարդիկդ որ ՚ի քեզ եղան , քան զծաղիկ ՚ի վայր Թափեցան։ Ո՛չ եմ ես տէր ամենի, լինի Թէ չարին Թռ̂չեցան · հեծելքս հա̂ւասար կու դողան , յոյս բանէս
քաղաքդ աննըման։

Պարծա̂ւ ու ասաց տալիպն · կամիմ ես գնալ վ̃ն հեծելիդ։

Ասաց ամիրմուսէն · գնա՛ վ̃ն հեծելիդ, և վ̃ն խալիֆային սիրոյն · ապա իմ բանիս մի՛ գնար։ Յայնժամ տալիպն զիւր մալին կէսն ո̃յ խոստացա̂ւ · ու երբ ՚ի պարիսպն եկա̂ւ՝ զա̃ծ յիշեց · ծիծաղեցա̂ւ ու ծափ էզարկ · անկա̂ւ ՚ի քաղաքն և ուշաթափեցա̃ւ։ Յայնժամ ամիրմուսէն ելաց յոյժ, զի գիտաց Թէ մեռա̂ւ ։ Տալիպն յուշ եկա̂ւ , ձայն ետուր Թէ՝ մի՛ լար, ես կենդանի եմ։ Տեսա̂ւ տալիպն՝ որ ՚ի մէջ դռան մի ձիա̂ւոր մի կայր կանգնած · ու գրած էր ՚ի վ̃ր ձեռին Թէ՝ կա՛լ զպորտիս բեռան՝ Ժը̃ անգամ ՚ի շուռ ած , և ա-

ապա

պս բանաս զդուռդ։ Մարդաց տալըպն՝ և արար զոր գրած էր, ու եբաց զդուռն քաղաքին։

Յայնժամ էառ ամիրմուսէն զկէս հեծելին, և՚ի քաղաքն մտաւ. և շուրջ եկլին զքաղաքն։ Տեսան, զի մեռած էին ամեքն, ու փակած շուկայքն ամէն։ Սալ կապած էր, և ջուրն շուրջ կայր ՚ի վրէ։ Իսկ ամէն փողոցի գլուխ բրջոյ մի շինած էր. և ոսկի արծիւ մի դրած ՚ի վրէ. և ջուրն ընդ բերանն ելանէր։ Ծաղկունքն անուշահոտ և գեղեցիկ։ Մարդիկքն ՚ի ղուպպէն նստած էին։ Ոսկին և արծաթն ակունքն ու մարգարիտն կուտած էր. և տէրքն ՚ի մօտն մեռած էին և փտած. երբ մարդ ձեռն հասցընէր՝ նա ՚ի հող դառնայլին։ Յայնժամ մտան ղալամքեարոցն, ու ոսկերչնոցն, ՚ի մասգործնոցն, և՚ի խաղենոյքն։ Ամ ոսկուով ու մարգարտով զարդարած էր։ Ո՛վ որ տեսնոյր՝ նա լայր ու սրտէն զջուրն հանէր՝ որ 'ի միջէն 'ի դուրս ելանէր:

Յայնժամ ելան անտի ու գնացին 'ի Թագաւորի դարպասն. գ՟ դուռ ունէր քան զբերթի. մ՟ պղնձի, մ՟ արծաթի, մ՟ ոսկի: Տեսան զարմանալի շինուածք՝ որ այլ չէր տեսեր աչք մարդկան. ու զն՟ր նմանութ՟ին ոչ կարացին գրել: Եւ 'ի դուռն դարպասին կայր ձիաւոր մի, և 'ի մօտն բրգայ մի. և 'ի ե՟ դիհաց ջուր ելնէր 'ի նմանէ, յառջևն ծաղկնոց էր, ու մրգաբերաց ծառ և տունկ բազում: Եւ թէ մարդ 'ի մէջն մտանէր՝ նա անուշահոտուէ՟ն գինովնար. և վարդն բումբի չափ էր կանգնէր. և մարդիքն 'ի շուքն մեռածէին: Յայնժամ մտան 'ի յայն ղուլպէն, որ քաղաքն ամէն յառջևն էր:

Եւ ասաց ամբոխուէ՟ն ողբոց ձայն 'ի միջոյ
քաղաքին:

Աւաղ քեզ աղուոր քաղաք, որ չը կայ 'ի քեզ կենդանի. ամէնքն են

՚ի հող դարձեր , մարդ չըկայ բարիքն է ՚ի լի ։ Ա՛յ վա՛յ , թէ չէաք տեսեր , սոցա խեղճն ՚ի յայսըմ վայրի · վախեմ թէ այսպէս լինիմք , քան զսոքա ողորմ ու լալի ։

Ապա մտան ՚ի տէրկեահն ու տեսան ազգի ազգի սլէհ կապած · բռումբ և չարխի աղեղ լարած , ու թըրեր · և բլատկի ասպարք , ու քեչէկ ։

Երբ ՚ի դարպասն մտան , տեսան որ մարդքն նստած ու մեռած · բայց փըտած չէին , այլ կաշին սևացեալ էր ՚ի վերայ ։

Տեսաւ ամիրմուսէն ու զարմացաւ , և ասաց ողբս այս ։

Եկայք նոր զարմանք տեսէք , որ եղաք մեք անմըխիթար · լա՜ւ էր թէ չէաք տեսեր , այս տեսիլս ՚ի լաց մեզ արար ։ Աս փառք արարչին ասեմ , որ ինքն է ա̅ծ բարերար · մի թէ յարուե̅ ա՜ւուրն , ոչ ձըգէ ՚ի հուր ու՜ ՚ի խա՜ւար ։

Գնացին ՚ի մէկայլ դուռն՝ ու տեսան զքամարն բարձր ու զարմանալի․ խոյառուածքն ամէն կարմիր ու կունք էր, որ զնմանութիւն գրել ոչ կարային։

՚Ի վերայ շեմին գրած էր ոսկով այս։

Այս դրունս գեղեցիկ աղուոր, գովելի մեծ արքայական․ չկարէ շինել այլ քան զայս, կամ ՚ի յայս շինուածքս ՚ի նման։ Այ վա՛յ դուք սոցա տուէք, որ չեղաւ նա մեզ բնակարան․ գնացէք և աստ թողուք զանցաւոր շինուածքս ա̅մ։

՚Ներս մտան ու տեսին՝ զի երեք սեւն կայր ՚ի մէջ դարպասին․ ա̅ լուրջ․ ա̅ կարմիր․ ա̅ կանաչ․ ու գըմբէթ մի ՚ի վ̅ր սեանցն ՚ի յոսկուոյ ծեփած։ Եւ ՚ի յայն ղուպպէն ո՛չ քարեղէն շէնք տեսան, և ո՛չ փայտեղէն․ այլ ամէնն ոսկի և արծաթ էր։ Եւ սեւն մի այլ կայր ՚ի մէջ դարպասին, որ է̅ կանգուն բարձր էր․ և ոսկի գմբէթ մի ՚ի վ̅ր․ և ոսկի ուարուծ մի զուգած էրքն զվենգամանի․

ու լուսատու ակունք դրած յառիւծն․ որ երբ գիշեր լինէր՝ նա ակունքն լոյս տային քան զարեգակն։ Այլ ոսկի տախտակ մի դրած էր ՚ի վ͞ր աթոռոյ մի․ և գոհար ակունք ՚ի նմա մարգարտով օրինած։ Այլ գեղեցիկ թագուհի մի ՚ի վ͞ր աթոռին նստած․ և խալիչայ մի փուռ մարգարտով լցած ՚ի ներքև թագուհւոյն։ Այլ կայր ՚ի գլուխն թագ մի գեղեցիկ և աննման յօրինած․ որ զնշանն գրելոյ չկարացաք։ Այլ ՚ի վիզն շարոց մարգարիտ քան զաղանւոյ ձու․ և ՚ի մէջ շարոցին լուսատու ակ մի։ Այլ կայր գլխադիր մի նման սիրամարգի պէս գոյն ըզգոյն։ Այլ այն թագն որ ՚ի գլուխն էր՝ է͞ ակ կայր ՚ի նմա․ ա͞ կարմիր․ ա͞ լուրջ․ ա͞ կանաչ զմրուխտ․ ա͞ լուսատու ակ աննման․ որ մարդ չըկարէր հայիլ․ և այնպէս երևէր թէ՝ թագուհին այն օրն էր մեռած։ Տեսաւ ամիրմումէն՝ ու խիստ ելաց, և ասաց թէ տ̄ր փառք ա̄յ, որ ես կուամաչեմ 'ի ն̄ր յերեսն հայրը:

Եւ ասաց զողբս այս 'ի վ̄ր թագաւորացն:

Անգին անընման գոհար, վա́յ դու յէր ես անպիտացեր · դու քան կենդանի մարդոյն, մարմինդ էր հանց հող է դարձեր: Քան զքո աղուո̂ր աչերդ, հողեղէն մարդոյ չեմ տեսեր · վայ տամ ես տ̄ր բերան, քո քաղաքին որ չէ' վայլեր: Եւ զայս տեսեալ ամիրմուսէն՝ երազոյ նման ասաց զկեանք մարդոյն:

Եւ ասաց զայս ողբս 'ի թագաւորացն բերնէն:

Եղբարք սիրելիք որ կայք, մի' խաբիք 'ի յայսմ աշ̄խս · այս կենացս մի' հա̂ւատայք, ամենքդ օրինակ առէք զիս: Օ՛ինչ որ ադամայ որդիք, ծնանին ամէն գան առիս · դու ջանա́ բարի գործել, որ չլինի 'ի հուրն տանջիս:

'Ի յամիրմուսէն բերնէն:

Ինչ մարդ որ այլ զայս տեսանու,

ու այս կենացըս նա հաւանի · կամ աստէն իւր տուն շինէ, և անհոգ՝ ՚ի ներս բնակի։ Չաւատամ թէ բնաւ այն մարդ է, կամ ունի միտք բանականի · անբան ու անասուն է նա, խոտակեր և չորքոտանի։

՚Ի Թագաւորոյն բերնէն։

Գե՛րի ադամայ որդի, յե՞ր դատիս զամէն հետ մեղաց · յիշեա՛ զահեղ դատաստանն, ու ծեծէ ըզսիրտ տխկդ ու լաց։ Ո խստես և քեզ ճար արա, ու խափան կացիր ՚ի մեղաց · թէ չէ աներեկ աւուրն, դուն այրիս ՚ի հուրն ՚ի յանանց։

՚Ի Յամերմուակէ բերնէն։

Ո՛վ իմ պատուական դըշխոյ, որ դու ես ողորմ ու լալի · այսչափ քո անհուն բարիքդ, չօգնեցին քեզ փոքր ՚ի շատէ։ Մեռար դու ու ՚ի հող դարձար, ու թողեր զամէնն ՚ի յերկրի · մարդն որ իմաստուն լինի, նա քեզնով ինքըն խրատի։

Իբրև լուեցին ասելու՝ ասաց տա-

լիան

լեալն ընդ ամբոխուսէն թէ՝ երբ այսպիսի մեծ մարդոյ զաւակ մեռանի, նա աչքն ընդդիկ դնեա՝ որ յաչքն եւայ, ու զմարմինն զըմուեն՝ որ փափուկ մնայ և չըփտի։ Այն կայր առաջի թագուհույն բ̄ մարդ կանգնած. ա̄ սև, ա̄ ճերմակ. ճերմակ մարդոյն ձեռն թափած թուր. և սև մարդոյն բլաղի մի՝ որ է թօփուզ։ Այն կայր ՚ի գիրկն թագուհույն տախտակ մի ոսկի լաճիվարդով գրած։ Կարդաց ալևորն՝ և էր գրած այսպէս։

Անունն ա̄յ օրհնեալ, որ է ինքն միշտ կենդանի. իշխան է երկնի և երկրի, արարիչ ա̄ծ ամենի։ Հողածին անմահ չըլինի, բայց միայն ըստեղծօղն ամենի. անպէտք է փառքն աշ̄ի, քան զերազ և մութ գիշերի։ Աս մեծ թագուհի էի, դուստր հըզօր թագաւորի. ունէի իշխանութի̄, որ մարդ չունէր վ̄ր երկրի։ Բայց մահն երբ առիս երեկ, զի̄մ իրքս ես արեցի. զայս տեսեալ խրատեցա րուք, յորում չարեաց փախերուք:

Նա՛ գրած էր խրատս թէ՝ ով զիս տեսնու, թող իւրն ողորմի ու խըրատուի. Ժէ տարու էի ես, որ երբ մեռայ: Մահն ոչ ՚ի թագաւորէն վախէ, և ոչ աղքատին ողորմի: Ո՞ւր է Ադամ, որ ամ՟ իւր ձեռօքն ստեղծեց. կամ ո՞ւր է Սողոմոն արքայն. կամ Աղէքսանդր թագաւորն, նա որ տիրեց երեք կողմ աշխ՟իս. բայց զայս քաղաքս ոչ կարաց տանել: Ինձ այն մնաց՝ որ իմ ձեռօքն տըւի աղքատաց: Դուք որ կենդանիք էք՝ մի՛ թողուք զձեր ապրանքն այլոց, որպէս և մեք թողաք. այլ ձեր ձեռօքն յայս կեանքս տըւէք, ու զայն կեանքն գտնէք:

Նա՛ գրած էր ողբս այս:

Մարդն որ իմաստուն լինի, նա իւր գործոյն իսկ ճանաչէ. որ զամէն բարի գործէ, ՚ի չարէն ՚ի զատ նա փախչի: Ո՛ ՚ի այս մեծութիս է սուտ, և փառքըն շուտով կու

Թախի · ոչ̅ Թագաւորք եղեն, որ յառաջ զանուանն ասացի։

Ես զմրուխտ Թագաւորին դուստրն եմ · մեր դարպասին պրձերն ամէն ոսկի ւարծաթ էր։ Եւ ՚ի մեր սարերս բազում ոսկեհանք կային · ակն և մարգարիտն ՚ի մեր ծովէս կու ելանէր։ Յառաջ մեռաւ իմ մայրն, և ես է̅ տարեկան մնացի · ժ̅ տարուն ՚ի վեր՝ կալայ զաթոռ Թագաւորութե̅ ու է̅ տարի վարեցի, յայնժամ հասաւ ինձ մահ։ Եւ յորժամ կարդայց ալևորն՝ նա ամիրբմուսէն ելայց։

Եւ ասաց ողբս այս։

Ժամանաւորիս այս բարիքն, չէ՛ իսկի մարդոյ մնացական · բայց մարդն իմաստուն լինի, որ ձըրի բաշխէ զի̅մ։ Մարդիք քան զգարնան ծաղիկ, փըլթըլթին ույլվի չորանան · երանի՛ ո̅ բերան, արդարոցն աւուր յարութե̅։ Ո՞ւր են Թգ̅ւորք երկրի, որ յառաջ զ~ շինեցին · քանի քաղաք և բերթեր, թողին շինուածովք ու գնացին։

Երբ մահն 'ի վ՟ր եկաւ, յամենեն դատարկ գնացին · ու իւրեանց անհուն գանձեն, հետ իւրեանց մէկ փող մի չունէին ։

Եւ գրած էր թէ՝ ը̅ տարի անձրև չեկաւ 'ի մեր աշխ՟ս · և հատաւ ամ՟ ինչ ու կանաչ և կերակուր ։ Յայնժամ շատ գանձ, և պատուական ակունք և ազգի ազգի ղումաշ ուղարկեցաք յամ՟ երկիր · ու նովաւ շուրջ եկին, և ոչ գտան կերակուր, և դարձան դատարկ 'ի տուն ։ Տանէին զոսկին ըստ հայլի տայլին և ոչ գտանէին · ոչ գնով և ոչ անգին ։ Երբ ամէն կերակուրն հատաւ՝ որ մարդ որ ուժով էր՝ կերաւ զանուժն ։ Պարօնն պծատուայն ուտէր · և աղքատքն զմիմեանս ։ Երբ ամէն ճարն կտրեցաւ, գիտացաք որ յ՟այ էր բարկութ՟ին 'ի վ՟ր մեր · յանձն առաք զմեր հոգին ա՟յ ։

Եւ գրած էր շխրատաս այս ։

Սրատ մի լըսէ քիանէ , ա՛յ քիմար խե-

խելօք դու տըխմար․ գիտեմ մեռանիլ պիտի, որ չըկայ ւ̃իս քեզ ճար։ Ո՛ քո սիրտդ ողորմած պահէ, թէ պիտի քո ազգն 'ի յօտար․ 'ի պահս ւ̂'ի յաղօթք կացիր, զի տապանն է
մութն ու խաւ̂ար։

Աւ̂ գրած էր թէ քաղաքս երկնաչափ աստղօք էր շինած ։ ՙՔան զայս ալ ամուր քաղաք չըկայր 'ի վ̃ր երկրի ։ Ո՛վ որ Ա̃յ հրամանաւ̂ն յայս քաղաքս որ մտնու՝ ոսկի ւ̂արծաթ առնէ որչափ և պիտի․ ապա զայս որ իմ վ̃ր կայ՝ մի՛ առնուք ձեր Ա̃յ սիրոյն համար ։ Այսչափ ինչս որ յիմ վ̃ր է՝ ինձ թողէք․ իմ ամէն թագաւ̂որուէ̃ս զայս եմ առեր ինձ բաժին։ Արդ մնեցուցանեմ զձեզ 'ի յԱ̃ծ կենդանին․ որ չառնէք իմ մարմնոյս քաշանք․ և կամ զիս յերար տաք ու խոռուէք։ Ո՛վ իմ աղաչանացս լսէ՝ Ա̃ծ իւրն ողորմի․ ապա թէ չէ՝ չըհամբերէ Ա̃ծ անխնայձ ւ̂անօրէն գործոցն։ Լսեց ամիրմուսէն ու շատ ելաց։

Սա՛ տուաց զբանս զայս Թագուհւոյն բերնէն:

Ըզքարոզըն զոր դու գրեցեր, իմաստուն ճարտար Թագուհի. քոյս ժամս ինձ շատ խեղճ Թուեց, քո գանկատն որ ես լըսեցի: Բայց քոյս անչափ գանձերուս, մեզ դատարկ գընալ չըպիտի. քիչ մի մեզ վայելըս առնումք, ու Թողումք զայլն ուամ որ դիպի:

Նոյնժամ հրամայեց հեծելըն. բերէ՛ք զինչ որ ամէն ունիք, և լըցէ՛ք որչափ և պիտի ակ ու մարգարիտ և ոսկի: Ասաց տալըպն. ես զոյս ինչքս՝ որ ՚ի վ̅ր̅ Թագուհւոյս է, կառնում, ու խալիֆային արմաղան կու տանիմ: Ասաց ամիրմուսէն. ա̃մ իրօք որ ո՛չ եմք կուշտ, նաև ո՛չ այնով կշտանամք. Թագուհին ծանր երդու՛մ է դրեր՝ խեղճ է: Ասաց տալըպն. ա̃ծ զմալըն զոսկին ու զարծաթն ու զպարգևքն և զապրանքըն՝ կենդանեացն է տուեր և ոչ մեռելոց ։ Այտոր պատասխանքն բաւական է · հող է և ՚ի հող դառնայ ։ Առնում զայն ակունքն ու տանիմ խալիֆային արմաղանս ։

Առ՛ ասաց ամիրմուաէն ղայց խրատս ։

Ինչ մարդ որ ագահ լինի, նա փութով իւրքըն կու կորի · ո͞ւ ամանաթ ասեմ, մի՛ առնէր ո՛յ իմ սիրելի ։

Անպարտ եմ ՚ի յայդ բանէդ, մի՛ առնէր դու բան խոտելի · չլինի աղօթք թագուհւոյն, որ ՚ի վերայ քո կատարի ։

Ասաց ամիրմուաէն՝ իմ բանիւս մի՛ առնուր զայն ՚ի նմանէ · ես անպարտ եմ ՚ի յերդմանէն, որ թագուհին էր գրեր ։ Չլսեց տալիյն զխրատն · այլ գնաց յառաջ՝ և կամեցաւ առնուլ զթագն ՚ի գլխոյ թագուհւոյն ։ Իսկ այն սև մարդն որ զըլատիկն ունէր՝ էզարկ ՚ի վ͞ր թիկանցն ու ընկեց զտալիյն · և ձերմակ մարդն որ զթուրն ունէր՝ էզարկ զգլուխն ու կտրեց ։

Իսկ ամիրմուսէն զարմացեալ փախեա̂ւ ՚ի զատ․ և ափսոսաց զտաղեղն որ կորուա̂ էր յեմարութ̄ն, ու չլսեց խրատու իւրն։ Եւ̂ մա̄ այն ասաց ամիրմուսէն զողբս զայս ՚ի վերայ տաղեղին։

Զխըրատն որ տու̂ի ես քեզ, չը
լսեցիր ա՛յ իմ սիրելի․ ո՛վ որ չողոր
միր դորս, նա նըմանէ սատանայի։
Ո՛վ շատ գանձ ժողվել կամի, նա
յիւրմէն շուտով կու զըրկի․ ինքըն
կարօտած մընայ, ՚ի գանձէն զոր
ինչ ունիցի։

Յայնժամ եղա̂ւ ամիրմուսէն ՚ի ղուպպէէն ՚ի դուրս։ Եւ̂ բարձին ա̄մքն որչափ և կարացին․ այլ և մարգարիտ․ լալ քարեր ու փարուզա․ այլ և գտան տընսերով ձոյլ ոսկի։ Եւ̂ երբ բարձան ա̄մքն՝ զմէկ խազինայի մալն ու զոսկին չկարացին ամէնն բառնալ։ Ասացին թէ՝ զինչ որ ՚ի պատրաստ մարդ կայ ու գըրաստ՝ զայս մալս ու զոսկիս չկարենան վերցընել ՚ի քաղաքէս։

Եւ փակեցին զդուռն, ու գնացին ընդ ծովեզերօքն խ̄ օր: Եւ տեսան բարձր բլուր մի. ու ՚ի վ̄ր բլրին սև մարդիկք այլադէմք: Եւ ՚ի տակ բլրին քար կայր՝ իջման ամիրմուակէն անդ. և փախեան սև մարդիկքն. շատ մարդ ՚ի քար ոլկերն մեռան, և այլք ՚ի լերինն թաքեան: Երբ պահ մի կացին՝ եկին սև մարդիկքն, ու հայէին ՚ի վ̄ր հեծելոցն: Գնաց ալևորն՝ ձայնեաց և հաւակացոյց: Եւ սևերն գնացին բերին զթագաւորն իւրեանց ՚ի մօտ ամիրմուակէլին: Եւ իւրեանց հալաւն սև էր ու մազեղէն: Նորա տան կերան ու խմեցին և ուրախացան: Ասաց ամիրմուակէն ցալևորն՝ հարցէք թագաւորին, թէ մարմնաւոր էք թէ անմարմին: Երբ հարցաւ՝ ասաց թագաւորն. մեք մարմնաւոր եմք յաբիրայի որդւոցն:

Ասաց ամիրմուակէն. զինչ հաւատք պաշտէք: Ասաց սև պարոնն թէ՝ երևեցաւ ՚ի յայս ծովուս մարդ լուսեղէն · որ ա͞մ անձն լոյս տայր, ու լուսաւորէր զերկինս և զերկիր: Սա՟ ՚ի մեզ ասաց · լսեցէք պարօն որ դիք՝ և ՚ի միտ առէք · հաւատացէ՛ք արարչին երկնի և երկրի ծովու և ցամաքի · սարսեցէ՛ք ՚ի նմանէ, զի նա զա͞մ տեսանէ · և նա միայն է ա͞ծ կենդանի · աղօթք մատուցէ՛ք նմա հանապազ · և տո՛ւք զողորմութի͞ աղքատաց: ՙՍա՛ խրատեց զմեզ և ուսոյց մի ա͞ծ պաշտել · և ինքն վերացաւ լուսեղէն ամպօք ՚ի յերկինս: Սա՟ մեք ամէն օր է անգամ աղօթք մատուցանեմք · և զա͞ծ փառաւորեմք, ու գոհանամք զնմանէ:

[illegible] բա՛նս:

Քեզ փառք արարիչ ա͞ծ, որ ամէն տեղ օրհնաբանիս բանիւ դու բարձել ունիս, զա͞մ երկիր և զերկինս: Այլ և յաղագս որդւոց, ՚ի չարեաց զատիլըն կամիս · զի աներևելի աւուրն, որ լսեն նոքա զեկոյքն առ իս:

Յայնժամ էհարց ՚ի սև Թագաւորն թէ՝ յայն կժերուն որ սողոմօն բարկացաւ դիւացն, ու ՚ի պղնձէ կուժն էած, և ՚ի ծովն ձգեց՝ ասա գտանի՞ թէ ոչ: Ասաց թէ՝ որչափ պիտի Թամաշայի համար՝ բերեն որ սորդքն, բանամք ու տեսանեմք:

Ասաց ամիրմուսէն՝ մեք յայն կժերուն համար եմք եկեր այսքան ճանապարհս: Յայնժամ հրամայեց սև Թագաւորն որսորդացն, որ բերին ժ̅բ̅ կուժ առաջի ամիրմուսէին:

Յայնժամ շատ ուրախացաւ ամիրմուսէն, ւոսկի սընտուկն եդիր ըզկժերն: Եւ խիստ պատիւ արաւ սև Թագաւորին· խիլաթեաց և ետուր նմա շատ ոսկի· ակունք ու պէտաւի ձիանք: Շնորհակալեցաւ սև Թագաւորն ու չէառ· ասաց թէ այդ մեզ չպիտի· ոչ ծախեմք և ոչ հեծնումք· մերն այն է որ որս առնումք զմիսն ուտեմք, ու զմորթին հագնիմք և զա̅ծ փառաւորեմք:

Յայնժամ 'ի յորս ելաւ՝ սև Թագաւորն իւր հեծելովքն · կէս հեծելին 'ի ծովերն , և կէսն 'ի ցամաքն, ւորսացին ու դիւղեցին։ Եւ այլ բազում հրեղէն ձի հանելին 'ի ծովէն , ու մարդադէմ գազանք ւանասունք՝ որ ո՛չ լինի յայլ երկիր , եբեր ւուամիրմուսէն եւսուր։ Ալ 'ի յամէն ուրբաթի գիշերն գայր 'ի ծովէն 'ի դուրս ահեղագոչ ձայն մի բարձր՝ որ ասէր · փա՛ռք Ա̄յ այնմ որ ստեղծեաց զերկինս և զերկիր · և փա՛ռք իւր մեծութեանն՝ որ զա̄մ կենդանի մահկանացո՛ւ է ստեղծեր , և ինքն միայն է անմահ։ Լսեց ամիրմուսէն ու էհարց զսև Թագաւորն · ո՛վ է այն՝ որ ամէն ուրբաթ գիշեր կու փառաբանէ զԱ̄ծ ։ Ասաց Թագաւորն · մեք ո՛չ ինչ տեսանեմք բայց զձայնն կու լսեմք։

Եւ ասաց ամիրմուսէն զօրհնութի̄ւն զայս։

Ա̄ծ արարիչ բարի , քո անուանդ միշտ փառաբանի · տէր ես դու երկնի նի և երկրի, անսկիզբն անհամեմատալի: Վերին զօրքն ըզքեզ օրհնեն, անդադար և անլռելի · այլ և երկրածինքս ամէն, խոնարհեալ քեզ երկրպագեն:

Յայնժամ սև թագաւորն է լաւ մարդ եդեր 'ի հետ ամիրմուսէին: Եւ ամիրմուսէն շնորհակալ եղև, և ողջունեցին զիրարս: Եւ տարան զամիրմուսէն կարճ ճանապարհով յերկիրն ակամացուց: Յայնժամ ամիրմուսէն շատ ոսկի արծաթ, և ակունք պատուական յուղարկեց թագաւորին: Եւ թագաւորն չէառ · ասաց թէ՝ 'ի յայն կժերուն տուր, որ տեսանեմ: Ապա ամիրմուսէն է կուժ ուղարկեց թագաւորին: Եւ թագաւորն եբաց զբերան կժերուն · ելաւ սև մուխ ու բարձրացաւ յօդն · և եղև 'ի կերպարանս գիշատեսիլ մարդկան: Աղաղակեաց և ասէ · սո՛ղոմօն սո՛ղոմօն ո՛րդի դաւթի մարգարէի · այլ չգործեմ, զինչ գործեցի ·

այլ կամ 'ի հրամանս քո · զի գիտաց դեւն թէ դեռեւս սողոմոն կենդանի է։ Եւ յոյժ զարմացաւ թագաւորն։

Ապա տարաւ ամիրմուսէն զալեւորն առաջի թագաւորին և ասաց, ով տօլվաթաւոր թագաւոր · որ զայս իմաստուն ծերս 'ի հետ մեզ դրիր, սա տարաւ զմեզ և եբեր։ Եւ եօթն ուղտ բարձած ոսկի և արծաթ՝ ետուր ալեւորին ամիրմուսէն · և թագաւորն այլ խիլաթեաց զծերն։

Ու զամիրմուսէն այլ լաւ պատուեաց · և պէտաւի ձիանք ետուր և ուղարկեց 'ի մսըր։ Լսեց մսրոյ տ՟րն և ուղարկեց մարդ առ ամիրմուսէն · եբեր և յոյժ պատուեաց զնս՟։ Ապա ելան անտի և գնացին յերկիրն իւրեանց , և հասան 'ի պաղտատ։

Խալեփոյն 'ի դէմ եղաւ ուրախութք՟ , և մեծ ուրախութ՟ի արարին։

Եւ բաշխեց խալեփոյն աղքատաց շատ ողորմութ՟ի վ՟ս նց՟ գալուն · զի երեք տարի էր , որ գնացեալ էին։

Ապա խալիֆայն եհարց յամիրմուսէն: Եւ ամիրմուսէն սկսաւ խօսիլ կարգաւ թագաւորին: Սողոմոնի կուաւիլն` որ քաջն ասաց, այլ և զքաղաքին: Ու զթագուհւոյն գիրն կարդացին առաջի խալիֆային:

Ապա շատ ուրախացաւ խալիֆայն 'ի նց̄ գնալն և 'ի գալն. և ասաց` տալիպն ուր է: Ապա ամիրմուսէն պատմեց զմահ տալիպին: Իբրև լըսեց խալիֆայն` ասաց վա՛յ նմա, որ իւր յիմարութբ̄ն կորեաւ:

Եւ ասաց ողբերս զայս 'ի վր̄ նորա:

Ո՛ հայ իմ տըխմար վէզիր, յէր կորար ընդ վայր ու նամնիր. գեմ զիւրեանքըն դու տեսար, ու ըզգանկատն ատոյզ լսեցիր: Մի թէ դուն անմահ էիր, որ ըզնր̄ թագըն խլէիր. մուսէն քեզ խըրատ ետուր, ոչ լըսեցիր զքեզ կորուսիր:

Յայնժամ հրամայեաց խալիֆայն թէ` բերէք զկժերն, որ տեսնում: Բերին զկժերն ու բացին առաջի նր̄.

նէ՟ր · նա ելան 'ի կժերուն ո՟ղ զաւմուխ քան զառաջինն: Ու երբ տեսաւ զայն խալիֆայն՝ զարմացումն կալաւ զնա: Ու ասաց փառք ա՟յ, որ մեծ պատիւ էր այս սողոմօնի · որ իւր իմաստութեամբն 'ի յայս նեղութ՟իս ւ'ի բանտս էր դրեր ըղդեւքն · այսպիսի շնորհք հողեղինի չէ՛ր տուեր ա՟ծ՝ բայց միայն սողոմոնի: Ու ապա հրամայեց որ բերին զա՟մ ոսկին ու արծաթն · զղումաշն ու զակունքն և զմարգարիտն առաջի իւրն: Ու տեսեալ զնոսա զա՟մ, շատ ելաց:

Ու ասաց զողբս այս:

Ուաղ տնամ ո՟ւ բերան, քո տիրոջն որում դուն էիր · որ այսչափ անհուն գանձէս, մէկ պատանիք մի մէնն է տարեր: Ուրդամ աղաչեմ զա՟ծ, որ տայ ինձ աղէկ թապուտ · որ սատ տամ և անդ առնում, ու չթողում այսպէս 'ի յերկիր:

Ու ապա հրամայեց՝ որ զինչ մալ

ու ղումաշ բերած էին , զամէնն բաշխեց աղքատաց. և ասաց՝ Թող ա՟ծ զայս իւրեանց տիրոջ հոգւոյն համարի ։

Ապա բերել ետուր և ինքն զիւր մալն ու զարծաթն և զոսկին և զապրանքն ա՟մ , և բաշխեց աղքատաց։ Մինակ մէկ կտաւ մի էառ , և ասաց թէ՝ զթագուհւոյն խրատն լսեմ. աստ տամ, և անդէնն գտանեմ յա՟յ։ Զոր ’ի զնտանն էր՝ արձակեց. զծառայքն ազատեց. և զհարկն վեր ցոյց ’ի յաշխարհէն։ Եւ պարոն մի եղիր ’ի յիւր տեղն. և ինքն շինել ետուր սենեակ մի աղօթարանոց. և եմուտ ’ի ներս , և եօթն տարի աղօթեաց . և ապա փոխեցաւ ’ի յաշխարհէս ։

Եւ ամիրմուանէն ոյլ ետուր զպարօնութիւն իւր որդւոյն. և բաշխեց զիւր մալն ու զոսկին և զապրանքն ա՟մ աղքատաց։ Հագաւ մազեղէն և մաշկեղէն , և գնաց ’ի լեռն բնակեցան ապաշխարութ՟ մինչև 'ի մահ։ Այսպէս փոխեցան 'ի սուտ և 'ի փուտ յաշխարհէս, և հասին յաւիտենական կենացն և յերկնային ուրախութ՟ն 'ի Ք՟ս Յ՟ս 'ի Տ՟ր մեր։ Որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից Ամէն։

* Պատմութիւն ցուցակաւ փոխելոյ Թագաւորին։

ԷՐ ՄԻ ՄԵԾ ԹԱԳԱՒՈՐ որ նստէր յարևելեան կողմն. և էր իմաստուն և առաքինի։ Սիրէր զաղքատութիւն, և ատէր զայս կեանքս և ասէր. փառք այ կենդանաւոյն՝ որ կայ և մնայ յաւիտեան։ Եւ ասաց ընդ իւր անձինն ողջափառ ասաց։ Զարժէ՛ այս կենացս իրք մին, այն կենաց ինչ մեկին մին մազ. յոր ժամ բաժանի հոգին, կու մնայ

ղատ

շատ մարդոյ վրայ ։ Յեր կամիս սիրել զայն իրքն, որ կենայ հետ քեզ զէտ ՚ի վաղ · ժողվէ դու զանանց բարիքն, և արա զինքըն քեզի ճար։ Իյնպէս դու բարի գործէ, ու բաշխէ զինչ քըրդ աղքատաց · որ օրըն մահուան հոգւոյդ, ու մարմնոյդ հասնէ վաղ ՚ի վաղ։

Նա՛ ՚ի ժամ աղօթիցն հանէր զամէնն ՚ի դուրս · և ինքն մէն մնայր, և աղօթս առնէր ՚ի վր̅ ոսկի աթոռոյն։

Նա՛ դարձեալ ասէր ընդ անձն շնորհաւ զայս։

Մի՛ աղօթից ծոյլ կենար, դի՛ր ըղորդ հետ ք̅ոյ սէր · յիշէ՛ զիւր ահեղ անունն, որ փրկիս որպէս ադամն էր ։ Իւր ձեռքն է երկինք երկիր, ըստեղծօղ և տ̅ր ամենի · Ջանա՛ խնդրել դու զբարի, որ փրկիս հըրոյն գեհենի։

Ի մէկն օր իւր սովորական աղօթքն կատանէր · և օր մի հայեցաւ ՚ի դարպասն ՚ի վեր · և տեսաւ մէկ մի ՚ի ձև իւր ըղտապանեին. և ասաց՝ քեզ ով հրաման ետուր, որ ’ի հոտ ելար։ Ասէ այն մարդն. ես ըղտապան եմ, և զուղտերս կորուսեր եմ, աստ կամիմ գտանել։ Ասէ թագաւորն. ինչ կանէ ուղտն ’ի վր̅ դարպասին, որ ’ի հոտ կամիս գտանել։ Ասէ այն ըղտապանն. ապա դու որ̅պ կամիս զա̅ծ գտանել ’ի վր̅ ոսկի աթոռոյդ, և ’ի վր̅ փետրալից բարձիդ, և ’ի մարգարտաշար թախտիդ։ Այդ աղօթքդ չէ՛ ընդունելի ա̅յ. այլ արի՛, է՛ջ յաթոռոյդ, և ե՛կ ’ի վր̅ մոխրոյն, և այնպէս երկրպագէ՛ ա̅յ. և ապա գտանես ողորմութի̅։ Եւ ասաց ըղտապանն՝ որ ’ի ձև մարդոյ երևեցաւ,

կչափաս ղայծ։

Երկրպագեմ անմահ բանին, թաղլեցո՛ զերեսդ ’ի հողին. որ այն մոխրէն զքեզ ստեղծեց, Նման արար իւր պատկերին։ Զոյս կեանքը քանի դու սիրես, անձար կերթաս ներքև հողին. մի՛ անշահ կենօք

կե

կենար , մի՛ փոխեր զոսկին պղնձին:

Զայս ա՟սց և անյայտ եղև այն մ՟րդն որ ՚ի ձև ըղտապանի էր: Ապա և մնացաւ թագաւորն , որ հրեշտակ էր մարդն այն · և անկաւ զերդ ՚ի խոր մտքն, և երաց դառնապէս · և իջաւ յաթոռոյն ՚ի գետին, և երկիր եպագ ա՟յ: Եւ թէպ՟տ կատէր զիւր կեանքն, այլ աւելի ատեց այնու հետև զաշխարհս և զմեծութիւնս:

Եւ տաց ՚ի մի՟ անձին իւր շնոփառ շայս:

Ջանամ թէ զհոգիս սիրեմ , նա մարմինս ինձ կուտայ ՚ի խափ · զինչ որ խոյանոյ բազում , կաքաւնուն չընկնիմ այլ ՚ի յափ: Կուտեցաւ ախս շատ մեղք , յայն նման որ յերբ գայ շատուափ · խոցաւերեմ մաշու որրով , ու եղերեմ զինչ որ շաղակ: Եւ ապա կոչեց զիւր մեծամեծքն ու զիշխանքն · և եբեր զիւր որդին, ու նստոյց աւաջի նոցա ՚ի յաթոռն իւր , և նոքա ո՛չ կամեցան · և նա՝

ուժովն ու իմաստութեամբն հաւասարեցոյց զիշխանքն և զզօրքն։ Այն ինքն գաղտաբար եղեալ՝ եւ զանձն իւր յաղքատութի․ և եղեւ յաշխարհէն իւրմէ, և եթող զթագաւորութիւն վասն սիրոյն այ։

Այս տաղս ընդ իւր անցքն շահաֆաս շայի։

Յիշեմ զարարիչն ած, որ հոգւոյդ անմեղ պատարագ․ [illegible] մեղքն յէր կամիս գընալ, երբ սատէնս լինի քեզ ճարակ։ Ո զմարմինդ քանի՛ սիրես, ու հետ իւր երթաս դու կամակ․ ընկերք քո գնացին աստի, բնակեցան ՚ի տունն անքանակ։ Այս քեզ ամէն օր ասեմ, հասիր շուտ նչ դու միակ․ թէ չէ եղկելի հոգիդ, տաւքի ՚ի հուր ՚ի կըրակ։

Նա գնաց յ[illegible] յ[illegible]՝ և եհաս ՚ի պաղտատ․ և մտաւ ՚ի քաղաքն՝ ու կամեցաւ կենալ անդ ՚ի կերպարանս աղքատի մուրացող։ Այն մարմինն նեղէր զինքն ՚ի կողմանէ ուտելոյ ըմպելոյ և ագանելոյ․ զի սովոր էր

՚ի սէր Տ͞իա · և կեցեալ ՚ի տանն արքունի: Ապա իմացիւ՞ հնարք, և երթայր ՚ի շուկայն, և լինէր սուտ խև: Եւ մարդիկն ծեծէին զինքն · և տղայքն ՚ի հետ երթային և նեղէին:

Կոչէր և ասէր ՚ի դէմ մարդկան ընկափաղայս:

Մարդիկք մի՛ անհոգ կենայք, ձեր մեղաց զաղտն լուացէ՛ք · ողորմեցէ՛ք աղքատաց, նոյնով ձեր մեղքըն քաւեցէք: Դարձի՛ք ՚ի մեղաց ճանփէն, և անդէն ձեզ տուն շինեցէ՛ք · զմարմինսդ ՚ի կամաց հանէ՛ք, մի՛ թողուք ՚ի կեց նեղելոց: Եւ զեղէգն հեծնայր, ու վայր և ՚ի վեր վազէր, և ասէր բան զարմանալէ: Ասէին մարդիկն՝ որ ՚ի հետ երթային՝ թէ մարգարէն ՚ի բերնէն ՚ի վայր կու թափի, և ոչ գիտէ թէ զի՛նչ կասէ · Ո͞ աւաղ զխելօք խումարս: Եւ ապա դրին իւր անունն փահլուլ · և նա եղև Ջրկիր՝ ու ջուր կրէր ՚ի շուկայն · և տային իւրեան հաց և փող · այլ նա զամենն տայր աղքատաց։

Նշ՛ տասց ընչափառ ղայս։

Աղքատասիրութ̃ ու պահքն, ու աղօթքն ընկերք են հիտորաց · սիրէ՛ զայդ գ̄ բարիս, որ փրկիս 'ի մեծ տանջանաց։ Մի՛ զմարմինդ 'ի ձեռուքդ տանուր, կու գընայ օրերդ 'ի ձեռաց · այս օրերս որ մեք ունիմք, կու հատանի և կերթայ 'ի բաց։

Աւուր մի կերթայր 'ի շուկայն 'ի վայր · նա մէկ մի խլեց զիւր փակեղն 'ի գլխոյն՝ ու փախեաւ։ Նա գնաց փահլուլն 'ի հողվարքն · կու փընտռէր զայն մարդն՝ որ փակեղն էառ փախեաւ։ Նա տեսաւ մէկ մի և ասաց · է՛ փահլուլ՝ այս տեղս ի՞նչ կանէ այն մարդն · գնա 'ի շուկայն փընտռէ։ Ասաց փահլուլն · ա՛յ եղբայր, ուր երթայ՝ վաղն անպատճառ 'ի հոս պիտի գայ։

Նշ՛ տասց ընչափառ ղայս։

Աէ շատ թէ քրջիկ զըրկես, ու

կայլեւս զերկիրս խընդալով· քեզ ճարն է տալի գընալ, ու մարմինդ ծածկի հողով։ Պարծի՛ր ու բարիս գործէ, գի՛տ բըժիշկ ու դեղ քեզ շուտով· որ ահեղ ու մեծ ատեանն, չըլէնիս ահով ամօթով։

Ընտելացաւ ընդ քաղաքացւոցն, ու ճանաչէին զինքն ամէն մարդ· նա օր մի՝ միս երետ մէկ մարդ մի, թէ տա՛ր ի մեր տունն· նա էառ՝ և ի հողվարքն տարաւ եդիր։ Ապա դարձաւ եկաւ այն մարդն ի տուն իւր, ու տեսաւ՝ որ զմիսն չէր բերէր· և գնաց գտաւ զփահլուլն ի շուկայն՝ և ասաց· ո՞ւր է միսն· զի՞նչ արիր։ Ասէ փահլուլն· ի քո տունն տարի։ Ասէ մարդն այն· արի՛ ցոյց զիմ տունն։ Ապա փահլուլն էառ զայն մարդն՝ ու գնաց ի հողվարքն։ Ապա ասաց այն մարդն· այս է իմ տունն։ Ասէ փահլուլն· հա այս է քո տունն· այն տունն՝ որ հիմի կու կենաս՝ այն չէ՛ մնացական· զի յետոյ ի հոս պիտի գաս։

Այս առայ ընձփաս ըայս:

Աշխարհիս սահմանքն է հանց, կեահ կու լցուի կեահ թերանայ. կու թեթեւցընէ զիւր բեռն, թէ ով շալկել որ կարենայ: Ս՝ըռոիկ հիւանդին արէք, որ թապութ իրոցք չունէ նա. մէկըն գայ մէկըն գընայ, իւր բանըն պաթալ չըմնայ: Օարմացած այն մարդն ընդ փահլուլին խօսքն թէ՝ մեք զդա յիմար գիտէաք, նա մեզ վարդապետ եղեւ: Այս ունէր սովորութի փահլուլըն՝ որ կերթայր ՚ի հողվայրքն կու կենար. եւ շատն ՚ի հոն կու պառկէր: Օր մի ՚ի դուրս էր ելեր խալիֆայն շատ հեծելովք. ու դէպ ՚ի հողվայրքն կանցնէր. եւ տեսած զփահլուլըն, եասաց փահլուլին թէ՝ հոս ի՞նչ կանես: Այս ասէ փահլուլըն. է տիեզերական խալիֆայ. զոյս ամէն մեռեալքս կու նզովեմ:

Այս ասէ խալիֆայն.

յէր կու նզովես:

Ապ՟ ասաց Շահաբաս ըսացա։

Թէ շատ թէ քիչ զըրկէ մարդ, նա հետ իւր տանիլ չըկարէ· մարդըն պիտի հանց ջանայ, որ 'ի յայն կեանքըն չամաչէ։ Որ 'ի հատոյ հոն առնու, հոն զըրկէ նա հոն վըճարէ· այն կեանքըն ճարակ չըկայ, որ փողով իւր պարտքն խալըսէ։

Զարմացաւ խալիֆայն՝ և ասաց· փառք ա՟յ կենդանուոյն՝ որ կայ և մնայ յաւիտեան· թէ խումարն այն չափ խելօք խօսք կու խօսի։ Ապ՟ ասաց թէ այս մարդս խելօք է, և վ՟ս մեղաց զայն կառնէ· զի թէ դա խումար էր՝ նա հանց բան չասէր· և դարձաւ խալիֆայն 'ի քաղաքն։ Ապ՟ օր մի այլ հեծեալ էր խալիֆայն, և անցանէր դէպ 'ի հողվարքն, զի ճանապարհն ընդ այն էր· և տեսաւ զփահլուըն ու ասէ· զինչ կառնուս 'ի հողվարքն։ Ապ՟ ասէ փահլուըն· բազում աւուրք աստ կամ և կու չափեմ զիմ գերեզմանն ու զքոյն, նա խակի քոյն աւելի չէ քան զիմն. դու խաբեբայ ես, և ես աղքատ մուրացիկ եմ. և քո հոգին և իմն մէկ չափով է:

Ապա ասաց ղնչափաս ղայն:

Ա՛ մարդ մի՛ զհոգիդ դատեր, ու զմարմինդ աւներ սիրելի. դարձի՛ր 'ի մեղաց ճանփէն, որ չլինիս ողորմ ու լալի: Պ՟ անձն ու բարի գործէ, զի քեվըրանըն քեզ կու նայի. յայս հողոյս դու հանց գընա՛, որ հոգիդ հրոյն չըլինի:

Ապա ասաց խաբեբայն ընդ իւր մեծամեծքն. տեսէք, ի՞նչ իմաստուն է դորա խօսքն. և համարձակապէս խօսքն կուտայ. չէ՛ պարտ որ զդա 'ի մեզանից 'ի պատ թողումք. և ապա հրամայեց կոչել զնա 'ի յիւր դարպասն: Ապա օր մի խաբեբայն 'ի յալթուոյն ելեր գնացեր էր, և գնաց փահլուլըն նստաւ 'ի յալթուն խալի քոյին: Ապա եկին ձորտերն՝ սկսան ծեծել զնա, և նա ճչեց պինտ:

Ասեց

Լսեց խալխեցեայն՝ երեկ ո՞ր սիրտ ելաւ՞ ծառայութեան, եւ ասէ. է՛ փախչուէ՝ յե՛ր կու ծեծեն զքեզ։ Ասաց փախչողն. է՛ տիեզերական խալխեցոյ. երբ զիս այս մէկ պահ նըստելուս համար հանց կու ծեծեն. ապա 'ի քեզ զի՞նչ պիտի անեն դիտաւանելին։

Ա՜ռ առաջ ընծափառ ղայա։

Մարդիկ մի՛ ծեծէք դուք զիս,
չեմ ցանկար փառացդ աթոռոյ.
զիմըն քակեցի ո՞ւելոյ, ու չունիմ
սրտիկ շինելոյ։ Իմ կեանքս իմ ահայն եղեր, այլ չունիմ տեղիք խըրնդալոյ. դըրի զիմ մարմինս 'ի մահ,
զի չունիմ հոգի տանջելոյ։ Ո՛վ մարդ
որ փառացդ համար, տէր յերկրի
եղար ո՞ւաթոռոյ. դու հանց շըփացար 'ի քեզ, որ չըդնես դու մուհալ մարդոյ։ Ո՛հ 'ի մահուանէ չունիս, ո՛չ ճարես պաշար գնալոյ. Ձիս
փառքն այլոց թողուս, կու լինիս
դու ափ մի հողոյ։

Լսեց խալխեցեայն զայն իմաստուն

բանքն, և հարցանէր շատ բանս փահլուլին· և նա հնարիւք տայր զպատասխանին։ Եւ յայլ ՚ի մէկ օր մի հարցաւ խալիֆայն ընդ փահլուլն և ասէ· փա՛հլուլ՝ ասա՛ ինձ, այսօր ինչ կանէ ա՟ծ։ Ասէ փահլուլն· այդ դիժար հարցմունք է· այսօր համբերեա՛ ինձ, վաղիւն ասեմ։ Երեկ վաղիւն, և հեծեալ էր ՚ի սև յէշ մի։ Ասէ խալիֆայն· ասա՛ ինձ, ի՛նչ կանէ ա՟ծ։ Ասէ փահլուլն· հրամայէ՛, որ ամէն ծառայքդ ՚ի դուրս ելանեն, և ես տամ զպատասխանին։ Եւ հրամայեաց խալիֆայն ծառայիցն ելանել ՚ի դուրս· և մնաց ինքն փահլուլն մէն։ Եւ ասէ խալիֆայն· ինչ կու առնէ ա՟ծ ՚ի յայս ժամս։ Ասէ փահլուլն· է՛ խալիֆայ՝ արի՛ պահ մի նիստ ՚ի յիմ էշս, և ես ՚ի քո յաթոռդ նստիմ· նա ասեմ քեզ, թէ ինչ կանէ ա՟ծ։ Եւ հայեցաւ խալիֆայն՝ որ մարդ չէր երևէր ՚ի բոլորն, ելաւ նստաւ ՚ի յէշն· և փահ

լուլն 'ի խալիֆային աթոռն նստաւ, և ոչ խօսէր։ Ասէ խալիֆայն․ յէր չես խօսիր, ի՞նչ կամի ած։ Ասէ փահլուլն․ ինչ խօսիմ, չես գիտեր ինչ կամի ած․ դու որ խալիֆայ ես, 'ի յէշս իմ նստացուց․ ես որ փահլուլ եմ, նա 'ի քո աթոռդ նստացուց․ ահա զայս արար 'ի ժամուս յայսմիկ․ և խալիֆայն զարմացաւ, և ոչ
կարէր խօսիլ։

Ասաց բահլուլն շնաֆիա զայս։

Դու զանքըններն յէր քննես, երբ որ մտքըրդ իւրեան չհասնի․ զած ո՛վ կարէ տեսնուլ, կամ իմանալ զնա մարդ կենդանի։ Երբ չես քո կենացըդ տէր, կու մնաս դույերկուց շընչի․ այլ տէր հայրենեացս է նա, որ երկինք ևերկիր
կու տանի։

Ծիծաղեցաւ խալիֆայն և ասէ․ փառք այ կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան․ զի այս ցեղ խեւս զարմանալի պատասխան կու տայ․

բայց թուի ինձ, թէ չէ՛ դու խև, այլ խելօք է · և գնաց փահլուլն։ Եւ անցաւ օր մի քանի 'ի վե̄ր · և հրամայեաց խալիֆայն կոչել զնա։ Եւ նա նստաւ 'ի յէշ մի, և եկաւ առ խալիֆայն։ Ծիծաղեցաւ խալիֆայն և ասէ · փառք ա̄յ կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան։

Եւ ասէ խալիֆայն · երբ մի կամիմ հարցանել 'ի քեզ, և դու զուղորդն ասա՛։ Եւ նա ասէ՝ հրամայեա՛ խալիֆայ։ Ասէ խալիֆայն · քանի՞ աստղ կայ 'ի յերկինքն։ Ասէ փահլուլն · ես աղէկ գիտեմ, զամէնն համրեր եմ ասէ · որչափ էշուս վերայ մազ կայ՝ նա այնչափ աստղ կայ 'ի յերկինքն · թէ չես աւտար՝ իջիր դու համրէ։ Եւ իջաւ խալիֆայն յաթոռոյն, և սկսաւ համրել զէշուն մազն։ Ասէ փահլուլն · յառաջ զագին համրէ։ Եւ սկսաւ խալիֆայն այնպէս առնել, և ո՛չ կարէր, ծիծաղեցաւ խալիֆայն։

Եւ

Իր̂ տալոյ փահլուլըն ընծափաա այսպէս։

Ամ կերբ չըգիտես հիմայ, թէ գըլխոյդ մազըն քանի է · զէտ զիս փահլուլ կէր լինիս, թէ կերլինից տալըն քանի է։ Զ՝ինչ որ աստ գործել լինի, ամէնին համար տալոց է · որչափ զըրկէ զանձ ժողվէ, հոս թողու տանիլ չկարէ։

Ամաչէց խալիֆոյն, և եթող զօշուն ագին ՝ի համրելոյն, և եղաւ նստաւ ՝ի յաթոռն։ Իր̂ աւէ փառք այ՝ որ այսպէս գիտուք պատուէ զսիրելիս իւր · և տայ զիմաստութն ում որ կամի · զոր ոչ ոք կարէ տալ նմա պատասխան ՝ի բանս և՝ի հարցմունս իւր ։ Այսպիսի վարուք կեցեալ փահլուլն՝ և երանելի կենօք փոխեցաւ յանվախճան թագաւորութիւնն ՝ի ՝Ք̅ս Յ̅ս ՝ի Տ̅ր մեր։

Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ։ Այժմ և
միշտ և յաւիտեանս
Ամէն։

* Խրատք և նասիհեթք օգտակարք։

ԱՐԱՐԵԱԼ ԶԱՐՄԱնազան Թագաւորին՝ որ Նուշրավան ատեն։

Ան ատեն Թագ մի ունէր ոսկի և պատուական ակներով. և շինած էր ի̅բ̅ անկիւնով. և ամէն անկիւն՝ այս նասիհեթներս գրած էր։ և յորժամ ելնէր ի դուրս՝ կարդայր առաջքի զօրացն, և ասէր թէ՝ ի միտ առէք. և ապա դնէր ի գլուխն։ Այս թագն էր եախութ և զմրուխտ ակամբ և ալմաստով և լաջվարդ-քարով յօրինեալ։

Ա

Զ անձնահաճ մարդն՝ յիմնէ ի զմա

այս

պահեցէք։ Արժանաւորաց՝ իմ գանձէն բաժին տուէք։ Բանգէտ մարդկանց դէմ՝ անպատեհ խօսք մի՛ խօսիք։ Զանգտանելին՝ մի՛ փնտրռէք։ 'Ի բանելն՝ մի՛ արտորայք։ Զբանն՝ ժամէ 'ի ժամ մի՛ ձգէք։

Բ

'Ի բանին՝ սկիզբն և 'ի կատարածն հայեցարուք։ Յո՛ր տուն որ մըտանէք՝ յառաջ զելն իմացարուք։ Զամէն բան կամ կտաւ՝ ժ̅ անգամ չափեցէք, և ապա կտրեցէք։ Զփորձածն՝ մի՛ փորձէք։ Զփորձածն՝ անփորձի մի՛ տայք։ Զմարդն՝ որ չէք փորձեր՝ նր̅ մի՛ վստահանայք։ Զխոստումն որ 'ի ձեզ է՝ մինչև 'ի ձեր անձն մի՛ խնայէք։ Սակաւ խոստացէք՝ և աւելի՛ կատարեցէք։

Գ

Անուանի և խոնարհ արուեստ ուսի՛ք։ Զաշխատութի̅ սիրեցէ՛ք։ Զկարողուե̅ հարկիքն՝ գիտացէ՛ք։ Զհամբերող մարդն՝ ճանաչեցէ՛ք։

Զայս կեանքս՝ մի օր գիտացէ՛ք։ Զառողջութեան հարկիքն՝ գիտացէ՛ք։ Զձեր կեանքն՝ անգիտութեամբ մի՛ անցնէք։ ՚Ի յայլոց տրտմութիւն՝ մի՛ խնդայք։ Ընդ կոտրածն՝ ընդ գողացածն՝ ընդ Թափածն՝ ընդ այրածն՝ մի՛ տրտմիք։

Գ.

՚Ի մեծամեծաց յորոգայթն՝ կոծեցարուք։ Մարդկանց՝ ամենայն երաց համբերեցէք։ ՚Ի տեղի ուր համբերել պիտի՝ մի՛ ըշտապիք։ ՚Ի հետ ամէն մարդոյ՝ ոխակալ մի՛ լինիք։ Ամէն մարդ՝ զիւր հայրն Թող խնանոյ։ Զձեր զոտն՝ քան զձեր անկողինն աւելի մի՛ մեկնէք։ ՚Ի պատարագմէ՝ երբեք մի՛ դարձընէք։ Զայլոց կալին՝ ՚ի ձեր կանձն մի՛ առնոյք։

Դ.

Կռիւ Թէ համդիպի ՚ի ձեր մէջն, միջակ արարէք, բայց շուտ հաշտեցարուք։ ՚Ի սրտներդ՝ նախանձ մի՛ պահէք։ Զամէն բան՝ համբե-

րէ

րելով արարէ՛ք ։ Սկիզբն նոր տընկելով արարէ՛ք՝ և ապա զհինն խըլեցէ՛ք ։ Զերևելի զգայարանս ձեր՝ պատրաստ պահեցէ՛ք ։ Անպատեհ բաներուն՝ 'ի զատ կացէ՛ք ։ 'Ի մէջ մարդկանց՝ վատ անուն մի՛ լինիք ։

Զ

'Ի գողունեաց ընչից՝ մի՛ շահիք ։ Ի յեզեր Թագաւորի՝ տուն մի՛ շինէ՛ք ։ Զձեր բնակութի̅՝ մօտ 'ի խանութ մի՛ շինէ՛ք ։ 'Ի պիղծ մահալլէից՝ 'ի զատ կացէ՛ք ։ Որք անխրատք են՝ իշխանաւորի Թող ծառայութի̅ չանեն ։ Անընկեր՝ 'ի ճանապարհ մի՛ երթայք ։ Անարժանից՝ մի՛ խոնարհիք ։ 'Ի հետ չար կանանց՝ մի՛ դատիք ։ 'Ի յօտար հող՝ ծառ մի՛ տընկէ՛ք ։

Է

'Ի յաղահատ տեղիք՝ սերմ մի՛ ցանէ՛ք ։ 'Ի հետ ամէն ազգ մարդոյ՝ մի՛ փաթըթուիք ։ 'Ի նորքսակ մարդուէ՝ փոխ մի՛ առնոյք ։ 'Ի հետ անարժան մարդկանց՝ մի՛ նըստիք ։

'Ի հետ անհարկից՝ սէր մի՛ դնէք: Բամբաս մարդկանց՝ մի՛ հաւատայք. և 'ի հետ նց̃՝ աղուհաց մի՛ ուտէք: 'Ի հետ ծառայի մի՛ կռուէք՝ որ չամաչէք իւր տիրոջէն. և իւր աղայէն 'ի զատ կացէք: Չտեսած մարդոյ հետ՝ սիրելութի̅ մի՛ առնէք:

Ը

Տղայն որ 'ի մօրէն ցաւոտ ծնանի՝ իւրն դեղ մի՛ առնէք, զերա փոյտա չունի: Անշահ մարդոյն և խելառին՝ հարբածին խրատ մի՛ տայք: Դուք զձեզ՝ մեծ մի՛ տեսնայք: 'Ի լեզուանի կնոջէ՝ պատրաստ կացէք: Ո՛վ որ զխրատն սիրէ՝ այնոր տուէք: Զուտելն և զխմելն՝ մինակ մի՛ սիրէք: Ձեր հնազանդելոցն՝ կիւճ մի՛ անէք: Զձեզ սիրօղն՝ մի՛ ատէք: Ո՛վ որ 'ի ձեր հետ սէր ունի՝ զնա անտես մի՛ առնէք: Անպատեհ պատճառէ՝ զծառայն ձեր մի՛ ծեծէք: 'Ի յայլոց հացն՝ աչք մի՛ ձգէք:

Թ.

Զձեր հացն՝ յայլոց սեղան մի՛ դնէք: Որք զձեր հացն ուտէք՝ զձեր զրոյցն տեսէք: Տղայոց և ճահիլեց հետ՝ թէպտիր և մուշավերէ մի՛ անէք: Օտար կին և պառաւն՝ ՚ի ձեր տունն մի՛ թողուք: Ի չար կնոջ խիլամթէ՝ պատրաստ կացէք: Զձեր հոգին՝ ձեր մարմնոյն ծառայ մի՛ անէք: Ի ձեր որդւոց և դստերաց՝ մահն մի՛ տրտմիք: Ի յօտար քան՝ մի՛ վըստահանայք զձերդ փորձած:

Ժ.

Զայգին ձեր ՚ի պահ օտարի՝ մի՛ տայք: Ի յայլոց ապրանք իբրև ըղտէրն իւր՝ մի՛ վստահանայք: Ի յօտար մարդոյ տուն՝ տանուտէրուն մի՛ առնէք: Զօտարն որ չէք ճանաչէր՝ ՚ի ձեր տունն տանուտէր մի՛ դնէք: Այն մարդիկքն որ զայս կենքս խիստ կու սիրեն՝ դուք զնա մի՛ սիրէք: Ան և կնոջ՝ ծառայի և պարոնի՝ շատ մի՛ ձգէք:

ՃԸ

Առ թագաւորն՝ ահարկո՛ւ եւ պատրաստ կացէք։ Թագաւորն թէպէտ խոնարհի՝ դուք մի՛ համարձակիք։ Իշխանաւորն սակա՛ւ սիրեցէք՝ բայց ՚ի ղէյպէթն զինքն մե՛ծ սիրեցէք։ Ոխակալ մարդկանց՝ ՚ի զա՛տ կացէք։ Զամէն մարդոյ՝ հարկիքն իմացէ՛ք։ Ընդ բախտաւորն եւ ընդ տօվլաթաւորն՝ մի՛ նախանձիք։ Ընդ իմաստունն՝ մի՛ դէմ առնէք եւ քամահէք․ զի նոքա տէր են գրչի եւ իմաստութե̄։ Այն ոք որք գիտունք են՝ զն̄ա թեթեւ մի՛ տեսանոյք։ Թէպէտ դուք իմաստուն էք՝ այլ քան զձեզ աւագն մի՛ արհամարհէք։ Ընդ հանձարեղին՝ մի՛ վարիք։ Այն ոք որ ծերք են՝ պատուեցէ՛ք եւ գաւազան լերո՛ւք նց̄ա։ ՚Ի բանսատեղծ մարդկանց՝ ՚ի զա՛տ կացէք։ Դուք զմարդն՝ ծաղր եւ տրնազ մի՛ առնէք։

ՃԹ

Զծերքն՝ հարկօք սիրեցէ՛ք։

Զծերն՝ մեծ սիրեցէք: Զխաբուսիկսն կըտրեցէք ՚ի միջոյ՝ որ անհո՛գ կենայք: ՚Ի հետ ծըլատի և ոչ ինչ մարդկանց՝ մի՛ դատիք: Զհօր և ըզմօր՝ և զազգի հարկիքն՝ մեծ տեսէք: ՚Ի ձեր մօտ ազգէն՝ մի՛ կըտրէք: ՚Ի մէկ հետ մարդոյ՝ մի՛ տայք զձեզ կըլանել: Զերդումն և զպայմանն՝ որ է ահէթ ու ամանն՝ մի՛կոխէք: Անկոչ՝ ՚ի պատիւ մի՛ երթայք:

ԺԳ

Յամ̅ աւուրս ձեր՝ խրատիւ և իմաստութ̅բ կացէք: Թէպէտ և դուք չար լինիք՝ զաղէկն սիրեցէ՛ք: Իսկ թէ աղէկ լինիք՝ զչարն մի՛ բամբասէք: Սուտ մարդկանց սրտին՝ մի՛օգնէք: ՚Ի սիրելւոյ և ՚ի զարմէ՝ զգութ մի՛ վերցնէք: ՚Ի հետ պիղծ մեռելի՝ զձեր մեռելն մի՛դնէք: Ուսումն և խելք ուսի՛ք: ՚Ի խրատէ մի՛ ամաչէք: ՚Ի մէջ մարդկանց՝ քան զբարին այլ բան մի՛ խօսիք:

ԺԴ

Ո՛վ քան զձեզ աղէկ է և գիտուն՝ զինքն մեծ տեսէք:

Իսկ այլ իրաց՝ քան իմաստութե՟ց բանից, այլ բանի խնդրող մի՛ լինիք։ Թէ իմաստունքն հեռի են՝ դուք գնացէք իւրեանց մօտն։ Զանցեալ ժամանակին՝ հեշտ մի՛ համարիք։ Զինչ որ յա՟ձս չունիք՝ ՚ի մարդուէ մի՛ խնդրէք և մի՛ քրքրշէք։ Թէ կուզէք որ անհոգ մնայք՝ աղէկ արուեստ ունի՛ք։ Բան մի որ ՚ի պահ առնուք՝ ՚ի տ՟րն հասուցէ՛ք։ Փոխ որ առնուք՝ վճարեցէ՛ք։

ԺԲ.

Խօսք որ ՚ի խելաց չէ՝ մի՛ խօսիք։

Խօսք որ ասելու չէ՝ մի՛ ասէք։ Զլեզուն ձեր՝ ՚ի չար ասելն մի՛ սովրեցընէք։ Անպատեհ խօսից՝ մտիկ մի՛ դնէք։ Պիղծ խօսից՝ պատասխան մի՛ առնէք։ Թագաւորաց՝ յոյս մի՛ դնէք։ Ամէն ոք՝ թող իւր արուեստն մժղլի։ Աինչ որ լսէք զպատասխանին՝ մարսեցէ՛ք։ Զբանն որ չգիտենայք՝ մի՛ ասէք։ Զինչ բան որ ՚ի ձեր սիրտն չկայ՝ զայն լեզուաւ մի՛ խօսիք։

ԺԶ.

Ամ̅ մարդոյ խօսաց՝ մի՛ վըստահանայք : Զբարի խօսքն՝ յամէն մարդոյ ընդունեցէ՛ք: Ո՛չ իրա̂ւ և ո՛չ սուտ՝ մի՛ երդնու̂ք: Զայն կեանքն՝ ընդ այս կենցաղոյս մի՛ փոխէք:

Ամէն մարդոյ զայն կամեցարո՛ւք՝ զինչ որ ձեր անձինն կուզէք: Որբերոյ իրք՝ մի՛ խնայէք : Երկայն ճանապարհի՝ պաշար պատրաստեցէ՛ք: Այրեաց՝ հանապազ ողորմեցէ՛ք: Կըտրճուե̅ ժամանակն՝ զծերուի̅ն ի մի՛տ բերէք: Զծերուե̅ բանն՝ ի կըտրճուե̅ ժամանակն հոգացէ՛ք:

ԺԷ.

Ի ժըլատուէ̅ փախի՛ք: Ազատութե̅ արու̂եստ ուսի՛ք: Սկիզբն առատութե̅՝ ի ձեր հալալ արդեանցն արարէ՛ք: Զմարդկութե̅ կերպն՝ ճանաչեցէ՛ք: Ի հետ հարկաւորաց՝ սէր դըրէ՛ք: Ի ցածէն և յանգիտէն՝ խնդիր մի՛ խնդրէ՛ք: Ի հետ ամէն մարդոյ՝ սէր և հարկաւորուի̅ ըս̅ ժամանակին արէ՛ք:

Զպատուականն՝ պի՛նդ բըռնէք։

ԺԸ

Ձմեռան զախիրան՝ յամառն հոգացէ՛ք։ Զայս աւուր բանն՝ ՚ի վաղն մի՛ ձգէք։ Բանն՝ որ եղած չէ՝ գէտ եղած մի՛ ձեւէք։ Զդեղն՝ յառողջութե՟ ժամն խմեցէ՛ք։ Զհաճամաթն՝ ՚ի յատենն տուէ՛ք։ Երբ ծեր լինիք՝ կըտրճութե՟ մի՛ ցանկայք։ Զբանգէտ մարդն՝ ՚ի վ՟ր բանի դրէ՛ք։ Զճահիլն և զերիկչոտն՝ ՚ի վ՟ր մեծութե՟ մի՛ դնէք։ Մեծք որ ոխս պահեն՝ փախերո՛ւք ՚ի նոցանէ։ Ամեն իրաց՝ շուտ մի՛ հաւատայք։ Զձեր ընտանիքն՝ սիրեցէ՛ք։

ԺԹ

Ընդ հետ ուղղորդ սիրելեաց՝ քիթ ՚ի վեր մի՛ կենայք։ Զազգականս ձեր՝ մի՛ վիրաւորէք։ Մի՛ թողուք զձերայինսն՝ և ՚ի յօտարն շխանայք։ Զձեր հին սիրելին՝ մի՛ մոռանայք։ Զձեր թշնամին՝ խիստ մի՛ արհամարհէք։ Իմաստուն թշնամւոյ՝ խիստ մի՛ վախենայք։ Զանգէտ սիրելին՝ մեծ մի՛ գիտնայք։ ՚Ի թշնամութե̅՝ սիրոյ տեղի պահեցէ՛ք։ ՚Ի սիրելութե̅ ժամն՝ զթշնամութի̅ յիշեցէ՛ք։ Ծուլութե̅ արուՙ̂եստ՝ մի՛ ուսանիք։ Զձեր սիրելին՝ յաղքատութե̅ ժամն փրնտուեցէ՛ք։

Ի

՚Ի հետ գիշաւ̂որին՝ մի՛ գիշանայք։ Ամէն մարդ՝ թո՛ղ զիւր չափն վայելէ։ Աշխարհս՝ ձեզ խաղաղ թո՛ղ չթու̂ի։ Զհոգւոյ բաժինն ՚ի մարմնաւ̂որս՝ մի՛ մոռանայք։ Զտղայն ձեր՝ հնարաւ̂որութ̅բ արու̂եստ ուսուցէ՛ք։ Զձեր կերպարանն՝ ՚ի սիրելեաց և ՚ի թշնամեաց ծածո՛ւկ պահեցէ՛ք։ Զձեր խորհուրդն՝ ամէն մարդոյ մի՛ ասէք։ ՚Ի տեղի ուրուք՝ ականջ մի՛ դնէք։

ԻԱ

Զձեր խորհրդակիցն՝ ՚ի ժամանակի բարկութե̅ փորձեցէ՛ք։ Զկին և զորդիս՝ ՚ի ժամանակի աղքատութե̅

մի՛ ուրանայք։ Առ մեծամեծքն՝ աչք 'ի բաց կացէ՛ք։ Ամէն իրաց՝ զչափն սիրեցէ՛ք։ Զհպարտութի՟՝ քան ըզ մահն այլ դառն իմացէ՛ք։ Զանհոգութի՟ 'ի ձեզ՝ անկենդանութի՟ գիտացէ՛ք։ Ընկեր զայն սիրեցէ՛ք՝ որ
իւրմէն իրք մի շահիք։

ԻԲ

'Ի ժամանակի անհոգութե՟՝ քան 'ի նեղութե՟ ժամանակին՝ այլ խի՛ստ պատրաստ կացէք։ Զամէն բան՝ 'ի յառատութե՟ ժամն հոգացէ՛ք։ 'Ի յաժնութե՟՝ զթանկութի՟ն յիշեցէ՛ք։
Երբ առողջ կենայք՝ զհիւանդութի՟ն 'ի մի՛տ ածէք։ Զաղջիկն կամ զկին՝ 'ի ճանաչ տեղայ տուէ՛ք։
Զմարդ մեկ հեղ տեսնելով՝ մի՛ փաթըլթուիք։ Անշահ սիրելեաց՝
'ի զա՛տ կացէք։

Եւ Ք՟սի մարդասիրին՝
փառք յաւիտեանս
յաւիտենից
Ամէն։

Խրատ

* Խրատք պիտանիք և օգտակարք · որք ու_սուցանէ Խիկարայ իմաստնոյ։

ԵՍ ԽԻԿԱՐՍ ԴՊԻՐ էի սենեքերիմայ արքային ասորեստանեայց · և արարի Կ̄ կինս · և շինեցի Կ̄ ապարանս · և ես խիկարս եղէ Կ̄ ամաց , և ոչ եղև ինձ որդի։ Յայնժամ մտի առ կուռքն բազում ընծայիւք · և վառեցի հուր , և արկի խունկս անուշահոտս ՚ի վ̄ր ն̄ր · մատուցի զընծայս , և զոհեցի զոհս վ̄ս ծննդեան։ Եւ աղաչեցի ասելով , ո՛վ տեարք իմ և ա͞ծք իմ բէլշէիմ և շահմիմ, հրամայեցէ՛ք և տո՛ւք ինձ արու զաւակ. քանզի ահա խիկարս կենդանի՝ մեռանի։ Արդ զի՞նչ ասեն մարդիկք, թէ խիկար իմաստուն էր և ճարտար. մեռա՛ւ՝ և ո՛չ կայր նորա որդի, որ թաղէր զնա. և ո՛չ դուստր՝ որ լայր զնա. զի՞նչ ասեմ, հոգնիմ ժառանգ յետ մահուան իմոյ։ Արդ եթէ որդին իմ յօրն ժ͞ քանքար ծախեսցէ, ո՛չ կարէ սպառել զինչս իմ. այլ զի միայն արկցէ հող ձեռօք իւրովք ՚ի վ͞ր իմ. և զի մի՛ մնացայց անյիշատակ։

Յայնժամ ձայն եղև ՚ի ա͞ծոցն իմոց և ասէ. խի՛կար, ո՛չ հրամայեալ է լինել քեզ զաւակ. բայց թէ առցես զնաթան քեռ որդին քո, և սնուսցես զնա որդի քեզ. և նա հատուսցէ քեզ զսնուն քո։

Արդ ապա առի զնաթան քեռ որդին իմ առիս, որ էր ՚ի մի ամի. և հագուցի նմա բեհեզս և ծիրանիս. և եդի մանեակ ոսկի ՚ի պարանոց նո͞ր

ոպ

որպ՟ որդի Թագաւորի · գեղաչուք զարդարեցի զնա · և արբուցի նմա կաթն և մեղր · և ննջեցուցանէի զնա 'ի վ՟ր արծուոց և աղաւնեաց իմոց, մինչև եղև Է ամաց ։ Եւ ապա սկսայ ուսուցանել նմա զդպրութի՟ և զիմաստութի՟ և զհանճարագիտութի՟ , և զպատասխանիս հրովարտակաց , և զդարձուածս հակառակ խօսից · և 'ի տուէ և 'ի գիշերի ո՛չ դադարէի ուսուցանելոյ · և յագեցուցի զնա ուսմամբ իբր հացի և ջրով։

Ապա ասէ արքայն առիս՝ դպի՛ր և իմաստուն Խիկար · գիտեմ, զի ծերացեալ ես · և յետ փոխմանն քո ո՛վ է , որ կատարէ ճարտարութե՟ և իմաստութե՟ զգործս արքունեաց մե՟րոց · և ես հանապազ տրտումեմ վ՟ս այդ խորհրդիդ։

Պատասխանի ետու նմա և ասացի։

Արքայ՝ յաւիտեան կաց · է՛ իմ որդի՝ որ առաւել հանճարեղ և իմաստուն է քան զիս։ Ասէ Թագա ւորն․ ա՛ծ՝ զայր առիս՝ զի տեսից զնա։ Եւ իբրեւ ածի զնա՝ կացուցի զնա առաջի Թագաւորին։ Յորժամ ետես Թագաւորն, ուրախ եղեւ և ասէ․ ա՛յս օրս օրհնեալ եղիցի․ քանզի Խիկար ՝ի կենդանութե՟ իւրում էած և կացոյց զորդին իւր առաջի իմ, և ինքն ՝ի հանգստեան եղիցի։ Եւ ես երկրպագի արքային իմոյ, և առեալ տարայ զնաթան յապարանս իմ․ և այսպէս ասէի ՝ի խրատելն իմում։

Խրատ Խիկարայ՝ զոր ետուր որդւոյն իւրոյ Նաթանայ ։

Որդեակ՝ եթէ լսես խօսք ՝ի դրան Թագաւորաց և իշխանաց և մեծամեծաց, պահեա՛ և մեռո՛ զնա ՝ի սրտի քում․ և մի՛ ասեր մարդոյ, մինչև այլքն ասեն ՝ի քեզ։

Որդեակ՝ զմարդոյ կապած և մօհրածն մի՛ արձակեր․ և զարձակեալն մի՛ կապեր։

Որդեակ՝ լաւ է իմաստուն մարդոյն

հետ քար կրելն, քան զանզգամին հետ ուտել և խմելն։

Որդեակ՝ մի՛ լքցիր, զի առաքեսցեն զքեզ ՚ի բան, և դու ոչ խմանաս ըզբանն՝ և երթաս. յետոյ այլ ոք ուզարկեն՝ որ երթայ ՚ի բանն, և դու ծաղր լինիս։

Որդեակ՝ մի՛ այնպէս անիր՝ որ երթաս ՚ի տեղ մի, ու ՚ի քեզանէ մեծ մարդոյն ՚ի վեր նստիս. որ չասեն, թէ ելի՛ր ՚ի վայր, որ յամօթ լինիս. ՚ի վայր նիստ՝ որ ասեն՝ թէ ելի՛ր ՚ի վեր։

Որդեակ՝ թէ ընկերն քո հիւանդ է, մի՛ ասեր ՚ի միտքդ, թէ տանձ կամ խնձոր գըտնուամ, և ապա երթամ ՚ի տես. ե՛րթ ոտիւք՝ և տե՛ս աչօք. զի զհիւանդն դատարկ տեսանել շա՛տ լաւ է քան զբազում կամակս ուտելոյ։

Որդեկ՝ մի՛ հեղուր զարիւն մարդոյ, զի մի՛ այլքն հեղձցեն զարիւն քո։

Որդեակ՝ մի՛ շնար ընդ այլոց կանանց, զի մի՛ այլք շնասցեն ընդ կնոջ քոյ։

Որդեակ՝ լա՛ւ է ծառայելն միամտութբ̄ տալ պատասխանի տն̄ իւրում, քան զոր խրատելով խօսի, և ածէ 'ի բարկութի̄։

Որդեակ՝ մի՛ տար ընկերի կոխել զոտս քո, զի մի՛ համարձակեսցի և կոխեսցէ զպարանոց քո։

Որդեակ՝ մի՛ լինիր քաղցր որ կլանեն զքեզ. և մի՛ լինիր լեղի որ թըքանեն զքեզ։

Որդեակ՝ լա՛ւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք. զի կոյրն՝ արագ տեսանէ զերթ և եկն ճանապարհին. և մտօք կոյրն՝ հանապազ գնայ կամակոր։

Որդեակ՝ լա՛ւ է աղջիկ՝ որ ծնանի և շուտ մեռանի, քան թէ ապրի, և ազգին իւրոյ սև երեսանք բերէ։

Որդե̄կ՝ լա՛ւ է կողմ 'ի ձեռին քում, քան թէ հարիք 'ի յայլոց ձեռքն։

Որդեակ՝ լա՛ւ է ուլ մի 'ի ձեր տանն զենած քն̄ թէ եզ մի 'ի տունս այլոց։

Որդեակ՝ 'ի յապարանս թագաւորաց մի՛ մտաներ. և ընդ կնոջ դատաւորի մի՛ խօսիր։

Որ

Որդեակ՝ աչք մարդոյ ագա՛հ է, ո՛չ կշտանայ գանձով՝ մինչև լցցի հողո՛վ։

Որդեակ՝ ընդ մարդոյ կնոջ մի՛ խընամախօսիր. զի թէ գէշ լինի՝ անիծանեն զքեզ. և թէ աղէկ լինի՝ ո՛չ յիշեն զքեզ։

Որդեակ՝ յորժամ դատաստան երթաս, մի՛ շատախօս լինիր. և մի՛ ծուռ զրուցեր, զի մի՛ սուտ համարեն ըզքեզ՝ և մտնուս ՚ի զընդանն։

Որդեակ՝ յառաջ զխօսքն ՚ի միտքդ խորհիր. թէ սուտ ես՝ մեղա՛յ ասա. զի մի՛ դատաւորն արկցէ ՚ի բանտ, և թալանէ զինչս քո։

Որդեակ՝ զմարդն որ ՚ի կախել տանին՝ մի՛ յառաջ նոր ընթանայր, զի մի՛ մատնէ զքեզ և ասէ, թէ սա այլ իմ ընկեր է։

Որդեակ՝ յորժամ երթաս ՚ի հարսանիս կամ ՚ի մահատուն՝ յառաջ հաց կեր ՚ի տունդ, և ապա գնա՛. զի թէ հարսանիս է՝ ՚ի շատ խնդութեն հոգ չանեն զքեզ. և թէ մահատուն

է՝ 'ի շատ տրտմուէ̃ն մռուամնան ըղ
քեզ, և դու մնաս անօթի։

Որդեակ՝ կամուրջ մի հեռի գնալ անցանել լաւ է, քան մտանել 'ի ջուր մօտիկ։

Որդեակ՝ նոր դատաստան մի՛ սահմաներ անխրատաւք. թէպէտ և իշխան լինիս՝ 'ի սահմանէ 'ի դուրս մի՛ ելանիր։

Որդեակ՝ մի՛ բանար զաչս քո և տեսաներ զկին գեղեցիկ. զի դեղեալ է զերեսն՝ և ծարուրէլ է զաչսն. և թէ վատնես զա̃մ ինչս քո 'ի սէր նր̃՝ ոչ ինչ առաւել գտանես՝ քան զկընոջ քոյ. բայց միայն զմեղքն և զսև երեսութի̃ն։

Որդեակ՝ թէ տեսանես զերխասարդ մարդն թուացեալ յօթս՝ մի՛ հաւատար գործոց նր̃. զի բան ծերոց հաստատ է. բայց երխասարդորդւոյն՝ ոչ ահա օրինակ սորա ասացեալ է, թէ երբ բերան աուխածու՝ որ զերծուցանէ զնա։

Ո՛րդեակ՝ թէպէտ և որդին քո իմաստուն է՝ յառաջագոյն փորձեա՛ զնա, և ապա տուր զինչս քո ՚ի ձեռն նր̅։

Ո՛րդեակ՝ ՚ի կնոջէ յօտարէ և ՚ի հարսնատընէ՝ քան զընկերան յառաջ ե՛լ և գնա՛․ և այլ մի՛ դառնայր՝ որ հարկե որ լինիս․ ապա թէ դառնաս՝ փոխարէն հարկացդ առնուս անարգուի̅։

Ո՛րդեակ՝ ո՛վ ոք քան զքեզ պինդերես է, մի՛ հակառակիր ընդ նմա։

Ո՛րդեակ՝ թէ բարձր է տան շեմն քո առաւել քան թ կանգուն այր՝ որ մտանես խոնարհեցո՛ զգլուխ քո։

Ո՛րդեակ՝ մի՛ առնուր կշռով մեծ՝ և ծախեր փոքր, և ասեր ՚ի սրտիքում թէ շահեցայ․ և ո՛չ գիտես՝ որ փոխանակ ՚ի յայն փոքր շահուն, բարկանայ ա̅ծ․ և զոր ունիս՝ առնու ՚ի ձեռաց քոց, և տայ այլոց։

Ո՛րդեակ՝ մի՛ երդուիր և մի՛ ասեր սուտ․ զի սուտ երդումն և սուտ ասելն՝ զմարդոյ կենաց պակասութի̅ բերէ։

Որդեակ՝ եթէ կամիս խնդրել բանս ինչ յա՟յ՝ 'ի կամաց նր՟ մի՛ հեռանար. և զոր խնդրես՝ տացէ՛ քեզ։

Որդեակ՝ քեզ զի՛նչ բան որ չա՛ր թուի՝ ընկերին քում մի՛ աներ. և զոր ինչ բարին է՝ կատարէ. և արասցես քեզ բարեկամ. և դու յա՟մցունց բարի գտցես։

Որդ՟եկ՝ յորժամ լինիս 'ի մէջ մարդկան՝ մի՛ յայտներ զպարտուքդ և զպակասու՟թդ քո. զի 'ի նոցանէ շահ ո՛չ լինի քեզ, և դու արհամարհիս 'ի մէջ նոցա։

Որդեակ՝ սիրեա՛ զկին քո, զի մայր մին քո է. և աշխատասնօք սնուցանէ զորդիսն քո, և կցորդ կենաց քոց է։

Որդեակ՝ սիրեա՛ զեղբայր քո հաւասար ընդ քեզ. զի 'ի հասանել որդւոց քոց՝ խնդասցես։

Որդեակ՝ ուսո՛ զորդին քո 'ի քաղց և 'ի ծարաւ, զի ուսանիցին համբերել նեղութ՟ե. և յորժամ հանդիպի ժամանակ սովոյ՝ կարասցեն ժուժկալել։

Ո՛րդեակ՝ մարդոյ գործք՝ որ ո՛չ է բարի՝ և չունի անուն բարի յաշխարհի, լա՛ւ է մարդն այն մեռուած՝ քան թէ կենդանի:

Ո՛րդեակ՝ յորժամ լինիս այլոց տան հիւր՝ եթէ օձ և կարիճ բերեն առաջի քոյ մի՛ քալէջեան, և մի՛ գանկատիր:

Ո՛րդեակ՝ մի՛ ատեր չար բարեկամին քոյ. այլ ծիծաղեա՛ ընդ երես նր̃. և դու ուրախ լինիս ՚ի մէջ ընկերաց քոց:

Ո՛րդեակ՝ զա̃մ բարութի̃ կնոջ քոյ տես. բայց զխորհուրդ սրտի քոյ մի՛ յայտներ. զի կինն բնութ̃ տկար է, և ո՛չ կարէ պահել զբանս քո. այլ յայտնէ դրացեաց քոց, և դու անկանիս ՚ի փորձանս և ՚ի նեղութի̃:

Ո՛րդեակ՝ մին ապրանքդ՝ որ քո չէ, մի՛ առնուր և տար այլոց:

Ո՛րդեակ՝ խորհեա՛ զբանն ՚ի սիրտդ. ընտրեա՛ զպիտանին, և ապա բե՛ր ՚ի լեզուդ և խօսիր. և թէ զինչ գայ ՚ի բերանոդ խօսիս՝ նա ծաղր լինիս։

Որդեակ՝ երկու մարդ ընդ կռուին և ընդ ծեծուին՝ ՚ի մէջ նոցա մի՛ անկանիր, զի մի՛ ՚ի զուր մեռանիցիս։

Որդեակ՝ մի՛ դատարկաբանութիւն խօսիր և ծիծաղիր․ զի մարդն ՚ի նուաղելոյն կռուի լինի․ և ՚ի կռուոյն ըսպաննութի̅։

Որդեակ՝ թէ կամիս իմաստուն լինել՝ պահեա՛ զլեզուդ քո ՚ի չար խօսից։

Որդեակ՝ թէ կանչելով մարդ տուն շինէր՝ նա էշն օրն ութն դարպաս կու շինէր․ և թէ ՚ի սաստիկ զօրութէ̅ եզին վարի լուծն՝ նա ՚ի պարանոցէն ոչ ելանէր։

Որդեակ՝ թէ աղքատ ես, յա̅մ աւուրս պ̅տրագաց ա̅յ մի՛ հեռանար։

Որդե̅կ՝ մի՛ տացես ապրանք առանց կ̅նի և վկայի․ զի բազում խօսք լինի, և ՚ի բուն բարեկամէն քակտիս։

Որդեակ՝ պատուեա՛ զհայր քո և զմայր․ զի ՚ի հասանիլ յորդւոց քոց՝ տացես և դու զնոյն։

Ո՛րդ՟եկ՝ շալկեցի արճիճ և երկաթ, չէ՛ր ծանր քան զպարտքն · թէպէտ ուտէի և ըմպէի՝ ո՛չ կարէի հանգչիլ մինչև վճարէի։

Ո՛րդ՟եկ՝ մեծատան որդին թէ օձ ուտէ՝ կասեն թէ վ՟ս բժշկու՟ե կերաւ · և թէ աղքատն ուտէ՝ կասեն թէ սովալլուկ մեռանելոյն կերաւ։

Ո՛րդեակ՝ լա՛ւ է գողոց տալ զա՟մ ինչս քո , քան թէ գտանեն մէկ գողութ՟ի ՚ի վ՟ր քո։

Ո՛րդեակ՝ ընդ թշնամւոյն կորըստեան մի՛ խնդար · զի առաջի քո մահ կայ։

Ո՛րդ՟եկ՝ յորժամ տեսանես զծերն, յոտն կաց և պատուեա՛ զնա · զի և այլք զնոյն արասցեն քեզ։

Ո՛րդեակ՝ թէ դադարի գետն ՚ի գնացիցն , կամ քաղցրանայ ո՟պ զմեղու , և կամ սպիտակի ագռաւն ո՟պ զաղաւնի՝ նա այնպէս թողու անզգամն զանզգամութ՟ի իւր · կամ անմիտն՝ լինիլ զգոյուն։

Որ

Ո՛րդեակ՝ մի՛ յաճախեր 'ի տուն բարեկամին քոյ , զի մի՛ յագեալ ատեսցեն զքեզ։

Ո՛րդեակ՝ օրհնեաց հ͞յ ունկնդի՛ր լեր · զի պատուիրանն հ͞յ ամուր պարիսպ է մարդոյ։

Ո՛րդեակ՝ սովորեցո՛ զլեզուդ քո՝ զբարին խօսել 'ի մէջ ընկերաց քոց։

Ո՛րդեակ՝ թէ խրատ բարի դտցես, դու իմաստուն կոչիս · զի չարն՝ հանապազ 'ի չար մարդէն ծնանի։

Ո՛րդեակ՝ թէ կամիս զգործս ինչ բարիս գործել՝ յառաջ մի՛ պարծիր · լինի թէ չլինի , կամ չկարենաս գործել , և ծաղր լինիս։

Ո՛րդեակ՝ մի՛ ցանկանար մարդոյ արեան · և մի՛ սիրեր զկռիւ · այլ սիրեա՛ զխօսք կակուղ · և խօսք՝ որ շիջուցանէ զհրաբորբոք գազանացեալ սիրտ մարդոյ ։

Ո՛րդեակ՝ յորժամ խմես գինի՝ մի շատախօս լինիր · զի 'ի շատ խօսից կռիւ լինի և յետոյ խռովութ͞ի և ապականութ͞ի։

Ո՛րդեակ՝ խաղաղութ՟ին մայր է ա՟մ բնական ողջունի խոնարհութ՟ե։

Ո՛րդեակ՝ մինչ կօշիկդ ՚ի յոտքդ է՝ կոխեա՛ զփուշն. և արա ճանապարհ ընկերի քում, որ ընդ քեզ է գալոց։

Ո՛րդեակ՝ ջանա՛ և շահի՛ր անուն բարի. զի լաւ է մարդոյն անուն բարի, քան թէ զգեղ գովելի. զի գեղեցկութ՟ին հիւանդութ՟բ և մահուամբ ապականի. և անուն բարի յաւիտեան մնայ։

Ո՛րդեակ՝ թէ հանդիպիս կնոջ անզգամի՝ հնազանդի՛ր նմա, և կամ փախի՛ր ՚ի նմանէ։

Ո՛րդեակ՝ ՚ի լեզուէ քումմէ վախցիր քան զօտար թշնամւոյ. զի այլ ոք ո՛չ կարէ հարկանել զքեզ՝ եթէ ո՛չ զնա։

Ո՛րդեակ՝ լաւագո՛յն է քեզ թշնամու՟ի ընդ առն իմաստնոյ, քան թէ սիրելութ՟ի ընդ առն անմտի։

Ո՛րդեակ՝ զայր անմիտ և արբեցող ՚ի բան մի՛ ղրկեր. և թէ կուզես որ բազում չարիս ածէ 'ի վերայ քո՝ ուղարկեան։

Որդեակ՝ անմիտ մարդոյ խրատ տալն այնպէս է, որպ՟ թէ ոք փոշի ցանէ 'ի գնացման գետոյ։

Որդեակ՝ զչար եւզանմիտ եւզլեզուանին և զամ՟ ամբարհաւաճ մարդն, 'ի քո տունն մի՛ մուծաներ. զի 'ի գործոց նր՟ ամօթալ գտանիս։

Որդեակ՝ թէ լինիս տէր ձ՟ի, ըզմաշն քո մի՛ մոռանար։

Որդեակ՝ ած զգինի վ՟ս ուրախութ՟ե. բայց տես՝ մի՛ լինի թէ ըմպէ զինին զքեզ։

Որդեակ՝ փառաւոր առնէ երբեմն գինին զմարդն. և երբեմն յամօթալից և ծաղր առնէ։

Որդեակ՝ լաւ է կռուիլ քեզ ընդ մարդոյ զինաւորի, քան թէ կնոջ անզգամի։

Որդեակ՝ մարդ չարաբարոյ և ամբարտաւանն՝ յորժամ տեսանէ զկորուստն ընկերի իւրոյ, ցնծայ և ուրախ լինի․ և կարծէ ՚ի մտի իւրում թէ, փառս ինչ յաւելաւ ՚ի նմա։

Ո՛րդեակ՝ յորժամ քաղցրանայ աչք այ̄ ՚ի վր̄ քո՝ տեսանել երկնչէր ՚ի նմանէ․ զի յետև մեղադրես յանձին քում։

Ո՛րդեակ՝ յորժամ տեսանես զքեզ առ աչս տն̄ այ̄ քո՝ թագաւորաց փառաւորելի եղեր, և ամ̄ մարդ սիրէ զքեզ․ և յորժամ արհամարհես յայ̄՝ յայնժամ թագաւորք և իշխանք և ամ̄ սիրելիք քո ատեն զքեզ։

Ո՛րդեակ՝ մի ասեր աղքատին, թէ դու ինձ չար ո՛չ կարես առնել․ տե՛ս, զի բազում չարիք և անարգանք յոչ ինչ մարդկանէ ելանեն, և յո՛չ պատուական մարդկանց։

Ո՛րդեակ՝ կին օտար որ սիրէ զքեզ, և ասէ թէ դու լաւես քան զիմ այրն՝ մի՛ հաւատար նմա․ զի կին պոռնիկ նման̄ է շան՝ որ խառնակի ընդ ամ̄ շանց։

Ո՛րդե̄կ՝ մի՛ վախցուցաներ զխրատ

քո 'ի հետ նոր բռնած սիրելւոյդ՝ մինչև քանի մի ինչ անգամ փորձես զնա չարեօք և բարեօք։

Ո՛րդեակ՝ կին պոռնիկ նման է գերեզմանի բռնելոյ, որ 'ի ներքս լի է գարշահոտութբ̃։

Ո՛րդեակ՝ մի՛ լրբալեզու լինիր 'ի մէջ ընկերացդ, և կարծեր թէ սիրելի ես նց̄ · այլ յորժամ յանդիմանեն զքեզ՝ լինի բան քո ամօթալից։

Ո՛րդեակ՝ որ պայծառ է մտօք՝ իբրև զարեգակն լուսաւո՛ր է · և որ պիղծ է սրտի՛ւ և նենգ է մտօք և խաւար է խորհրդովն, կամ ագահ մտօք՝ այնպիսի մարդն թէպէտ և ունի ինչս բազումս, ունայն է և կենդանի մեռեալ։

Ո՛րդե̃կ՝ յաւուր զոհից քոց առատ բռնէ զձեռքդ, որ աչք մարդոյն 'ի ձեռն քո չինոյ · քանզի ո՛չ հաճի ած̄, և դու 'ի մարդկանէ անարգիս։

Ո՛րդեակ՝ մին ձի՝ որ քո չէ՝ մի հեծնոյր · և կամ յոյժ քաղցեալ իցես՝ հաց՝ որ քո չէ՝ մի՛ ուտեր։

Ո՛րդեակ՝ յայտնեա՛ զխորհուրդ քո բարեկամին քոյ. և յետ քանի մի աւուրց փորձեա՛ զնա, և սակաւ մի կըռուիր ընդ նմա. Թէ որ պահէ զբան քո՚ի սրտի իւրում, և ո՛չ յայտնէ՝ նա սիրելի բարեկամ քո է, զնա սիրեա՛ յոյժ. և Թէ ընդ կռուիլն յայտնէ ըզբան քո՝ նա այնպիսին չէ՛ սիրելի և բարեկամ, փախի՛ր ՚ի նմանէ.

Ո՛րդեակ՝ ագահութի̃ն մայր է ա̃մ չարեաց և ծնուցիչ ա̃մ մեղաց. բայց ողորմութ̃ի ձեռնտու է ա̃մ բարե̃ց:

Ո՛րդեակ՝ որ սիրես զխաղաղութ̃ի, ՚ի դատաստանէ պատրաստ կաց. և որ համապազ յօժարի ՚ի դատաստան՝ նա մայր է ա̃մ մեղաց և չարեաց. յիմարե̃լ է և ո՛չ գիտէ զինչ առնէ:

Ո՛րդեակ՝ զչարախօսութ̃ի զումեքէ մի՛ ասեր և մի՛ լսեր. զի կարէ խոցէ զսիրտ մարդոյն. և ապ̃կանէ զփառք մարդոյն. զի մեծ նախատինք է:

Ո՛րդեակ՝ Թէ կամիս մարդոյ զինչս տալ՝ յաւուր մի՛ պարծենար և մի՛

խոս

խոստանիր· և թէ պարծենաս և չտաս հետ բարեկամին թշնամի լինիս։

Ո՛րդեակ՝ ամբարտաւան մարդն հեռի է և օտար յընտանեաց և ՛ի բարեկամաց իւրոց· և թէ բազում անգամ ջանաս սիրով՝ նա առնու անարգանս անձին իւրոյ, և հեռանայ յընկերացն։

Ո՛րդեակ՝ լա՛ւ է ստանալ ձի սըմբակել և էշ ըստ փարուք , քան թէ ծառայ փախչօղ և սրտատաց ։

Ո՛րդեակ՝ մի՛ երաշխաւոր լինիր բարեկամին քոյ· զի բազում վիշտ կրես մինչև վճարես զպարտս նր։

Ո՛րդեակ՝ մարդ չարախորհուրդ և նախանձոտ , ո՛չ թէ միայն ատելեցն ամենէ զչարութի· այլ ընդուք անձանց հակառակ կոյ։

Ո՛րդեակ՝ լերինք շտեմարանք սառուց են· և նենգաւորք՝ բնակարան չարեաց են։

Ո՛րդեակ՝ մի՛ այլոց կանանց կատարեր զցանկութի քո· զի օտար կինն նման է աղբեր ջրի · որ որքան խմես՝

առաւելագոյն ծառայէիս. և զանուն
վատ ժառանգես։

Որդեակ՝ զի որ իմաստունն է՝ նըման է որպ՟ հուր ՚ի լոյս և ՚ի տապոյ բորբոքի. և ոչ՟ արեգակն ՚ի ճառագայթից երեւի և լուսաւորէ զարարածս. և կամ ոչ՟ առիւծն որ ուժեղութ՟բն գովի. և ոչ՟ բազայն ՚ի խորընթաց առ ՚ի շաչելոյ թեւոցն գովի, եւս առաւել մեծարի ՚ի յաչս թագաւորաց և մեծամեծաց։

Որդեակ՝ առն խոշտանոր ո՛չ գոյ սիրելի երբէք. զի ասէ ՚ի սրտի իւրում թէ՝ կեանքս ո՛չ անցանի, և ռուզակս ո՛չ պակասի. և ո՛չ գիտէ թէ ած՟ տայ այնպիսեաց մահ. և զինչս նր՟ այլոց տայ. և չունենայ անուն
բարի՝ որ յիշեն զնա։

Որդեակ՝ այր անմիտ յորժամ արբենայ, յօժարի ՚ի կռիւ. և կարծէ ՚ի միտս իւր թէ, չկայ մեծագոյն քան զինս. և ո՛չ գիտէ, թէ յորժամ հանդիպի առ ամն՟ քաջ՝ ապականէ զինքն։

Որդեակ՝ ո՟պ հողն մայր է ա՟մ տընկոց. նոյնպէս և արբեցութ՟ին մայր է ամենայն չարեաց։

Որդ՟եկ՝ թէ իշխան ես [illegible] և մարդկ՟ան՝ պահեա՛ զանձն քո ՚ի զեղխութ՟է. վ՟ս զի ՚ի քեզ են հոգք երկր՟աւոր՟ց ա՟մ։

Որդեակ՝ տեսի զգազան կատաղ՟ել՝ որ արձակեցաւ ՚ի վ՟ր իմ՝ և ո՛չ վախեցայ ՚ի նմանէ. հանդիպեցայ թըշնամւոյ իմոյ՝ և ո՛չ յաղթեաց զիս. հանդիպեցայ կնոջ լեզուանւոյ՝ և յաղթեցայ ՚ի նմանէ։

Որդեակ՝ մի լինիր փոյթ իբրև ըզնշենի՝ որ յառաջ ծաղկի և ապա ուտելի, այլ լեր հնազանդ՝ և պտղաբերեա զհեզութիւն։

Որդեակ՝ անկանի անօրէնն վասն չար գործոց իւրոց, և կանգնի արդարն վ՟ս բարի գործոց իւրոց։

Որդեակ իմ նաթան՝ զայս ա՟մ զոր ուսուցի քեզ՝ ՚ի միտ ա՟ռ և կատարեա զա՟մ. և լինիս իմաստուն ՚ի մէջ ընկերաց քոց. և ՚ի յառաջս թագաւոր՟ց երևելի լինիս։

Այս է խրատն՝ զոր ուսուցի որդւոյն իմոյ Նաթանայ. և ես Խիկարս գիտէի թէ՝ զիմ խրատս իմ պահէր 'ի սրտի իւրում. այլ նա ոպ՟ զփոշի ընուս 'ի վ՟ր ելման գետոյ և կորնչի՝ այնպէս արար զխրատս իմ: Յառաջ տուի զտունս իմ նր՟, և զծառայս իմ. զինչս և զապարանս և զիշխանութիւնս իմ. և արարի ատենադպիր Սենեքերիմ արքային իմոյ: Եւ նա մոռացաւ վաղվաղակի զխրատս իմ. և սկսաւ չարիս գործել և առնել անիրաւութիւնս. զծառայս իմ ոչ խնայէր, և զինչս իմ վատնէր. և զբազում խրատս իմ անտես արար:

Եւ ես Խիկարս յորժամ տեսի զչարութիւն Նաթանայ՝ գնացի առ Թագաւորն իմ Սենեքերիմ, և պատմեցի նմա մի ըստ միոջէ զչարութիւն Նաթանայ. և խնդրեցի թուղթ 'ի թագաւորէն, զի մի' իշխեսցէ Նաթան մերձենալ ընչից իմոց: Եւ հրամայեաց թագաւորն՝ որ բերին զՆաթան. և ետուր պատուէր նմա ոչ մերձենալ ընչից իմոց։ Ապա ես խիկարս ելեալ գնացի ՚ի տունս իմ։

Ապա Նաթան սկսաւ մտօք չարիս գործել վա՟ իմ ՚ի դուռն թագաւորին. և խորհեալ շինեաց մօհր մի՝ ըստ նմանութե՟ իմ մօհրին. քանզի յառաջագոյն գիտէր զկերպ մօհրին իմոյ. և փորեաց զիմ անուանս, և կնքեաց ՚ի թղթի միոյ. և գրեալ յիմ բերանէ առ փարաւօն արքայն եգիպտացւոց. որ չարկամ էր ընդ հետ իմ թագաւորին սենեքերիմայ։

Ապա էր գրեալ այսպէս։

Խիկար իմաստնասիրէ ողջոյն ընդ քեզ՝ փարաւօն արքայ. յորժամ գիրս առ քեզ հասանի՝ փութով ժողովէ զզօրքդ, և եկ ՚ի դաշտն արծրունեաց, որ ՚ի հրատից ամսոյն ի̅ է̅ լինի. և առցես զսենեքերիմ թագաւորն առանց պատերազմի։

Ապա յորժամ գրեաց Նաթան այսպէս՝ խորհեցաւ և գրեաց թուղթ մի այլ նման սորա՝ իմ Թագաւորին բերնէն առ իս։

Այս էր գրեալ այսպէս։

Սենեքերիմ արքայէ ողջոյն ընդ քեզ սիրելի և իմաստուն իմ Խիկար․ յորժամ գիրս առ քեզ հասանի՝ փութով ժողովէ զզօրքդ բազում, և ե՛կ 'ի դաշտն արծրունեաց, որ 'ի հրոտից ամսոյն ԻԵ լինի․ զի պատերազմեսցեն ընդ հետ զօրք փարաւօնի․ քանզի դեսպանք փարաւօնի եկեալ են առ իս։ Այն յորժամ գրեաց այսպէս՝ գաղտնաբար տարեալ ետուր հաւատարիմ մարդոյ, որ բերեալ հասուցէ 'ի ձեռս իմ Խիկարայ։ Այն ես Խիկարս յորժամ առի զթուղթն՝ բացի և կարդացի՝ զոր գրեալն էր․ և վաղվաղակի ժողովեցի զօրք․ և կատարեցի ըզհրամայեալն 'ի Թագաւորէն անմեղութե, և ոչ գիտացի զչարութի Նաթանայ՝ որ առ իս։ Այն զմիւս թուղթն՝ զոր գրեալ էր իմ բերանէն առ փա րա՟ծն արքային , զայն կնքեալ և տարեալ ձգեաց գաղտնաբար 'ի դուռն դարպասի թագաւորին : Ա՟ գտեալ մի ոմն 'ի ծառայից զթուղթն՝ տարեալ ետուր 'ի ձեռն սենեքերիմ արքային իմոյ : Ա՟ իբրև բացեալ կարդացին զթուղթն առաջի թագաւորին՝ զահիհարեալ լի՛ եղև տրտմութե՟ , և ոչ գիտէր , զինչ առնէր խիկարին :

Յայնժամ Նաթան՝ որ դպիր էր թագաւորին՝ եմուտ առ թագաւորն և երկրպագեաց և ասէ : Ողջ լեր արքայ և տէր իմ · զի հայր իմ խիկար ոչ գիտաց զերախտիքս քո , և կամի խափանել զթագաւորութի̅ քո · և եթէ ոչ հաւատաս բանիս՝ կացցուք մինչև որ կատարի թի՟ն 'ի հրոտից ի̅ է̅ · և ելցուք և գնասցուք 'ի դաշտն արծրունեաց · և տեսցուք աչօք մերովք զերախտամոռութի̅ խիկարայ՝ որ առ քեզ :

Յայնժամ սենեքերիմ թագաւորն

երկմտեալ կայր տրտմութբ՟՝ մինչև եղև ՚ի հրոտից ամսոյն ԻԷ։ Եւ ես խիկարս արարի զզօրս իմ. և եկեալ բնակեցայ ՚ի դաշտին արծրունեաց։ Եւ ելեալ Թագաւորն սենեքերիմ գայր ՚ի դաշտն արծրունեաց փորձել զիս։ Եւ ես խիկարս յորժամ տեսի զզօրքն սենեքերիմայ՝ խաղմ արարեալ խաղացի ՚ի մէջ դաշտին, դէմ յանդիման զօրաց նց՟ պատերազմիլ. քանզի կարծէի, թէ զօրք փարաւոնի է։

Յայնժամ տեսեալ սենեքերիմ ըզզօրքն իմ, փախստական եղև. և ես գնացի զօրաց փոքր ինչ յետև նր՟՝ և ոչ գտի. դարձայ և եկի ՚ի յօթևանս իմ. և ուրախացեալ մտօք իմովք՝ թէ փախուցի զփարաւոն զօրօք իւրովք։ Եւ յորժամ գնաց սենեքերիմ փախստական ՚ի դարպասն իւր՝ խելագարեալ լի՛ տրտմութբ՟, և ոչ գիտէր զինչ գործէր խիկարս՝ որ ըմբռնէր։

Յայնժամ եմուտ Նաթան առ Թագաւորն՝ ողջունեաց և ասէ․ ահա տեսար ամօթ զերախտամոռացութիւն խնկարոյ․ այժմ մի՛ տրտմիր, զի ես ածեմ զհայրն իմ խնկար առաջի քո։ Ապա ասէ սենեքերիմ ցնաթան, թէ դու բերես զխնկար, և տաս 'ի ձեռս իմ, զոր ինչ խնդրեսցես՝ տաց քեզ։ Ապա երկրպագեալ Նաթան՝ ել արտաքս և գնաց։ Ապա գրեաց թուղթ մի 'ի թագաւորէն բերնէն․ և ետուր ցհաւատարիմ մարդ մի ասելով թէ՝ տարեալ տացես զայս 'ի ձեռն խնկարայ, զոր էր գրեալ այսպէս։

Սենեքերիմ արքայէ ողջոյն ընդ քեզ սիրելի և իմաստուն իմ խնկար․ քանզի յոյժ հաճոյ թուեցաւ թագաւորիս սենեքերիմայ զերախտիքն քո․ և զի փախեան զօրք փարաւոնի յերեսաց քոց․ այժմ տուր հրաման զօրաց քոց գնալ խաղաղութեամբ 'ի տունս իւրեանց․ և դու ել և եկ, զի ուրախ եղէց ընդ քեզ։

Ապա ես խիկարս յորժամ կարդացի՝ ուրախ եղէ յոյժ· և տուի հրամանս զօրաց իմոց գնալ ՚ի յօթևանս իւրեանց։ Ապա ես ելեալ գնացի տեսանել, և ուրախ լինել ընդ թագաւորին իմոյ։ Ապա յորժամ հասի միամտուբ՟ ՚ի դուռն թագաւորին· տեսեալ զիս զինուորացն՝ ըմբռնեալ տարան ածին առաջի թագաւորին։ Ապա յորժամ ետես թագաւորն զիս՝ լի՛ եղև տրտմութբ՟· և հրամայեաց որ ետուն զայն թուղթն ՚ի ձեռս իմ։ Ապա ես երբ բացեալ կարդացի՝ նա յայնժամ կապեցաւ լեզուս, և գնաց իմաստութիս, և ոչ գիտէի, զի՛նչ պատասխանեմ սենեքերիմայ։ Նամլ ողոքանօք ասացի՝ ա՛րքայ և տէր իմ, մի՛ ՚ի զուր դատեր զիս, զի չունիմ խապար ՚ի յայս բանէս, այլ՝ անպարտ եմ։ Ապա ո՛չ եդ ունկն աղաչանաց իմոց· այլ հրամայեաց սպանանել զիս։

Յայնժամ նաթան քեռ որդին իմ կապեաց զձեռս ՚ի յետս փոխա նակ բարի խրատոյն իմոյ՝ զոր յառաջին տուի· թէ որդեակ՝ զարձակեալն մի՛ կապեսցես· նա յառաջ զիս կապեաց։ Ապա ես դարձեալ աղաչեցի թագաւորին իմոյ թէ՝ տուր զիս 'ի ձեռն աբուսմայքոյ զօրապետին· և նա տարեալ զիս 'ի տուն իւր՝ և 'ի վր շէմանց իւրոց կատարէ զհրամանս քո, և զիս գլխատէ· և զգլուխն իմ ճ կանգուն հեռի թաղէ 'ի մարմնոյս։ Ապա հրամայեաց թագաւորն աբուսմայքոյ կատարել այսպէս՝ զոր խնդրեցի։ Ապա կալեալ զիս աբուսմայքոյ տանէր 'ի յրապանումն· և ես Խիկարս ղրկեցի գաղտնաբար խապար առ աբեստամն կինն իմ, թէ պատրաստէ՛ ռ աղջիկս, և արա կերակուրս ազգի ազգի· և յորժամ եկեսցեն 'ի յրապանումն իմ, արա ընթրիս, և բեր զայն ռ կոյս աղջկունս, որ լացեն զմահն իմ· և կինն իմ վաղվաղակի կատարեաց զհրամանս իմ։ Ապա յորժամ գնացաք հասաք 'ի տունս իմ, խնդրեցի աղաչանօք յաբուսմաքայ զօրապետէն և ասացի, Տո՛ւր ինձ ըզհրամանս, որ առնուցում ընթրիս առ սիրելիս և առ բարեկամն իմ փոքր ինչ · քանզի այլ ո՛չ մնամ կենդանի։ Նա̂ ասաց աբուսմաք՝ տա՛ր որչ̃ և կամիս · և արարի ընթրիս մեծ սիրելեաց իմոց, որք եկեալ էին 'ի պատանուամն իմ · և բերի կերակուրս զանազան, և զգինիս անապակս, նաև զհազար աղջկունս՝ որք լացցեն առաջի նց̅ զմահն իմ։ Նա̂ նոքա 'ի սաստիկ տրամութե̅ն և արբեալ 'ի գինւոյն՝ արբեցան ամենեքեան, և անկեալ քնեցան։ Նա̂ ես խիկարս կայի կապեալ երկաթեօք · և գնացեալ զարթուցի զաբուսմաք զօրապետն, և ողոքանօք աս̅ցի նմա։ Գիտե՞ս եղբայր՝ զի այն ժամանակն որ երբ բարկացա̂ւ թագա̂ւորն 'ի վե̅ր քո, և ես 'ի ձեռս իմ, թէ տա՛ր սպա՛ն զաբուսմաք, և ես առե̅լ տարայ զքեզ, և ո՛չ սպանի, այլ՝ պահեցի գաղտ ·

և եկեալ առաջի թագաւորին թէ՝ սպանի զաբուսմաքն։ Այլ յորժամ անցաւ փոքր ժամանակ 'ի վ̅ր̅, գընաց բարկութիւն թագաւորին, և փոխման եղև սպանանելն զ.քեզ։ Այլ ասաց՝ աւ՛աղ քեզ ա՛բուսմաք, զի դու կենդանի պիտէիր։ Այլ ես երբ լուայ զայս 'ի թագաւորէն՝ եկեալ հանի զ.քեզ, և տարայ առաջի թ̅գ̅ւորին, և բազում պարգևս առի։ Այժմ աղաչեմ զ.քեզ, արասցես փոխարէն առիս. և կայ 'ի ներքև չէմանց իմոց հոր մի մեծ. ձգեա՛ զիս 'ի հորն գաղտնաբար. և ես ունիմ ծառայ մի մահապարտ. քանզի է մարդասպան. և ահա կապեալ կայ 'ի բանտն. և ունի զնմանութիւն իմ. հագո՛ նմա զհանդերձս իմ, և զարթո՛ զժողովուրդ իմ. և շուտով կտրեա՛ զգլուխն. և տար թո՛ղէ զգլուխն ձ̅ կանգուն հեռի 'ի մարմնոյն։ Այլ եղև ունկընդիր աբուսմաք խնդրուածաց խիկարիս, և արար այնպէս. և գնաց առ

Թագաւորն թէ՝ սպանեցի զխիկար. և յոյժ ուրախացաւ Թագաւորն 'ի սպանումն իմ:

Եւ ապա գնաց Նաթան խնդրել 'ի Թագաւորէն հովուելոյ զստացուածս իմ. և Թագաւորն հրամայեաց տալ Նաթանայ զամ ինչս իմ: Եւ գայր Նաթան 'ի տունն իմ հանպզ. ուտէր և ըմպէր և աղտեղէր զծառայս իմ և զաղախնեայս իմ. և կամէր չարիս գործել ընդ հետ կնոջ իմոյ. և կինն իմ ոչ հնազանդէր կամաց նր: Եւ ես զամն լսէի ականջօք իմովք. զձայնն գուսանաց. և զպադշատիլն ընդ կնոջ իմոյ. և խնդրէի օր նմա, և ոչ գտանէի:

Եւ յորժամ անցաւ ժամանակ մի՝ լուեց փարաւօն արքայն եգիպտացւոց, եթէ սենեքերիմ արքայն սպանեց զխիկար, յոյժ ուրախացաւ: Եւ առաքեաց փարաւօն գիր առ սենեքերիմ: Եւ էր գրեալ այսպէս:

Փարաւօն արքայէ ողջունիւ ծանի՛ր

նի՛ր սե՛նեքերիմ Թագաւո՛ր․ քանզի կամիմ շինել դարպաս մի ՚ի յօդս երկնից անսատուն և անգերան․ ղրկէ՛ ինձ ճարտար մէյմար մի, որ եկեալ շուտով կատարէ զհրամանս իմ․ և թէ ո՛չ ղրկես՝ գամ բազում հեծելօք, և աւե՛ր ածեմ զերկիրդ․ և տանում ՚ի քէն հարկ։ Եւ յորժամ բերեալ ետուն զթուղթն ՚ի ձեռն սենեքերիմայ՝ բացեալ կարդաց զնա․ և իսկոյն զարհուրեցա՛ւ բոլոր անձն նր՟ ՚ի բանից փարաւօնի։ Եւ կոչէր զմեծամեծս և զիմաստունս եղդպիրս և ասէ՝ քանզի սպանեցաք զխիկար, ո՞վ կարէ տալ պատասխանի փարաւօնի։ Եւ ասացին մեծամեծքն՝ արքայ յա՛ւիտեան կաց․ քանզի ահա կայ յորդէգիր խիկարայ նաթան՝ որ ուսա՛ւ հանճարեղ և իմաստուն է քան զխիկար, և նա կարէ տալ պատասխանի գրոյս։ Եւ հրամայէց թագա՛ւորն կոչել զնաթան․ և իբրև եկն՝ ետուն զթուղթն ՚ի ձեռն և կարդաց։

Նաէ

Ասէ Թագաւորն՝ կարծեմ ես տալ պատասխանի փարաւոնի․ և ասէ Նաթան՝ այս անհնարին է 'ի մարդկանէ։ Յայնժամ տարակուսեալ սենեքերիմ կոծէր զանձն իւր ասելով՝ աւաղ քեզ խի՛կար իմաստուն իմ, զի սպանեցաք զքեզ․ այժմ ոչ կարեմք տալ պատասխանի, և կրեմք վիշտ բազում 'ի նմանէ։ Ապա եթէ ոք բերէ զքեզ կենդանի առաջի իմ, խի՛կար՝ տաց նմա կշռանօք քո ոսկի։

Ապա լուեալ աբուսամիք՝ երկիրեպագ Թագաւորին և ասէ՝ ողջ լեր արքայ իմ․ զի Թէպէտ կոծաս 'ի վր սպանման խիկարայ, այլ եթէ ոք բերէ զխիկար կենդանի առաջի քո՝ փոխանակ նր սպանանես զնա։ Ապա ասէ Թագաւորն՝ ոչ սպանանեմ զնա, այլ տամ պարգևս աղէնս նմա։ Ապա երկրպագեալ աբուսամիք Թագաւորին՝ եկեալ փաղփաղակի եհան զնա 'ի հորէն․ և տարեալ կացոյց առաջի սենեքերիմայ։ Ապա յորժամ ետես Թա գաւորն զիս կենդանի՝ յարեաւ յաթոռոյն, և անկաւ զպարանոցաւս իմով, և համբուրեաց զիս և ասաց. ո՛վ խիկար՝ մեռեալ էիր և կենդանացար։ Եւ յոյժ ուրախ եղև թագաւորն. և ետուր պարգևս մեծամեծս աբուսմաքայ զօրապետին. և հրամայեաց պատուել զիս աւուրս խ. և յետ լրման խ աւուրց՝ հրամայեաց թագաւորն բերել զիս առաջի իւրն. և ետուր կարդալ ինձ զթուղթն փարաւոնի։ Եւ յորժամ կարդացի ես խիկարս՝ ասացի առ թագաւորն՝ մի՛ տրտմիր և մի՛ կոծար, զի ես երթամ և տամ պատասխանիս փարաւոնի, և առնում հարկս ՚ի նմանէ և գամ։ Եւ իբրև լուաւ թագաւորն իմ, յոյժ ուրախ եղև ՚ի բանից իմոց։ Եւ ապա ես խիկարս՝ առաքեցի պատուէր առ աբեստան կին իմ, թէ բունէ բ ձագս արծուոյ. և մանել տուր պարան մի երկայն. և բերել տուր բ ծծկեր տղայ. և բ կին որ պահեն զտղայքն։

Տէ՜ր ուսա՛ տղայոցն կանչել՝ կա՜ւ ծեփ աղիւս բերէք · և ամէն օր կապէ զերկու տղայքն ՚ի վ̄ր արծու՜ոյ ձագին, և թռո՛ ՚ի յօդն պարանա՜ւն, և իջո՛ ՚ի վայր, մինչև կատարեալ ուսանին զելանելն և զիջանելն և զբարբառելն։

Տէ՜ր կինն իմ իմաստուն էր, և փութով կատարեաց զհրամայեալն իմ։

Տէ՜ր ես առի հրաման ՚ի թագաւորէն իմոյ · և ելեալ գնացի ՚ի տուն իմ։

Տէ՜ր առի զերկու տղայքն և զձագ արծու՜ներոյն՝ և եդի ՚ի սնտուկ մի, և ելեալ գնացի առ փարա՜ւօն արքայն։ Տէ՜ր յորժամ հասայ յեգիպտոս՝ իջևանեցայ ՚ի տուն մի, և թողի անդ զսնտուկն ՚ի տանն, յոր իջևանեալ էի · և ես գնացի առաջի փարա՜ւօնի և երկրպագի նմա։

Տէ՜ր ասէ ցիս փարա՜ւօն · ի՞նչ մարդ ես դու · կամ ուստի՞ գաս։ Տէ՜ր ես ասացի · ա՛րքայ յա՜ւիտեան կաց · ահա ծառայ քո է, որ առաքեաց սենեքերիմ արքայն կատարել զհրամանս քո. և բերեալ եմ ընդ իմ ճարտար մէյմար, որ շինէ դարպաս ՚ի յօդս: Ապա ասաց փարաւոն. զի՞նչ է անուն քո: Ապա ես ասեմ, ապակոյ է իմ անունն: Ապա հարցեալ ցիս փարաւոն թէ՝ զի՞նչ պէտք է մեզ մարդոյ ՚ի պէտս դարպասին: Ապա ես ասացի ցնա՝ բերել տուր կաւ ծեփ աղիւս: Ապա հրամայեաց թագաւորն՝ որ բերին վաղվաղակի: Ապա ես խիկարս գնացի կապեցի զերկու տղայքն ՚ի յերկու արծուոյ ձագին. և թուուցի դէպ ՚ի յօդս: Ապա տղայքն աղաղակէին կանչելով, կաւ ծեփ աղիւս բերէք, որ շինեմք զդարպասն: Ապա ոչ ոք կարէր հանել ինչ ՚ի վեր: Ապա ես ասեմ, հանեցէք, զի մի՛ դատարկ մնան: Ապա տեսեալ զայս զօրքն փարաւոնի՝ փախեան և անկան ՚ի դարպասն. և պատմեցին փարաւոնի զսքանչելեան իմ: Ապա ելեալ փարաւոն ՚ի տես և աղաղակ տղայոցն ՚ի յօդն. և զարմացաւ յոյժ, և ասաց ՚ի մտի իւրում թէ՝ ա՛մ շատ իմաստութե̄ լաւ է քան զխիկար · և ո՛չ գիտէր թէ՝ ես եմ խիկարն։ Յա՟ մտայ առ թագաւորն, և երկիրպագի նմա։ Յա՟ ասէ ցիս փարաւոն · երդմնեցուցանեմ զ.քեզ, զի ասես ինձ զըստոյգն · ո՛վ ես դու։ Յա՟ ասացի ցնա, ես եմ խիկարն։ Յա՟ ասէ փարաւոն՝ ո՛վ թշուառական, կենդանացար։ Յա՟ դարձեալ ասէ · ո՛վ իմաստուն խիկար մեկնեա՛ ինձ զայս թէ՝ զինչ է սիւնն այն ՚ի վ̄ր անի · մայրք երկոտասան ՚ի վ̄ր մայրեաց · անուանք լ̄ ՚ի վ̄ր անուանց · սուրհանդակք բ̄՝ մինն սև և միւսն սպիտակ։

Պատասխանեցի և ասացի · սիւնն՝ տարին է · մայրք երկոտասան՝ ամիսք տարւոյն է · անուանք լ̄՝ աւուրք ամսոյն է · սուրհանդակք բ̄՝ տիւն և գիշերն է։ Յա՟ դարձեալ ասէ փարաւոն · ո՛վ խիկար մանէ ինձ պարան աւազէ։ Յա՟ ես գնացի ծակի յորմն պատի միոյ դէմ յարևերը · և՚ի ծագել արևուն , անկաւ շողն ՚ի ներս · և ես առի աւազ և փոշի Ե ափս , և տայի դէմ արեգական , որ տանէր ոլոր ոլոր ծակէն ՚ի ներս · և ես կանչէի՝ կծեցէ՛ք զպարան շուտով ։ Ապա զահիհարեալ փարաւօն ապուշ մնաց · և կոչեաց զիս առ ինքն՝ ետուր ինձ պարգևս ազնիւս և հարկ Թագաւորին իմոյ , և շնորհակալ եղև ՚ի Նմանէ ։ Ապա ես Խիկարս եղէլ եկի առ սենեքերիմ Թագաւորն իմ , և անկեալ համբուրեցի զոտս Նր · և պատմեցի միըստմիոջէ զպատասխանիսն փարաւօնի · այլև զառաջին գրրոյն զանմեղութիւն իմ ։ Ապա յորժամ լուաւ զայս ամ , յայնժամ յոյժ ուրախ եղև սենեքերիմ ասելով · խիկար իմաստուն իմ , այժմ ցնծութ ուրախ եմ ՚ի կենդանութն քո · և զոր ինչ խնդրես յինէն՝ տաց քեզ ։

Ապա ես Խիկարս շնորհակալ եղէ յարքայէս իմմէ և ասացի · ոչ է պիտոյ ինձ գանձս կամ պատիւս , բայց միայն զայս ինչ խնդրեմ 'ի քէն · զի ըզնաթան քեռ որդւոյն իմ՝ որ է որդեգիր իմ և աշակերտ՝ հրամանաւ քո տացես ինձ · զի ուսումն այլ կայ պակաս, զայն ևս ուսուցանեմ՝ որ լինի կատարեալ։ Այլ հրամայեաց թագաւորն տալ զնաթան 'ի ձեռս իմ · և ասէ, զոր ինչ կամիս՝ արա դմա։ Այլ ես կալայ ըզնաթան, և տարայ 'ի տունս իմ; և սկսայ ասել ցնա այսպէս։ Որդեակ իմ նաթան՝ զառաջին խրատն՝ զոր տուի քաղցրութեամբ՝ ոչ պահեցեր 'ի սրտի քում և կորուսեր, արդ՝ այժմ ուսուցանեմ դառնութեամբ։ Այլ կապեցի զնա երկաթի կապանօք, և եդի 'ի պարանոց նորա է ձ լիտր երկաթ, և յանձնեցի զնա բենլիար ծառային իմոյ · և հրամայեցի առնուլ թուղթ և թանաք 'ի ձեռին իւրում, զի 'ի մտանելն և յելանելն իմ՝ զոր ինչ առնիցեմ նաթանայ՝ գրեսցէ։ Այլ ետու պատուէր նմա, զի զհաց և զջուր չափով տացէ · այնքան՝ որ ոչ մեռանի և ոչ զուարթանայ։

Ապ՟ նախ և յառաջ զարկի բիր ՚ի թիկունս նորա և ասացի։

Որդեակ իմ Նաթան՝ մարդոյ ականջքն եթէ ոչ լսէ, զթիկունսն ծեծելով լսեցուցանեն։

Որդեակ իմ Նաթան՝ յաթոռ վե՟ց նստուցի զքեզ · այլ դու յաթոռոյ իմոյ ընկեցեր զիս և կործանեցեր։

Խօսեցաւ ընդ իս Նաթան և ասէ · զի մրդ ուրացար զքեռ որդին քոյ։

Ապ՟ ես ասացի · մրդ՟ ոչ ուրացայց։

Որդեակ՝ զի եղեր ինձ որպ՟ կարիճն այն՝ որ եհար զասեղն, որ ասեղին ծայրն չար էր քան զիւրն · և դրձ՟լ՝ իբրև զայն՝ որ եհար զոտից ըղտուն · և նա հարեալ զթաթն ՚ի վ՟ր կարճին՝ սատակեաց զնա։

Որդեակ՝ զի եղեր ինձ որպ՟ վայրենացեալ եզն · որ էարկ զոտճն, և անկաւ վարոցն, և վիրաւորեցաւ իւր ոտքն։

Որդեակ՝ զի եղեր ինձ որպ՟ այծն այն՝ որ ուտէր զտորոնն · և ասէր՝ ես ՚ի կենդանութե՟ իմում ուտեմ զքեզ։

Թո՛ղ յետոյ հանեն զքո քօղն, և ներկեն զմորթին իմ.

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այրն այն՝ որ ձգեաց նետս դէպ ՚ի յերկինս․ թէպէտ ոչ կարաց հասուցանել, այլ զանօրէնութիւն շահեցաւ, և դարձաւ նետն ՚ի գլուխն իւր․ նոյնպէս և դու կամեցար սպանանել զիս, այլ անմեղութիւնս իմ ապրեցոյց զիս։

Ո՛րդեակ՝ զի թէ ագի խոզին ութն կանգուն երկայն լինի՝ ՚ի տեղի ձիուն ոչ կարէ լինել։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս արջն այն՝ որ հանդիպեցաւ իշոյ միոյ, և ասաց ողջոյն ընդ քեզ․ և ասէ էշն՝ այդ ողջոյնդ՝ իմ տիրոջս պարանոցն լինի՝ որ արձակեաց զիս ՚ի մսրէն, որ եկի և հանդիպեցայ քեզ, և տեսի զքո դէշ երեսդ չար։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս որոգայթն այն՝ որ թաղեալ կայր ՚ի յաղբն․ և եկեալ ճնճղուկ մի ասէ․ զինչ կայցես աստ․ ասէ ակնատն՝ աղօթս առ նեմ առ Ա՟ծ. ասէ ճընճղուկն՝ զինչ է այդ ՚ի բերանդ. ասէ ակնատն՝ քաղցելոց հաց. և վազե՟ց ճընճղուկն առնուլ զհացն ՚ի յակնատէն. և ակնատն անկաւ ՚ի վիզն ճընճըղկին. և ասէ ճընճղուկն՝ թէ այդ է քաղցելոց հացն. ապա և Ա՟ծ այսպէս լսէ աղօթից քոց:

Որդեակ՝ զի եղեր ինձ որպ՟ շունն այն՝ որ դողայր ՚ի ցրտոյն, և մտաւ ՚ի հնոց բրտին. և յորժ՟մ տաքացաւ՝ սկսաւ հաչել ընդ երես բրտին:

Որդեակ՝ զի եղեր ինձ որպ՟ շունն այն ագահ, որ ունէր հաց մի ՚ի բերանն, և երթայր յեզեր գետոյն. և տեսեալ շուն մի այլ ՚ի մէջ ջրին՝ և հաց մի ՚ի բերան նո՟ր՝ ձգեալ զիւր հացն ՚ի բերնէն, և անկաւ ՚ի ջուրն, զի առցէ զայնու հացն. և իբրև հասաւ ՚ի մէջ գետոյն, ո՛չ զշունն եգիտ և ո՛չ զհացն. այլ խեղդեցաւ շունն՝ և զրկեցաւ յիւր հացէն. նոյնպ՟ և դու ըզհացն իմ խըլել կամեցար՝ և զրկեցար ՚ի քո հացէն:

Ապա դր՟ձ՟լ նաթան աղաչանօք ասէ առ իս · մեղայ քեզ հայր՝ այլ չգործեմ, զոր ինչ գործեցի · մի՛ չ՟րչար տանջեր զիս ։ Ապա ես ասացի՝ ահա ասեմ քեզ օրինակ մի · զի որպ՟ ծառն այն՝ որ բուսն՟լ էր յեզր գետոյ միոյ · և մարդ մի ծառայէր նմա · և յորժամ հասանէր պտուղն՝ թափէր ՚ի գետն և կորնչէր և երբ գայր տէրն՝ ո՛չ գտանէր զպտուղն · և աշխատեցա՜ այրն այն ի՟ և գ՟ տարի · այլ ՚ի հ՟սնիլ պտղոյն թափէր ՚ի ջուրն, և ո՛չ շահէր ՚ի նմանէ · և ապա կտրե՟ց զծառն, և ձգե՟ց ՚ի ջուրն ասելով · այսքան աշխատեցայ, զի՞նչ շահեցայ, որ այսուհետև գտանեմ ։ Նոյնպ՟ և դու եղեր ինձ · զի յառաջագոյն այսչափ խրատս տուի քեզ՝ և ո՛չ լուեցիր · այժմ զի՞նչ պիտոյ լինիս · արժանի ես յայդ չարչար՟նացդ՝ մինչև մեռանիս ։ Ապա սպանի զնա, և բարձա՜ չարն ՚ի միջոյ, և եղև խաղաղութ՟ի ։ Մարդ զի՛նչ մարդ՝ որ բարւոյն չար հատուցանէ, իբրև զնաթան կորնչելոց է ։ Յորմէ փրկեսցէ զմեզ ք՟ս ա՟ծ մեր · և նմա″ ։

* Պատմութիւն Րուշջյան և Ս՝անջյան. Եւ հարցմունք նոցա ընդ միմեանս։

ԱՅՐ ՄԻ ԷՐ ՄԵԾԱ-տուն և իշխան ՚ի քաղաքի մի. և ունէր անչափ գանձ։ Ոսկի և մարգարիտ անգին. և պատուական ակունք, որ չկայր յայն աշխարհն քան զնա մեծատուն։ Եւ ինքն ծերացեալ էր՝ և զաւակ ոչ ունէր. և հանապազ աղաչէր զա̅ծ վ̅ս զաւակի։ Եւ ա̅ծ ետ նմա որդի աննման և գեղեցիկ։ Եւ երբ մեծացաւ տըղայն՝ ետ զնա հայրն յուսումն իմաստասիրութե̅ն։ Եւ նա ուսաւ զա̅մ ի-

մաս

մատատախրական բանս․ և էր պատերազմող անյաղթ։ Բայց յետոյ ուտել և խմել անկաւ․ և հատոյց՝ ըզգանձ հօրն և մօրն․ և հայրն ու մայրն մնացին դատարկ, որ այլ իսկի բնաւ իրք չմնաց։ Ասաց որդին ընդ հօրն և մօրն․ կամիմք, որ հեռանամք յայս երկրէս, և երթամք հանց երկիր՝ որ չճանաչեն զմեզ․ և զհպարտու՟ին յետ դնեմք, ու մուրամք և ապրիմք․ ո՛չ մեք արտմիմք, և ո՛չ մեր չար կամն ուրախանայ ՚ի վ՟ր մեր։ Ասացին ծնօղքն, դու գիտես ո՛ր դեռակ։ Առաւ մանուկն զհայրն և զմայրն, և գնաց ՚ի հռօմ քաղաք։ Եւ կայր ՚ի քաղաքին յայնմիկ թագաւոր մի բարի և իմաստուն․ մտան ՚ի քաղաքն՝ և իջան ՚ի տուն մի։ Եւ այն թագաւորն յորս էր ելեր․ և երբ եկաւ թագաւորն ՚ի յորսուն՝ նա մտաւ մանուկն առ թագաւորն, եդ ծունր և կանգնեցաւ։ Եւ սկսաւ թագաւորն խօսիլ ընդ մանկանն և ասաց· զի՞նչ խնդրես յինէն, որ պարգեւեմ քեզ։ Եւ մանուկն· Թագաւոր՝ յաւիտեան կաց· ես է̅ ծառայ ունիմ ծախու այր և կին· խնդրեմ, զի գնես զնոսա։ Եւ Թագաւորն· բեր, և ես գնեմ։ Գնաց մանուկն առ հայրն և մայրն· և ասաց ը̅ ծնողացն թէ՝ ինչ որ պատահէ ինձ՝ կամիմ հանց բան առնել՝ որ դուք այլ ապրիք, և ես այլ։ Ասացին ծնօղքն, դու գիտես որդեակ։ Ասաց մանուկն· կամիմ ծախել զձեզ ՚ի յայս Թագաւորիս, որ հանիք բարութե̅· և ձեր գնովն ինձ բարի լինի· և ես ջանամ շուտով ազատել զձեզ· դուք ինչ կու հրամայէք։ Ասացին ծնօղքն, դու գիտես որդեակ։ Ապա էառ մանուկն զհայրն և զմայրն, և գնաց առ Թագաւորն։ Ասաց Թագաւորն մանկանն թէ՝ քանի՞ ծախես։ Եւ մանուկն առ Թագաւորն· տո՛ւր ինձ այս կին ծառայիս գին՝ աղէկ ձի և սլէհ իւր սարքն։

Ան այդ մարդոյն գլխն՝ տուր ինձ աղէկ հալաւ և զգեստ պատուական։ Հրամայեց թագաւորն՝ զինչ որ մանուկն խնդրեց իւր ծառայիցն գլխն, որ ըլիակատար ետուն զամէնն. և թուր մի ոսկի գօտուով։ Ան էառ մանուկն զամ, զոր պարգևեաց նմա թագաւորն։ Ապա ասէ թագաւորն մանկանն. այլ ինչ կուզես յինէն՝ խնդրեա՛, որ տամ քեզ։ Ասէ մանուկն. Ճ փլօրի այլ խարճլըխ տուր։ Հրամայեաց թագաւորն և տուին։ Դարձեալ ասէ թագաւորն. այլ ինչ կուզես յինէն։ Ասէ մանուկն. հրաման տուր ինձ, որ խօսիմ ընդ քո ծառայիցն՝ որ յինէ գնեցեր, որ զիւրեանց օրհնութիւն առնում։

Հրամայեաց թագաւորն. գնա՛ և խօսեա՛ց։ Ան իմացաւ թագաւորն, որ իւր ծնողքն էին։ Դնոց մանուկն, և անկաւ ՚ի յոտս ծնողացն և ասէ. մի՛ հոգայք, թէ ած կամենայ, զձեզ շուտով կազատեմ։ Ան ծնողքն օրհնեցին զզաւակն իւրեանց։

Եւ մանուկն յիշեաց զա̃ծ, և մեկնեցաւ 'ի ծնողացն լալով. և գնաց գ̃ օր և գ̃ գիշեր 'ի մեծ դաշտ մի։ Եւ 'ի գնալն՝ հանդիպեցաւ ընտիր մանուկ մի. բարևեցին զմիմեանս, և ընկերեցան 'ի ճանպ̃րհին։ Եւ երբ որ ընկերեցան՝ նա միւս մանուկն իմացաւ զայս մանկան խօսքն, որ ըզհայրն և զմայրն ծախեր էր։ Եւ ասաց նմա. գիտացի՞ր եղբայր՝ որ իմ թագաւորն զիս խիստ կու սիրէր. և թուղթ աւետեաց ետ, որ տանիմ առ կղզեաց թագաւորն, և առնում պարգևս մեծամեծս. այլ տեսանեմ զքեզ, զի դու խելօք մանուկ ես, և լաւ ձիաւոր. քան զիս. առ ըզթղթերդ, և դու տար այն թագաւորին. զի քեզ շատ բարիք կու պարգևէ. զինչ որ ա̃ծ ինձ նասիպ արերէ՝ քեզ լինի. և ես յայս դաշտս կու կենամ, մինչև որ դու գաս առ իս։ Առաւ մանուկն զայն թղթերն, և 'ի սէկէքէսան եդիր, և գնաց 'ի ճանապարհն իւր 'ի մեծ դաշտ մի։

Եւ յանկարծակի յիշեց զհայրն ու զմայրն, եւ շատ ելաց. եւ ՚ի շատ հոգոցն ննջեաց ՚ի վր ձիոյն. եւ ձին ՚ի ճանապարհէն ելաւ, եւ կորոյս ՚ի քնոյն զճանապարհն։ Եւ յանկարծակի զարթեաւ ՚ի քնոյն. եւ էր ծարաւել ինքն եւ ձին. եւ ջուր ոչ կայր. այլ՝ մոլորել ՚ի շուրջ գայր։ Եւ գտաւ ջրհոր մի հին ժամանակաց. եւ ՚ի ծարաւոյն կամէր ՚ի ջրհորն անկանել. ապա եհան զսէկլէքէսան՝ որ զթղթերն ՚ի մէջն էր դրեր, եւ կապեաց պարան, եւ եհան ջուր. խմեց ինքն, եւ խմցոյց իւր ձիոյն, եւ պահ մի հանգեաւ։ Եւ ապա ասաց ՚ի միտս իւր թէ՝ կարդամ զայս թղթերս, եւ սկսաւ կարդալ։

Եւ էր գրած այսպէս։

Այս անուն կղզեաց թագաւորի ողջոյն սիրոյ. գիտացիր եղբայր, որ այդ թղթաբերդ անհաւատ մարդ է, եւ մեզ նենգաւոր. դա մեծ էր առ մեզ, եւ ամ գանձի հատուցնող. դա ելաւ առ դուստր իմ, ու մեղս գործեաց.

ծեաց. և ես կամեցայ զինքն կորուսանել. այլ՝ պատրաստեցի քեզ, որ մարդ զմեր խախքութեն չիմանայ. և առաքեցի առ քեզ, որ կորուսանես զինքն,
թէ զմեր սէրն կուզես:

Կարդաց և իմացաւ մանուկն, որ ի վերայ իւր գալոց էր մահն. պատառեաց զթղթերն, և գոհացաւ զԱստուծոյ. և օրհնեաց զիւր ծնօղքն, որ զինքն ուսումնացած էր արարին, զի գիտութեամբն իւր ապրեցաւ. և աղաչեաց զԱստուած, որ զճանապարհն գտանէր: Եւ մոլորեալ շուրջ գայր զտիւ և զգիշեր. և հարցանէր զանունն թագաւորին, և զայն քաղաքն՝ որ գնալոց էր. և գտաւ ու մտաւ ի քաղաքն: Եւ էր այն քաղաքին թագաւորն մեծ, և քաղաքն բարելի: Եւ իջաւ մանուկն ի տուն պառաւի միոյ, հանգեաւ սակաւիկ մի. և սկսաւ հարցանել և քննել զքաղաքն, և զքաղաքին գընացքն, և զթագաւորն:

Եւ պառաւն ասէ թէ՝ այս քաղաքիս Թագաւորն դուստր մի ունի խիստ աննման և գեղեցիկ և իմաստուն՝ որ չիկայ իւր նման · որչափ 'ի տարիքէ հասեր՝ նա իմաստուն և ինն Թագաւորի որդի է սպաներ։ Ասէ մանուկն · ինչ պատճառի համար սպանանէ։ Ասէ պառաւն · որ դեակ կասէ թէ՝ ո՛վ զիս յաղթէ և մատուցէ՝ ես զնա առնեմ ինձ այր · և թէ ես յաղթեմ զնա՝ սպանանեմ զինքն։ Եւ այդ պատճառաւդ յաղթէ զթագաւորաց որդիքն և սպանանէ · և զգլուխն՝ իւր չարտախին վ̄ր կու տընկէ։ Եւ իւր չարտախն 'ի վ̄րան քաղաքին կու նայի · և ունի Թախտ ոսկի ակամբ և մարգարտով շարած · անդ կու նստի և հոյի առ մարդիկ 'ի ղաւճէաէն 'ի վայր · որ մարդ զինքն չկարեր տեսանել։

Եւ ունի պառաւ մի թարգմանօղ, որ նա խօսի 'ի հետ մարդոյ, որ առ ինքն մտանեն։ Լսեց մանուկն զայն խօսքերն 'ի պառաւէն՝ և գիշերն 'ի բուն քուն չեղաւ։

Երբ լուսացեալ գնաց ՚ի բաղանիքն․ հագեալ զիւր ոսկեկար հանդերձն․ և անուշահոտեցեալ մշկով և վարդէ ջրով։ Եւ գնաց ՚ի թագաւորին դըստրոջ դուռն․ և ուզեց հրամանն ՚ի մօտ առ թագուհին մտանել։ Եւ մարդիքն՝ որ ՚ի դուռն էին՝ խրատ տուէին մանկանն, թէ պատրա՛ստ կացէր, զի շատ թագաւորի որդւոց գլուխ է տուեր։ Եւ երբ մանուկն մտաւ ՚ի ներս՝ բարև ետուր․ դրեին ոսկի աթոռ, ևնստաւ մանուկն։ Եւ գիտաց աղջիկն՝ որ վս̅ այն բանին էր եկեր առ ինքն։ Ուղարկեց խապար հօրն և մօրն և նայիպնուն և իշխանացն ՚ի խնդիր, և ժողովեցան ամ̅քն։

Ապա ասաց աղջիկն ը̅ իւր թարգմանն պատուականն թէ՝ ասա՛ այդ մանկանդ՝ կուզէ՞, որ տամ յայն կթղ̀այէն, որ իւր ընկերացն եմ տուեր։

Ասաց մանուկն թէ՝ ո̅չ կամքն լինի։

Ասէ աղջիկն ընդ հօրն և ընդ մօրն և ընդ նայիպնուն և ընդ իշխանուն, որ միշտ լինին այնմ բանին· որ թէ մանուկն յաղթէ զթագաւորին դուստրն՝ առնու զնա իւրն 'ի կնութ՟· և թէ դուստրն թագաւորին յաղթէ զմանուկն՝ առնէ նմա ոպ՟ զայլոցն, որ սպանեց: Հաւանեցաւ մանուկն, և ամ՟քն միշտ կացին:

* Հարցմունքն է: *

Ասէ աղջիկն · ո՞վ է քո հայրն:
Ասէ մանուկն · հողմն և հուրն:
Ասէ աղջիկն · ո՞վ է քո մայրն:
Ասէ մանուկն · հողն և անձրևն:
Ասէ աղջիկն · յո՞ր կենդանակերպն ես ծնեալ:
Ասէ ման″ · խոյին աստղին եմ ծնել:
Ասէ աղջիկն · ո՞վ է քո դայեակն:
Ասէ մանուկն · այն է իմ դայեակն՝ որ նա զիս կու տեսանէ, և ես զնա չեմ տեսաներ · նա զիմ ձայնն կու լսէ, և ես զնր՟ ձայնն չեմ լսեր:
Ասէ աղջիկն · այդ որդւոյդ հարցմունքն է, թող այդ կենայ:

Ասէ աղջիկն · ո՞րն է առաջին ա-
րիւնն՝ որ անկա՟ւ յերկիր։

Ասէ մանուկն · աբելի արիւնն է, զոր
կայէն սպան։

Ասէ աղջիկն · ո՞րն է երեք բան, որ
կերան և խմեցին և մեռան · և չէր
ծներ զիւրեանքն մայր։

Ասէ մանուկն · ադամ ևայ է, և գառն
աբրահամու, և մէկ այն խոյն՝ որ քս̅
'ի սաբեկայ ծառէն արար կախ։

Ասէ աղ'' · դու մէկ ա՟ւելի ասացիր։

Ասէ աղջիկն · ո՞վ ոք էին՝ որ ծնեալ
էին՝ և ո՛չ մեռան։

Ասէ ման'' · ենովք և եղիա է, որ ոչ
մեռանելին մինչև 'ի գալուստ նեռին։

Ասէ աղջիկն · այն ի՞նչ թռչուն է,
որ ուտէ յերդ և գարի։

Ասէ մանուկն · այդ մորեխն է։

Ասէ աղջ'' · այն ի՞նչ է, որ քանի ապ-
րի, ձանձրի՟ կու շատանայ և ապրի։

Ասէ մանուկն · գայլ ագռա՟ւն է · զի
յորժամ կու բերէ զձագն՝ սպիտակ
է մինչև գ̅ օրն, և մայրն կու փախչի·

և երէք աւուրն յետոյ կու սևանայ, և մայրն գոյ առ ձագն իւր։

Ասէ աղ″․ այն ի՞նչ էր, որ քանի ողջ էր, յերդ ու գարի կուտէր․ և երբ մեռաւ՝ մարդոյ միս և արիւն կերաւ։

Ասէ մանուկն․ այդ այն է, որ սամսօն մանուկն իշոյ չէնկէ մի էառ ՚ի ձեռն, և այնով հազար մարդ սպանեց։

Ասէ աղ″․ այն ի՞նչ ծառ էր, որ ճիւղ և տերև էր, միս և արիւն դարձաւ։

Ասէ մանուկն․ այդ մովսէսի գաւազանն էր․ որ քանի ծառ էր՝ ճիւղ և տերև ունէր․ երբ որ օձ դարձաւ՝ միս և արիւն եղև։

Ասէ աղջիկն․ այն ի՞նչ երկու հակառակ են, որ զիրար կու սիրեն։

Ասէ ման″․ գիշերն ու ցորեկն է։

Ասէ աղջիկն․ այն ո՞վ էր, որ ՚ի մամն մերձեցաւ․ նա մամն ասաց թէ՝ ես կոյս եմ։

Ասէ մանուկն․ աբելի մարմինն էր, որ ՚ի հողն բերին․ հողն ասաց թէ՝ ես կոյս եմ։

Մեծ աղջիկն· այն ո՞րն էր, որ ժէ՟
տարի թագաւորեց· երբ ճզ՟ մտաւ՝
նա հիւանդացաւ· երբ լ՟ մտաւ՝ նա
մեռաւ, և դարձեալ ողջացաւ։
Մեծ մանուկն· այդ լուսինն է։
Մեծ աղջիկն· ի՞նչ գերեզման էր,
որ շարժուն, և գնայուն եղև։
Մեծ մանուկն· յունան մարգարէն
էր, որ ձուկն կլաւ· շարժուն և գը-
նայուն եղև։
Մեծ աղջիկն· այն ո՞վ էր, որ ջուր
և կերակուր տարաւ քաղցելոց· նա
զկերակուրն թողին, զտանօքն կերան։
Մեծ մանուկն· դանիէլ մարգարէն
էր, որ առիւծոցն տարան· զդանիէլ
թողին, ու զտանօքն կերան։
Մեծ աղջիկն· այն ո՞վ էր, որ մեռաւ,
ո՛չ մարմինն ՚ի հող մտաւ, և ո՛չ հո-
գին առ ա՟ծ գնաց։
Մեծ մանուկն· ղովտայ կինն էր, որ
աղ դարձաւ· ո՛չ մարմինն ՚ի հող մը-
տաւ, և ո՛չ հոգին առ ա՟ծ գնաց։
Մեծ աղջիկն· այն ի՞նչ ծառ է, որ

ունի ժբ՟ ճիւղ. և ամէն ճիւղ լ՟ տերև. և պտուղ նր՟ սև ու սպիտակ

Մէկ մանուկն. ծառն՝ տարին է. ժբ՟ ճիւղն՝ ամիսն է. տերևն՝ լ՟ օրն է. պտուղն սև ու սպիտկ՟՝ տիւ և գիշերն է

Մէկ աղջիկն. այն ո՛րն էր, որ կու քարկոծէին. ո՛չ մարդ էր՝ ո՛չ քաջ էր՝ և ո՛չ հրշտկ՟, և խօսեցաւ զէտ մարդ:

Մէկ մանուկն. երեմիա մարգարէին վէմն էր, որ կու քարկոծէին, խօսեցաւ զէտ մարդ. իբր թէ ինքն է երեմիա մարգարէն:

Մէկ աղջիկն. զի՞նչ էր այն՝ որ խրատ ետ ժողովրդեանն. ո՛չ քաջ էր, ո՛չ հրեշտակ, և ո՛չ ադամայ որդի, և խօսեցաւ զէտ մարդ:

Մէկ մանուկն. մրջիւնն է, որ ած՟ յիշեաց ՚ի գիրն և ասաց. գնացէք ՚ի ձեր դատարքն մօտէք. սողոմոն ժողովք է արեր՝ որ ՚ի հոտ չերթայք:

Մէկ աղջիկն. այն ո՛վ էր, որ էկլէ առաքեաց ած՟. ո՛չ քաջ էր, ո՛չ հրեշտակ, և ո՛չ ադամայ որդի:

Ասէ մանուկն · գայլ ագռաւն էր, որ եկա̂ւ առ ադամ, երբ կայէն զաբէլ սպանեց, և ադամ չգիտէր, թէ զինչ առնէր · եկին երկու ագռա̂ւք, և մէկն զմէկն սպանեց ու թաղեց · ապա ադամ ուսա̂ւ, և փորեց զգետինն, և թաղեց զաբէլ:

Ասէ աղջիկն թէ՝ արի՛ ել ու գնա՛ · այսօր խաղխսեցար ՚ի ձեռաց · փախ կուտայր մանկանն:

Ասէ մանուկն · թէ այն տ̃ծն՝ որ փրկեաց զիս այսօր՝ կարօ՛ղ է, որ ՚ի վաղի̂ւն այլ փրկէ · և ելա̂ւ ու գընաց խնդալով:

Յորժամ տեսան՝ ա̃մքն զարմացան զն̃ր ապրիլն · զի անկեց ՚ի զատ այլ մարդ չէր ապրեր մինչև ՚ի սա:

Գնաց մանուկն ՚ի յիւր իջևանքն · և տեսա̂ւ, զի կուլայր պառա̂ւն դանապէս: Եւ̂ պառա̂ւն երբ տեսա̂ւ զմանուկն՝ խիստ ուրախացա̂ւ և ա̃ց · ո՛րդեակ դու բարով եկիր · այսօր նոր ծնար ՚ի մօրէդ · ես վախեցայ, թէ զքեզ ոչ կու սպանանէ. և քո խղճուն ես մեռանէիր։ Ասէ մանուկն թէ՝ ա՟ծ փրկէ՛ զիս 'ի նմանէ։

Վաղիւ̂ն երբ լուսացաւ̂՝ գնաց մանուկն 'ի դուռն թագուհւոյն. և ետուր բարև և ասաց թէ՝ գիշերս բարով լուսացաւ̂ քեզ։

Եւ̂ նոքա դրին ոսկի աթոռ, և մանուկն նստաւ̂։

Ասէ աղջիկն. այն ո՛վ էր, որ մէկն զմէկն սպանեց. մեռանօղն 'ի դժոխքն գնաց, և սպանօղն 'ի յարքայութ՟ի։

Ասէ մանուկն. ղամէք է, որ զկայէն սպան. կայէն 'ի դժոխքն գնաց, և ղամէք յարքայութ՟ի։

Ասէ աղջիկն. այն ո՛րն էր, որ բուսան ճերմակ էր, նա սև դարձաւ̂։

Ասէ մանուկն. Նոյեայ որդին է. երբ որ զանէծքն ընկալաւ̂՝ նա սևացաւ̂։

Ասէ աղջիկն. այն ո՛վ էին, որ կերան և խմեցին և մեռան, և չէր ծներ զիւրեանքն մայր։

Ասէ մանուկն. ադամ և եւ̂այ էր։

Մէկ աղջիկն · այն ո՞վ էր, որ եգն յորձէն ծնաւ։

Մէկ մանուկն · եւայ է՝ որ ծնաւ յադամայ։

Մէկ աղջիկն · ո՞վ է այն, որ ՚ի գայլոյ բերանն դրին՝ նա չկերաւ։

Մէկ մանուկն · յովսէփ գեղեցիկն է

Մէկ աղջիկն · այն ի՞նչ տեղ է, որ քանի հա՟ ստեղծեր է ա՟ծ, նա արեգակն ՚ի վ՟ր չէ՛ դիպեր։

Մէկ մանուկն · այն ծովու յատակն է, որ մովսէս պատառեաց։

Մէկ աղջիկն · այն ի՞նչ երկուք է, որ քանի ապրի կու մեծանայ։

Մէկ մանուկն · չկայ մեծ քան ըզձուկն ՚ի ծովերն, և զօձն ՚ի ցամաքերն։

Մէկ աղջիկն · այն ի՞նչ բ՟ սիրելի են, որ զիրար կու ատեն։

Մէկ մանուկն · հոգին և մարմինն է։

Մէկ աղջիկն · այն ի՞նչ է, որ զմարդ հարուստ կանէ, ու դառնոյ աղքատ կանէ։

Մէկ մանուկն · ապրշումի ճրճին է, և իւր խելքն։

Այս աղջիկն . այն ինչ արժան է հալալ ուտելոյ:

Այս մանուկն . այդ ձկանն է:

Այս աղջիկն . այն ի՞նչ էր, ո՛չ կերաւ ո՛չ խմեց ՚ի կենդանութեան . երբ մեռաւ՝ կերակուր կերաւ հող՝ և խմեց ջուր:

Այս մանուկն . մովսիսի գաւազանն էր . որ քանի ծառ էր՝ կերակուր ո՛չ ուտէր . երբ կտրեցաւ ծառէն և օձ դարձաւ՝ նա կերակուր կերաւ զհողն, և խմեց զջուրն, և կտրեց զծովն:

Այս աղջիկն . տուն մի կայ մէջն ոսկի և դուռն արծաթ . երբ որ պատն խոռի՝ նա ամէն աշխարհս ՚ի վերայ գայ, չեն կարեր շինել:

Այս մանուկն . այդ հաւկիթն է . երբ որ կոտրի՝ այլ չի շինուիր:

Այս աղջիկն . արի՛ ել ու գնա՛ . այսօր այլ գերծար ՚ի ձեռացս . վաղիւն տամ քեզ այն կթխայէն, որ մէկ այլ ընկերուացդ տուր:

Այս մանուկն . Աստուած ողորմած է, և ելաւ գնաց խնդալով:

Երբ լուսացաւ՝ գնաց 'ի դարպասն 'ի դուռն Թագուհւոյն. և ետ բարև թէ՝ գիշերս բարով լուսացաւ քեզ։

Եւ հրամայեաց աղջիկն, որ դրին զոսկի աթոռն, և նստաւ մանուկն։

Ասէ աղջիկն. ո՞վ է այն՝ որ կու կռուի լսելով, և կու զարնէ իւրովի, նա չունի ձեռք և ո՛չ ոտք։

Ասէ մանուկն. այդ ձուկն է։

Ասէ աղջիկն. ո՞վ է այն, որ կերակուր ուտէ մինչ մեռել 'ի տապանին էր, և եղև տապանն կենդանւոյ։

Ասէ մանուկն. յոբ երանելին էր. որքանի ցաւագնել էր՝ նա մեռել էր և կերակուր ուտէր. և յետոյ առաւ զիւր գեղեցկութիւն կրկին։

Ասէ աղջիկն. այն ո՞վ էր, որ խրատ ետ մարդոյն. ո՛չ քաջ էր, ո՛չ մարդ. և ո՛չ հրեշտակ։

Ասէ մանուկն. Բաղաամայ էշն է. ասաց թէ՝ դարձի՛ր յետս, և մի՛ երթար անիծել զիէլ։

Ասէ աղջիկն. ո՞վ էին, որ երկու խա-

պար

պարբեր ուղարկեցին · ո՛չ քաջ էր՝
ո՛չ մարդ, և ո՛չ հրեշտակ:

Ասէ մանուկն · ագռաւ̂ն ու աղաւ̂նին էր, որ Նոյ ուղարկեց խապար բերելու:

Ասէ աղջիկն · ո՞վ ոք էին այնոքիկ, որ մեռան և կացին ընդ մահ և ընդ կեանք զ̅ճ̅ տարի:

Ասէ մանուկն · է̅ մանկունքն էին, որ փախեան ՚ի Թգ̅ւ̂որէն, և ննջեցին ՚ի յայրն · և յետ զ̅ճ̅ տարուայ յարեան

Ասէ աղջիկն · ո՞վ ոք էին, որ երբ յեգիպտոս մտան, հ̅ե̅ էին · և երբ ելան, զ̅ճ̅ռ̅ եղան:

Ասէ մանուկն · յակոբ նահապետի որդիքն էին:

Ասէ աղջիկն · անբուան անծընին բարձին, ա̂նդադարին երդօքն անցուցին:

Ասէ մանուկն · անբուան՝ աղն է · անծին՝ ջորին է · անդադար՝ ջուրն է · երդիք՝ կամուրջն է:

Ասէ աղջիկն · այն ի՞նչ է, որ մ̅ծ̅ եա,

վաղ

վաղճնէն ելաւ ցանեց զցանն. և յամէն պահու երթայր և ասէր՝ մեծացի՛ր ա͞յ հրամանաւն. և զինչ տարին որ կու մեծնայր՝ նա ամէն սահաթ մէկ մէկ տարու չափ մեծացաւ ՚ի մէկ օրն. և ՚ի մէկ այլ օրն արար՝ զինչ որ իւրեան պիտոյ էր։

Ասէ մանուկն. այդ այն ծառն է՝ որ տնկեցին ՚ի յայգին կիպարի. զի ա͞ծ առաքեաց ձեռօքն գաբրիէլի հրեշտակին առ նոյ և ասէ. տար ցանէ զայդ՝ որ լինի ծառ, կտրէ և տապան շինէ. մուտ ՚ի ներս դու և որդիքն քո, կանայք որդւոց քոց և կին քո ընդ նմ͞ա. և արարին այնպէս՝ և ապրեցան ա͞նձքն։

Ասէ աղջիկն. երեք բան ի՛նչ էր՝ որ խօսեցան, որ յոյս ա͞ս չկայ։

Ասէ մանուկն. երեք բանքն այս է. ա͞ ծովն է՝ որ խուփ չունի. ա͞ երկինքն է՝ որ սիւն չունի. ա͞ հաւն է՝ որ կաթ չունի. և մէկ այլ մարդոյն ձեռացն մէջն է՝ որ մազ չունի։

Յայս ծուղակէս այլմի փախեցաւ աղջիկն 'ի կորորձէն եւ ասէ · այլմի դու մէկ աւելի ասացիր: Եւ ասաց արի՛ է՛լ ու գնա · այսօր այլ զերծար 'ի ձեռանէս · վաղն հասցնեմ զքեզ քո ընկերացն:

Ասէ մանուկն · յա̃ծ եմ ապաւինէր, ինքն ողորմած է, ողորմի ինձ:

Ելաւ խնդալով եւ գնաց ուրախութ̃ 'ի յիւր իշխանքն:

Երբ վաղի̂ն լուսացաւ՝ նա եկաւ 'ի դուռն թագուհւոյն բարեւ ետ:

Եւ ասէ աղջիկն թէ՝ գիշերս երբ բարով լուսացաւ քեզ · եւ դրին զոսկի աթոռն եւ նստաւ:

Ասէ մանուկն · հրամայեա՛ մեծ թագուհի, այլ ինչ կու հրամես:

Ասէ աղջիկն · հիմի հրամանքն քո է:

Ասէ մանուկն · ծով է այն՝ որ հարուստ էր աղքատացաւ, եւ յիւր աղքատութեն հագաւ զիւր հայրն, ու հեծաւ զիւր մայրն · եւ գնաց որ զիւր ապրանքն գտանէր՝ նա մահն

հա

հասաւ ՚ի վ՟ր, առաւ զմահն ՚ի ձիոյն վ՟ր. խմեց մահուճն ջուր՝ և խմցոյց իւր ձիոյն. ինքն այլ ապրեցաւ՝ և ձին այլ: Ան՟ աղջիկն չկարաց խօսել, զի ոչ գիտէր: Ապա ասաց ընդ մանկանն. այսօր գնամ, վաղիւն տամ զայդ պատասխանիդ. այդ դժար զրոյց է:

Ան՟ մանուկն ելեալ գնաց ՚ի յիւր օթեւանքն:

Ասէ աղջիկն ընդ իւր թարգմանն պատուաւն թէ՝ գնամ ՚ի շուկայն. և առ սպիտակ հաց, և գէր սագ մի. և հաւ խորոված. և զփորն լից շաքրով. և երկու աման անուշ գինի խիստ ուժով լինի: Գնացին ծառայքն, և կատարեցին զկամքն ն՟ր: Ան՟ երբ դառն քուն եղան ա՟մքն, աղջիկն հագաւ զիւր ոսկեկար հալաւն և անուշահոտեցաւ: Ան՟ ը՟ գեղեցիկ աղջիկ այլ ՚ի հետ իւրն առաւ: Ան՟ ծառայիցն հրամայեց. որ բարձին զկերակուրն անուշահամ և զըմպելին. և գնացին յիջևան մանկանն, և զարկին զդուռն:

Ասէ մանուկն · ո՛վ ես դու:

Ասեն ծառայքն · պարոն գիտենաս, որ աղջիկ եմք 'ի դարպասէ Թագաւորի · և զինչ լուսինն արեգական սիրոյ տէր է՝ և մեք քեզի սիրոյ տէր եմք, այն պատճառին համար կամիմք տեսանել զքեզ:

Ասէ մանուկն՝ գնա՛ 'ի զատ · ա̃ծ գիտէ, որ նա չի մտաներ աւլս · և ես ո՛չ գիտեմ զնա:

Եւ նոքա աղախնօք պնդեցին զերեսներն՝ թէ ո՛չ երթամք 'ի դրանէս, մինչև տեսանեմք զքեզ:

Եւ մանուկն եթող մտանել 'ի ներս:

Եւ մտեալ աղջիկն, եբաց զերեսն:

Եւ երբ տեսաւ մանուկն զերեսն աղջկան՝ վառեցաւ 'ի սիրոյն:

Եւ աղջիկն նստաւ, և նստոյց ընդ իւր զմանուկն:

Ասէ աղջիկն ցմանուկն · ունի՞ս կերակուր ինչ ուտելոյ, բե՛ր որ ուտեմք · և անուշահամ գինի՝ որ խըմեմք և անուշանամք:

Զձայնն փոխեր էր աղջիկն, որ մանուկն չէր կարէր ճանաչել զնա։

Ասէ մանուկն. ա՟ծ գիտէ՝ որ չունիմ ինչ 'ի ժամուս յայսմիկ, զի չգիտէի զձեր գալն առ իս, որ պատրաստէի ձեզ կերակուր լաւ։

Ասէ աղջիկն ծառայիցն իւրոց. բերէ՛ք զի՛նչ որ ունիք ուտելոյ. և բերին դրին սեղան զանազան անուշ կերակրով, և նստան անուշ 'ի խում. և անապակ գինւով արբուցին զմանուկն. և աղջիկն անուշ զրոյց տայր, և ժղւեցնէր զմանուկն։

Ասէ մանն″. հրամայէ՝ որ պառկիմք։

Ասէ աղջիկն մանկանն, թէ զիս կուզես՝ նա պատմէ զայն խօսքն, ինչ որ երեկ թգ՟ւորի դստերն ասացիր։

Ասէ մանուկն. չունիմ կարողութի՟ ասելոյ. զի կու վախեմ, թէ մեռանիմ. այլ բան հարցուր՝ որ ասեմ։

Նա երդուաւ յա՟ծ, թէ զայն բանն մինչ ո՛չ լսեմ 'ի քէն՝ ո՛չ կատարեմ զկամս քո. և սկսաւ խաղալ ը՟նմա։

Նա

Այն մանուկն բորբոքեցաւ ՚ի խիստ սիրոյն, և յաղթեցաւ ՚ի գինւոյն. և ասէ ցաղջիկն՝ արի՛, որ պառկիմք:

Այլ աղջիկն, և եհան զշարեշապիկքն՝ և եդ ՚ի մնարքն ՚ի գլխոյն ներքև. և սկսաւ խաղալ ՚ի հետ մանկանն

Այն մանուկն յաղջկան սիրոյն և ՚ի գինւոյն թմրեցաւ, և մեկնեց զխօսքն.

և աղջկանն չկարաց առնել ինչ:

Այն աղջիկն խնդաց ՚ի միտքն. առահեցաւ յանկողնոյն, և ելաւ գնաց խնդալով, և շարեշապկին պէտ չարաւ. և խիստ ուրախացաւ թէ՝ ուսայ զհանելուկն. և ինձ ինչ մի չկարաց առնել. և ըստ լուսանալն՝ ապա

նանել տամ զինքն:

Այն մանուկն ՚ի վաղձմէն զարթեաւ, և խելքն ՚ի վրան եկաւ, նա իմացաւ՝ որ զինքն խաբած էր, խիստ տրտմեցաւ. յետոյ տեսաւ զհալաւ աղջկանն՝ որ մոռացեր էր, և շատ ուրախացաւ, և էառ պահեց.

Այն ելեալ գնաց ՚ի դարպասն, եւ

բարև , և նստաւ յոսկի աթոռն։

Խնդացաւ մանուկն՝ որ թագաւորին դուստրն էր , որ իրիկունն մօտն էր գնացեր։

Այն աղջիկն ուղարկեց խապար հօրն և մօրն և իշխանացն , և եկին միաբան։

Այն մանուկն յոտն ելաւ , ծունր էած թագաւորին և նստաւ ։

Ասէ աղջիկն թէ՝ ասեմ զերեկեան բանն , որ մեր հարցար . և սկսեաւ ասաց զամէնն կարգաւ , որ իրիկունն լսեր էր ։

Այն ամենեքեան զարմացան ընդ գիտութիւն աղջկանն։

Ասէ մանուկն ընդ թագաւորն առաջի ա̄մ իշխանացն։

Տիեզերակալ թգ̃ւոր՝ քո դուստրն ինձ երեք օր բան հարցաւ , և ես պատասխանի տուի . ես այլ իւրմէն բան մի հարցանեմ . եթէ գիտենայ՝ նա զիս յաղթեր է . և թէ ոչ՝ ես եմ յաղթեր զնա։

Ասէ թգ̃ւորն . այսօր հաւանեմ եմք։

Այս վկայ կացին ամ իշխանքն՝ որ այլ աւելի առաւելիս չառնեն։

Ասէ մանուկն առ աղջիկն թէ՝ որն է այն թռչունն, որ կալայ զինքն և զենեցի, և զփետուրն պահեցի․ զինքն խորովեցի և դրի առաջևս թէ ուտեմ, և այն թռչունն ՚ի հետն ունէր այլ ցեղ թռչունքներ․ ապա իւր փետուրն էր գեղեցիկ որպս զոսկի՝ նա յանկարծակի թռաւ և գնաց։ Թէ չէք հաւատար նա զփետուրն բերեմ որ տեսնուք։

Աղջիկն երբ որ զայն լսեց՝ խիստ վախեցաւ․ գիտէր որ զիւր խապարն կու տայր։

Ասէ՝ այդ ինչ դժար զրոյց է, չեմ կարեր գիտնալ․ գիտեմ որ յաղթեցեր զիս․ ուզէ՝ զինչ որ կուզես, տամ քեզ։

Ասէ մանուկն․ այլ ինչ չուզեմ քան զքեզ աւելի։

Այս իշխանքն վկայեցին և հաւանեցան։ Պսակեցին և արարին է օր հարսանիք։

Ո՜վ ես Թագաւորն զկեան Թագաւորութեան և զկէս գանձին · և որքան աշխարհ ունէր ամենեցուն տիրեց։

Ապա ուղարկեց շատ մարդիկք և շատ գանձս առ այն Թագաւորին, որ հայրն և մայրն ՚ի քովն էին, և եբեր զիւր ծնօղքն ՚ի մօտ իւրն։

Ո՜վ տեսեալ զխմեանս ուրախացան,
և գոհացան զն̃յ։

Ո՜վ զապրնջական պատուան՝ տարաւ ՚ի դարպասան և արար իւրն մեծ։

Ո՜վ Թագաւորն յետ մահուան իւրոյ՝ ամենայն գանձին և հեծելին և աշխարհին տէր կացոյց զմանուկն։

Ո՜վ քանի մարդասիրին փառք յաւի
տեանս յաւիտենից
Ամէն։

*Վարք և պատմութիւն Ալէքսիանոսի ճգնաւորին:

ԱՅՐ ՄԻ ԷՐ ՚Ի ՔԱղաքն ըստամպօլ մեծատուն յոյժ և իշխան մեծ, և հրամանատու բազում գաւառաց · և էր անուն նր̅ Եփրեմիանոս · և կնոջն աննա : Այս էր Եփրեմիանոս՝ մեծ սիրելի ՚ի յաչս Թագաւորին իւրոյ: Սոքա էին հասեալ ՚ի մերձ ծերութե̅, և ոչ ունէին զաւակ ՚ի վ̅ր երկրի, որ ժառանգէր զինչս նց̅ · և էին կարի տըրտում և անմխիթար՝ վ̅ս ժառանգութե̅ Տիւ և գիշեր հանապազ աղաչէին զա̅ծ վ̅ս զաւակի : Այս յաւուր միում կինն աննա՝ բազում աղախնեօք և

ծա

ծառայիւք գնաց ՚ի մեծ յեկեղեցին ՚ի սբ՟ն սոփիոյ, և կայր յաղօթս առ տր՟. և բարեխօսութբ՟ սբ՟ ածածնին՟ և ամ՟ սբցն՟՝ հայցէր ՚ի քս՟է ժառանգ բարի: Եւ յետ աղօթիցն բազում ողորմութիւ՟ առնէր աղքատաց և կարօտելոց, և քահանայիցն ամ՟ցուն, և ելեալ գնայր ՚ի տուն իւր: Եւ ՚ի գնալն՝ ՚ի ճանապարհին համդիպեցաւ մին աղքատ խեղճ և ողորմելի և ասաց. տի՛կին՝ տո՛ւր ինձ ողորմութիւն ՚ի քո մէկ որդւոյդ արեւուն: Եւ տիկինն հիացեալ ՚ի միտս իւր, ասաց թէ, վա՛յ ինձ՝ զի ես անժառանգ եմ, և դու՛ ինձ երանի տայ վս՟ որդւոյ. արտասուեաց և ելաց. և հանեալ ետուր նմա ողորմութի՟, և էանց գնաց ՚ի տուն իւր: Եւ ՚ի գիշերին յայնմիկ երեկ ՚ի տեսլեանն մին ծեր, և աւետեց՟ զաննայ և ասաց: Ո՛վ դու՝ ահա՛ կատարեցաւ խնդրուածք քո առաջի տն՟: Բայց զայդ արծաթապատ դարպասն՝ որ անթիւ ոսկւով և արծաթով է զարդարեալ՝ տացեն զնա ողորմութ̅ի աղքատաց և կարօտելոց։ Եւ ընդ առաւօտն ելեալ կոչեաց զերիցունս և զքահանայս, և արար մատաղս մեծ և ընդունելութ̅իս։ Եւ պատմեաց զտեսիլն իւր՝ առն իւրում եփրեմիանոսի։ Իսկ նա ոչ կամէր տալ, այլ դըժուարապէս ետ․ քանզի սիրէր զդարպասն զայն, որ ՚ի ե̅ ձ̅ Լ̅ Բ̅ լտար յոսկւոյ էր շինեալ․ և այսկոյս և այնկոյս մարգարտով շարեալ և զարդարե̅լ։ Եւ չորս բաղոյ ծ̅ ծ̅ լտար արծաթոյ՝ էր թառուցեալ արծուանման։ Եւ մի այլ զթեւս իւր տարածեալ ՚ի վայելչութ̅ի անկողնոյ իւրոյ․ և էր Լ̅Բ̅ լտար արծաթոյ։ Եւ առեալ զայս կլին նր̅, կոչեաց զոսկերիչս և արար զնա դրամս և դահեկանս․ և քարոզ կարդաց և ասաց ժողովել զա̅մ̅ քահանայսն, որ ընդ իւր իշխանութ̅ն կայէին․ և զա̅մ̅ աղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս․ և պահել զն՟ս ՚ի հրոմից ամիսն բոլոր մինչև յելս ամսոյն։ Այս առեալ ընդ իւր փ՟ ձ՟ խ՟ ն՟ քահանայս. և իջե՟լ ՚ի վանսն հսկեցին զգիշերն մինչև ցառաւօտն. և պատարագ մատուցին վ՟ս որդէծնութե՟ ն՟ր. և նա ետ ն՟ց է՟ է՟ դահեկանս։ Այս յետ երեք ամսոց գիտաց կինն զյղութի՟ իւր. և ետ աւետիս առ այրն իւր. և յետ ինն ամսոց ծընաւ կինն ՚ի ծերութե՟ իւրում արու զաւակ։ Այս յարուցեալ այրն՝ արձակեաց զհրաժարականս ընդ ա՟մ իշխանութիս իւր, կոչել զքահանայս և զեպիսկոպոսունս և զիշխանսն։

Այս արար մեծ ընդունելութի՟, և մկրտեաց զմանուկն. և եդին զանուն ն՟ր ալէքսիանոս։ Այս իբրև զարգացաւ մանուկն՝ ետ զնա հայրն յուսումն գրոց։ Այս էր պատանին աստուածամիտ և աստուածաձեռն քան զհայրն իւր, և էր գեղեցիկ յոյժ. և ձայն ն՟ր՝ էր քաղցր իբրև զքնարի։ Այս իբրև եղև պատանին ժ՟ը ամաց՝ եզեն հայրն արջառս և ոչխարս բազում վ՟ս ն՟ր։ Եւ էր հրակայաձև և ընթերցող ա՟ծային ս՟բ գրոց, հին և նոր կտակարանացն։ Մինչև եհաս լուր ն՟ր յապարանս Թագաւորին։ Եւ յաւուր միում ասէ Թագաւորն ցեփրեմիանոս· ա՟ծ ետ պտուղ որովայնի քում, որոյ լուր ն՟ր եհաս առիս· և է՛ իմ դուստր զոր դու ճանաչես· արդ՝ տո՛ւր զնա ինձ ի փեսայու՟ի։ Ոսկի և արծաթ իմ նմա՛ եղիցի· և յետ մահուան իմոյ՝ ժառանգէ զաթոռն իմ։

Եւ ել եփրեմիանոս յերեսաց Թագաւորին, և գնայր թմբկօք և պարուք ի տուն իւր։ Երբև լուաւ ալեքսիանոս զգալուստ հօրն իւրոյ, յարեաւ ընդառաջ՝ և երկիրպագանէր և ասաց· հա՛յր իմ ալեօք ծաղկեալ՝ զի՞ է քեզ։ Պատասխանի ետ հայրն ն՟ր և ասէ· խնդամ և ուրա՛խ եմ վ՟ս քո· զի Թագաւորն խոստացաւ փեսայացուցանել զքեզ։

Պատասխանի ետ աղեքսանդրոս և ասէ․ գրեալ է 'ի մ̅ր աւետարանն, թէ որ դառնայ ընդդէմ ծնողայն իւրոց՝ տրտմութ̅ե իջանէ 'ի դժոխս։ Բայց դու անարգեալ լեցիս յերեսաց իմոց, զի յոյժ խզեցին բանք քո զսիրտ իմ։ Եւ իբրև լուաւ եփրեմիանոս՝ դարձաւ տրտում, և անկաւ առաջի թագաւորին և ասէ․ վա՛յ է ինձ այսօր՝ զի որդին իմ արհամարհեաց զհրաման թագաւորին և զբանս իմ։ Ասէ թագաւորն ցեփրեմիանոս․ մի՛ հոգար զայդ․ ես՝ լինի որ դարձուցանեմ զնա յայնպիսի խորհրդոյն։ Եւ հրամայեաց թագաւորն կոչել զաղեքսանդրոս։ Եւ գնացեալ գտին զաղեքսանդրոս, որ ընթեռնոյր զաստղմոսարանն՝ զոր ունէր 'ի ձեռին իւրում։ Ասէ պատանին՝ կոչէ զքեզ թագաւորն։ Եւ յարուցեալ գնաց աղեքսանդրոս զհետ նր̅ յապարանս թագաւորին։ Ասէ թագաւորն ցաղեքսանդրոս․ ո՛ր դեկ՝ զամուսնութիւն պիղծ համարիս։ Պատասխանի ետ աղէքսիանոս և ասէ․ ո՛չ թէ զամուսնութիւն պիղծ համարիմ, այլ գրեալ է ՚ի սուրբ աւետարանին, թէ որ ո՛չ թողու զհայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զորդիս՝ կամ զագարակս՝ և ո՛չ առնու զխաչն իւր և գայ զկնի իմ, չէ՛ ինձ արժանի։

Ոսկի և արծաթ կերակուր է ժանկոյ․ և հանդերձ փափուկ ցեցո՛յ է կերակուր։ Յայնժամ կոչեաց թագաւորն զերկոտասան իշխանս տանուտէրս՝ որք էին խրատատու թագաւորութեան իւրոյ․ և ասէ ցնոսա՝ զինչ արարից, քանզի ո՛չ կարացի դարձուցանել զաղէքսիանոս յայնպիսի խորհրդոյն։ Պատասխանի ետուն իշխանքն և ասեն․ ո՛չ թէ բանիւ նորա վարի թագաւորութիւնս մեր, այլ հրամայեա՛ արկանել ՚ի սենեակ։

Իսկ թագաւորն հրամայեաց արձակել զաղէքսիանոս․ և առաքեաց հրաւիրակս ընդ նմա իշխանութիւնս իւր, ժողովել զամենայն գալ ՛ի հարսանիս ։ Եւ իբրեւ գնացին քահանայքն կոչել զալեքսիանոս , զի պսակեսցեն ընդ դստեր թագաւորին ։

Ասաց ալեքսիանոս ընդդէմ քահանայիցն ․ մի՛ դնէք ինձ պսակ թառամելի , զի զանթառամն շահեցայց ։ Պատասխանի ետուն քահանայքն եւ ասեն ․ որդեակ՝ թէպէտ ՛ի թագաւորէն ոչ երկնչիս , այլ ՛ի մէնջ պատկառեա՛ ․ եւ նա լուռ եղեւ ․ եւ տարեալ պսակեցին ընդ դստեր թագաւորին , եւ արարին ժէ օր հարսանիս ։ Եւ ապա առեալ թագաւորն զձեռանէ մանկանն եւ աղջկանն՝ էարկ զնոսա ՛ի սենեակ եւ փակեաց ՛ի վերայ նոցա զեօթն դուռն ։ Եւ յարուցեալ մանուկն շիջոյց զկանթեղսն եւ զմոմեղէնսն , եւ ասէ ցաղջիկն ․ քո՛յր՝ պարտ է ինձ եւ քեզ յաղօթս կալ եւ ապա՛ ննջել ՛ի միասին ։ Եւ ելեալ կացին յաղօթս եւ ննջեցին արթունք ։ Եւ յետ ժէ աւուրն անցանելոյ՝ ասէ աղջիկն ցաղէքսիանոս · ընդէր ոչ յայտնեցեր զքեզ հօր և մօր քո · զի բազում դեղատու բժիշկք կան ՚ի քաղաքիս:

Ասէ ցնա աղէքսիանոս · սահման է՝ զի այր մարդոյն համարձակ է քան զկինն · պա՛րտ է ինձ երեք անգամ խօսիլ , և քեզ ոչ տալ պատասխանի:

Ա̂յ յարուցեալ եկաց յաղօթս և ասաց այսպէս · ա̅ծ աբրահամու իսահակայ և յակոբայ · որ փրկեցեր զերիս մանկունսն ՚ի հրոյն բորբոքելոյ , փրկեա՛ և զիս այս գազան կնոջէս · զի մարմինն կնոջ ո̅պ հուր է , և ես ո̅պ խոտ առաջի հրոյ · կամ ՚ի յայրումն առաջի սորա · զի կին՝ ընտանի գազա՛ն է չար , և ոչ տայ հանգչել մարդոյ · և լռեալ նստեցին:

Ա̂յ յարուցեալ առաւօտուն աղէքսիանոս ասէ ցաղջիկն՝ արի՛ կացցուք յաղօթս: Ասէ աղջիկն ցաղէքսիանոս · ընդէր ոչ խօսիս ընդիս և ոչ բանի̂ մխիթարես զիս:

Յայնժամ աղէքսիանոս ետ զմատա-

նէին ոսկի 'ի նոա և ասէ . քո՛յր՝ առ զայս և պահեա 'ի քեզ յիշելիք . մինչ ես երթայց 'ի դուռն եկեղեցւոյն յաղօթս , և ապա գամ կատարեմ զկամս քո։ Ապ՟ բացեալ զդրունսն, ելեալ գնաց մինչև յանկելանոցն . և տեսանել զաղքատիկ մի՝ որ ունէր նա մազեղէն մի զանձամբն իւրով . ետ նմա զծիրանին՝ և էառ զմազեղէն նր՟ և ագա՟ ինքն։ Ապ՟ էր գին ծիրանւոյն երեք հարիւր դահեկան։
Ապ՟ աղքատիկն թաքոյց զայն։
Ապ՟ առեալ աղեքսիանոս այլ կարկատուն կտա՟ մի , էարկ զգլխովն
և ծածկեաց զերեսն իւր։
Իբրև էանց պահ մի գիշերոյն՝ իմացա՟ կինն զխորհուրդս նր՟ . ձիչ
և աղաղակ բարձեալ լայր։
Ապ՟ յարուցեալ դռնապանն ետես զդրունսն բացել . և վառեցին ջահս և ընթացան 'ի յորոնել։ Ապ՟ 'ի յորոնելն առ ոտն կոխէին զնա . և նա ասէր՝ մի՛նեղէք զիս . թէպէտ աղքատ

եմ, այլ այ՟ արարած եմ։ Ապա երբև էջ առ եզր ծովուն՝ եգիտ նաւ մի որ երթայր յեէ՟մ· և ասէ ցնաւավարն· ո՛րդեակ՝ տա՛ր զիս յեէ՟մ, և ես յաղօթս առնեմ վս՟ քո։

Ասէ նաւավարն· ա՛ղքատիկ ընդէր ծածկես զերեսդ քո և ո՛չ բանաս։ Ապա նա ասէ, զի խստակրօն վարդապետի աշակերտ եմ· և նա պատուիրեալ է ինձ թէ՝ մի՛ հայիր ՚ի մարդ և ո՛չ յկ՟ն, և մի՛ բանար զերեսդ։

Ապա մտեալ ՚ի նաւն հասանին յտրիպօլիս· և անտի ՚ի կիպրոս· և անտի յէ՟մ· և յեէ՟մէ ՚ի լեառն սինեա՝ զոր տ՟ր խօսեցաւ ը՟ մովսէսի։ Ապա արար անդ զնշան խաչին ՚ի վ՟ր ն՟ր և ասէ· ա՛ եղիցի ինձ գերեզման և տուն յարկի· և եկաց անդ աղէքսիանոս ամս լդ՟· և էր կերակուր ն՟ր ՚ի ծայրից ծառոց և ՚ի խոտոց· և ըմպելի նորա ջուր անձրևաց։ Ապա ապա ս՟տնյ ընկեց ՚ի խհրդ ն՟ր զկարօտութ՟ի և զգութ ծնողացն, և այնու նեղէր զնա։

Եւ յարուցե՟լ էջ առ եզր ծովուն, եւ եգիտ նաւ մի՝ որ երթայր յեմէն․ եւ ասէ ցնաւավարն՝ տար զիս յեմէն, եւ ես վ՟ս քո աղօթս առնեմ։

Եւ առեալ զնա նաւեցին։ Եւ իմացեալ դիւացն յարուցին հողմ եւ մրրիկ ՚ի ծովին, եւ սկսաւ ալէկոծիլ նաւն, եւ ո՛չ կարացին յաղթել։

Յայնժամ եկին է՟ դեւք չարագոյն քան զառաջինն, եւ ասեն ցմիմեանս․ մեք դորա համբերութ՟ն գիտեմք․ զի սորա զօրութ՟ն առաւել է քան զյոբայն․ այլ զայս առնեմք դմա չարութ՟ի․ զի յարուցանեմք հողմն սաստիկ ՚ի վ՟ր ծովուն, եւ տանիմք զդա ՚ի դուռն տան հօր իւրոյ․ զի տեսանելով զաղէտս ծնողացն իւրոց՝ տայցէ ծանօթութ՟ի։ Եւ հանեն հողմն սաստիկ ՚ի վ՟ր ծովուն, եւ տարեալ ընկեցին զնաւն ՚ի դուռն տան հօր իւրոյ։ Իբրեւ գիտաց ալէքսիանոս, թէ սա՟նյի էր գործն՝ ասէ․ երթամ ՚ի դուռն տան հօր իմոյ, եւ անդ կոխեցից զգլուխ սա՟նյի։

Այլ իբրև եւ առ եզր ծովուն՝ ետես զեփրեմիանոս զհայրն իւր նստեալ ի վ̄ր ջրուոց . զի երթայր ի բաղանիս . և ընթացեալ ընդ առաջ երկիր եպագ նմա և ասէ . տէր յերկրէ եկեալ եմ վ̄ս անուան քոյ . արդ՝ որ ի փշրանաց սեղանոյ քոյ անկանի՝ բաւական է ինձ կերակուր . և որ յապիկոյն քում կաթի՝ բաւական է ինձ ըմպելի ։ Ասէ եփրեմիանոս ցեղբայրս ծառայս իւր . ա́րդեան՝ տա́ր զդա յանկելանոցն մեր ։

Իբրև տարաւ զնա յանկելանոցն՝ ձիչ և աղաղակ բարձին . աղքատքն ամ̄ և ասեն . թէ դա́ աստ գայ՝ մեք ամ̄քն եղանեմք ։ Ասէ եղբայրս . ա́ղքատիկ՝ վ̄ս քո զամ̄ աղքատքն ո́չ կարեմ հանել աստի ։ Ասէ ալէքսիանոս . աղաչեմ զքեզ՝ տա́ր զիս մինչև յերրորդ դուռն ։ Այլ եղբայրս տարեալ զնա առ դռնապանն . թո́ղ տուր սմա բնակել յայսմ տեղւոջս . և եկաց անդ աւուրս է̄ ։

Ապա յետ է̅ աւուրն՝ ասէ դռնապանն · ա՛ղքատիկ՝ արի՛ և գնա՛ աստի · ը̅ և թ̅ անգամ վարեաց զնա և ասէ՝ ե՛լ և գնա՛ աստի · քանզի տիկինն մեր առաւօտուն ունի գալ ընդ այս՝ և երթայ ՚ի ծովեզրն լալ զորդին իւր զԱլէքսիանոս զտէրն մեր : Իսկ նա ասէր թէ՝ ես ա՛ստ մեռանիմ, և ո՛չ գնամ այլ տեղի : Իսկ յետ սակաւ ինչ աւուրց՝ գայր տիկինն, և առաջի նորա ծառայքն · և ծառայիցն լրբեալք՝ առեալ զհերաց նորա քարշէին զնա ՚ի վերայ երեսաց իւրոց :

Իսկ նա ձայնէր և ասէր · տի՛կին բարի մի՛ տար զիս այդպէս առնել · թէպէտ և աղքատ եմ, այլ Աստուծոյ արարած եմ : Իսկ նա սաստէր աղջկանցն և ասէր · թո՛յլ տուք դմա բնակել յայդմ տեղւոջդ պանդխտութեան :

Իսկ ընդ աղքատիկն նայելով ասէր տիկինն · աչքերն՝ իմ Ալէքսիանոսին կու նմանին : Իսկ ելեալ եկաց և սկըսաւ լալ ընդդէմ ծովուն և ասէր ·

Ջո՛ւրք՝ որ 'ի ծովդ էք, մի թէ կլանիք զորդին իմ զաղեքսանդրոս, ցուցէ՛ք ինձ զնա, զի նմա էր իմ յետին և առաջին մխիթարանքն։ Օ ի ցաւին աղէք իմ և գալարին. և հեծեծանօք ողբայ սիրտ իմ անդադար։ Աւետաբեր հողմնիկ. մի թէ խապար ունիք և կամ զհոտն զիմ աղեքսանդրոսին. զի տուրք էր նա ինձ յոյ՟, և ինդրուածք 'ի սրբասէր քահանայից։

Եւ զայս ամ՟ լսէր աղեքսանդրոս և գալարէր աղէք նորա՝ և խորովէր լեարդն, և ո՛չ տայր ծանօթութի՟ յահէ ամենակալին ա՟յ. զոր ասէ 'ի ս՟բ աւետարանին թէ՝ որ ո՛չ թողու ըզհայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զագարակս վ՟ա անուան իմոյ, չէ՛ ինձ արժանի. և եկաց 'ի դուռն տան հօր իւրոյ ժէ՟ տարի։ Եւ ապա հայեցաւ ա՟ծ 'ի տառապանս ն՟ր, և առաքեաց զհրեշտակապետն գաբրիէլ՝ առնել զհոգի ն՟ր։ Իբրև եկն գաբրիէլ, ետ նմա ողջոյն և ասէ. էկ մեղքաւորանս մարդդ ո̅յ՝ և համբերիր յուրախութեան երկնից՝ ՚ի վերինն եդեմ, ՚ի բնակութեան հրեշտակաց․ զոր պատմէ պօղոս թէ՝ զոր ակն ոչ ետես՝ և ունկն ոչ լուաւ՝ և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց ա̅ծ սիրելեաց իւրոց։ Եւ նա ասաց հրեշտակին՝ ներել սակաւիկ մի, մինչև գրեսցէ զճառս անձին իւրոյ։ Եւ յարուցեալ էառ քարտէզ և մուր ՚ի բաղանեաց, և նստեալ գրեաց այսպէս։

Ես իմ մեղքաւորանս որդին ձեր․ հայր իմ եփրեմիանոս․ և մայր իմ աննա․ և կին իմ մարգարիտ։

Ողջոյն թագաւորիդ և քահանայից քաղաքիդ միաբան ա̅մցն։ Ո՛վ լայր հա՛յր իմ ծերացեալ․ այլ մխիթարեա՛ ա̅մլ։ Յիշեա՛ զի դու զայս կեանքս խնդրէիր, և ես զերկնայինն։ Ետու զերկաթն, և առի զոսկին փոխարէն ՚ի տ̅նէ։ Ո՛վ լայր մա՛յր իմ և մի՛ տրտմիր․ մխիթարէ՛ զքեզ ք̅ս։

Յիշե՛մ զի դու գայիր և աղջկունքն առաջի քո. և հասեալ նց̅ 'ի վր̅ իմ, քարշէին զհերացս 'ի վր̅ երեսաց իմոց. և ես լայի՝ ո՛չ զայն՝ որ զիս քարշէին, այլ զայն՝ որ լայիր դու և աղէողորմ կսկծանօք հառաչէիր. և իմ զնա̅ հայեցե̅լ՝ գալարէր աղէքս. և ո՛չ իշխէի տալ ծանօթուե̅ յահէն ա̅յ: Մի՛ լայր և դու կի՛ն իմ մարգարիտ. զի ահաւասիկ պատրաստեցի ինձ և քեզ ճանապարհ, որ տանի 'ի կեանսն յաւիտենից: Եւ ծալեալ զթուղթն եդ 'ի մէջ ձեռին իւրում և խփեաց. և նո՛յն ժամայն աւանդե̅ց զհոգին իւր 'ի փառս ա̅յ: Եւ իջին ժ̅բ հրեշտակք 'ի ձև մարմնաւորաց և յայտնեցին քաղաքին և ասացին. արի՛ք գնացէք 'ի դուռն եփրեմիտանոսի՝ և գտէք զմարդն ա̅յ վախճանեալ: Եւ 'ի մէջ գիշերին դղրդեցաւ քաղաքն ա̅մ. և փութացին ջահս և մոմեղէնս՝ և գնացին գտին, որպ̅ս հրեշտակքն ասացին:

Եւ արկին ՚ի վ՟ր ն՟ր դիպակս պատուականս · և տեսին զի թուղթ ինչ գոյր ՚ի ձեռին ն՟ր · և կամեցան բազումք առնուլ զնա , և ո՛չ կարացին հանել ՚ի ձեռաց երանելոյն ։

Եւ մատուցեալ յառաջ քահանայ մի իմաստուն և ասէ · ո՛չ է պարտ առնուլ ումեք զթուղթն , այլ միայն նա՝ որ այսչափ ժամանակս կերակրեալ է զդա ։ Եւ ուղարկեցին խնդիր եփրեմիանոսի · և իբրև եկն՝ երկիր եպագ նմա և ասէ · մեղայ քեզ տ՟ր աղքատիկ · զի ո՛չ գիտէի թէ այսպէս տ՟ր էիր · և մեկնեալ զձեռն , և առեալ զթուղթն , եբաց և սկսաւ ընթեռնուլ ։ Եւ էր գրեալ այսպէս ։

Ես եմ ալեքսիանոս որդին ձեր · հայր իմ եփրեմիանոս · և մայր իմ աննա · և կին իմ մարգարիտ ։ Եւ իբրև լուաւ՝ իսկոյն ձգեաց զթուղթն ՚ի ձեռաց իւրոց , և անկաւ ՚ի վ՟ր մեռեալ մարմնոյն , և յինքն ամփոփել գոչէր և լայր · և ո՛չ կարէին հանել

՚ի

՚ի գրկաց նոր՟ զերիս աւուրս։ Եւ եկեալ մայր նոր՟ և կինն՝ ոչ կարացին մտանել առ նա վ՟ն ամբոխին։

Յայնժամ բերին գանձս բազում և ցանեցին շուրջ զամբոխին. և քակեցաւ ամբոխն զկնի գանձին, և ապա կարացին մտանել առ Աղեքսիանոս մարդն այ՟։ Եւ անկեալ մայրն ՚ի վ՟ր նոր՟. և հանեալ զստինսն, եդ ՚ի վ՟ր երեսաց մանկանն և ասէ. որդեակ իմ, թէ կենդանի՛ ես՝ խօսեա՛ ընդ տառապեալ մօր քոյ. և դնէր զերեսն ՚ի վ՟ր սրտին՝ և հեղոյր զարտասուսն. և ձայն բարձեալ լայր դառնապէս՝ և ողբայր աղիողորմ յոյժ։ Եւ եկեալ կին նոր՟՝ ընկեց զմատանին և ասէ. արդ՝ այ՞ս է սբ՟ գալուս որդ սիրելի իմ Աղեքսիանոս. մինչև յե՞րբ պահեմ զյիշելիքս քո։

Եւ ո՞ կարէ պատմել գրով զկոծումն և զողբումն նց՟՝ բոլոր քաղաքա̂ն առհասարակ։ Եւ յետ բազում լալոյն՝ տարեալ թաղեցին զերանելն նահատակին ք՟սի զ՟բն ալէքսիանոս, և շինեցին եկեղեցի ՚ի վ՟ր ն՟ր ։ Այլ կացեալք հայր և մայր ն՟ր կենդանի ը՟ ամ զկնի փոխման ս՟բյն ծառայելով և պատուաւորելով ս՟բ գերեզմանի ն՟ր ․ և յետ այնորիկ հանգեան խաղաղութ՟բ ՚ի ք՟ս ։

Իսկ ս՟բն ալէքսիանոս՝ փոխեցաւ ՚ի ք՟ս ՚ի հրոտից ամսոյ ժ՟ը ՚ի փառս ա՟յ հօր ամէն ։

Բարեխօսութ՟բ կամաւոր աղքատացելոյն վ՟ս ք՟ս, և օտարացելոյն ՚ի մարդկային ծանօթութե՟ց, ք՟ս ա՟ծ՝ տուր և մեզ ատել զկենցաղոյս զբաղմունս, և մերձիլ ՚ի ս՟բդ ս՟բց և ընդ ամ՟յն փափագելեդ,

Ամէն ։

Պատմութիւն Տէր Յուսկան · և Սրբոյ նորին Ստեփաննոսին։

Ի Թուականութեն ազգիս Հայոց մեծաց, ղճկ ամին, յերկիրն ռուշտունեաց ՚ի գաւառն տոսբայ ՚ի գօղայ քաղաքն, որ ասի արտամետ մերձ շամիրամակերտ մեծ դղեկին վանայ ։

Այր քահանայ ոմն՝ մեծ ազգի և մեծատուն, զարդարեալ ամ առաքինութբ, անուն նր ստեփաննոս։ Այս էր յոյժ պարկեշտ և ամօթխած · աղքատասէր և ողորմած · հիւրընկալ և մարդասէր · առատաձեռն և ամենաբաշխ· քաղցելոց կերակրիչ, և մեր կացելոց զգեցուցիչ· և յայլ ամ՟ բարեգործութ՟ս՝ ժիր և արի։ Նաև ՚ի պաշտօնս ած՟յ՝ և ժամակարգութ՟ս ս՟բյ եկեղեցւոյ, անձանձիր՝ աղօթասէր· և զի կէս գշ՟ր ամուլ էր՝ և ոչ ծնանէր· վ՟ս որոյ միշտ հայցէր առ Նմա պտուղ օրհնութ՟՝ և ժառանգ սեփհական։ Իսկ որ զկամս երկիւղածաց առնէ տ՟ր, լուաւ աղօթից նր՟, և ետ նմ՟ պտուղ զաւակ։ Եւ յօր մկրտութ՟են անուանեցին զնա յուսիկ· և է ամաց ելեալ տղայն՝ հայրն սկսաւ գրել ՚ի տախտ՟կի, և ուսուցանել մականն զգիրս ած՟ային · զի էր յոյժ հանդարտ՝ շնորհալի՝ և աստուածամիտ· երկարոգի՝ և քաղցր՟ձայն· յոյժ հեզ՝ և խոնարհ ծնողացն· և քաղցր՝ և սիրուն յաչս ամ՟ցուն։ Եւ յորժամ եղև մանուկն յուսիկ ժ՟գ ամաց՝ ծնօղքն ետուն զնա ՚ի քեռւն իւր առ մեծ վարդպ՟տն և խստակրօն ճգնաւորն՝ անանիա ՚ի մեծահռչակ աթոռն վարագայ ・ զի ՚ի նմանէ կատարեալ ուսցի զհին և զնոր կտակարանս ա՟ծային ս՟բ գրոց ・ և կացեալ անդ առ վարդապետն ամս ՟է ։ Նոյն և յոյժ հմուտ և տեղեակ ա՟մ ա՟ծաշունչ տառից , և պատուիրանացն ա՟յ ・ և ՚ի չափ հասակի լեալ մանուկն յուսիկ՝ ծնօղքն նո՟ր կամեցան մուծանել զնա ՚ի կարգ ք՟հի ։ Նա հայրն նո՟ր ստեփաննոս քահանայն՝ գնաց ՚ի վարագ՝ էառ հրաման ՚ի վարդապետէն ։ Նա նա հրամայեաց մանկանն յուսկայ գնալ ընդ հօրն ՚ի տունն , և հնազանդիլ հրամանաց ծնօղացն՝ և առնել զհարսանիսն ։ Նա նա ոչ կամէր ・ զի ուխտ եդեալ էր ընդ ա՟յ սրբութ՟բ պահել զկուսութ՟ին իւր մինչև ՚ի մահ ・ բայց այժմ ոչ իշխեաց ընդդիմանալ հրամանաց վարդապետին ・ այլ՝ արտասուօք համբուրեաց զաջն , և ելեալ ՚ի վարագայ գնաց ը՟ հօրն իւրում ՚ի տուն , և արարին զհարսանիսն ։ Նա յորժամ առանձնացան յառագաստին միայն ը՟ հար

սին

տին, յիշեսցէ զուխտն իւր որ ը՟ ա՟յ. այլեւ զողջախոհն յովսէփ՝ եւ զերանելին ալէքսիանոս՝ յօրինակ եղեալ իւրն։ Ով քաղցրութ՟ ասէ յաղջկին. գիտասցիր՝ քո՛յր իմ լաւ հոգւոյ. զի գրեալ է ՚ի գիրս կանոնաց ՚ի մ՟ր առաքելոցն, եթէ որ դիցէ ուխտ առաջի ա՟յ վ՟ն կուսուե՟ և սրբուե՟ անձին իւրոյ՝ և ո՛չ պահիցէ մինչև ՚ի մահ, այլ՝ ուխտազանց լիցի ամուսնուե՟ մեղօք, նա՛ ուրացող լինի ք՟ի, և առնելի ա՟մ ս՟բցն ա՟յ. Ճշմարտութ՟ այժմ ասեմ քեզ զխորհուրդն իմ. զի ես ուխտ եդեալ եմ ը՟ ա՟յ սրբութե՟ և անարատութ՟ պահել զկուսութիւն իմ մինչև ՚ի մահ։ Զի թէ ամուսնութ՟ ապականեցից զկուսուի՟դ քո՝ լինիմ ուխտազանց և ուրացող։ Ասէ աղջիկն. եթէ ամուսնութին անօրէնուի՟ և ապականուի՟ է, ապա զիարդ ՚ի մ՟ր եկեղեցի՝ ա՟յ հրամանաւ, և ձեռամբ քահանայից, խաչիւ և աւետարանաւ դնեն պսակ ՚ի գլուխ փե-

սային

սայէն և հարաւէն՝ և լինելոյն մարմին մի ըստ հրամանի ա՟յ ։ Ասէ մանուկն Յուսիկ. ծանիր՝ քե՛զ. զի պսակն զոր քահանայքն դնեն ՚ի վ՟ր գլխոց մերոց՝ այն մարմնաւոր է և ապականացու. և ընդ մեռանել մարմնոյն՝ անցանեն ընդ նմա ա՟մ փառք և մեծութ՟ք և վայելչութ՟ք աշխ՟իս։ Իսկ այն կենաց պսակն և փառքն՝ և ուրախութ՟ք ս՟րբցն, անանցանելի և յաւիտենական է. և խնկոյն լոյս ա՟ծային շնորհացն ծագեաց ՚ի խորս աղջկանն։ Եւ ասէ ցՅուսիկ. արդ՝ դիցուք ուխտ առաջի ա՟յ ծածուկ ՚ի մարդկանէ, զի ՚ի միասին կացցուք սատ ՚ի տան հօր քում. և պահեսցուք անարատ սրբութ՟ զկուսութիւն մեր՝ ո՟պ զհոգևոր և եղբայր ըստ հաճոյից կամացն ա՟յ։

Եւ զայս լուեալ պատանոյն՝ ասէ. տ՟ր ա՟ծ մեր պահեսցէ զմեզ յուխտին մերում՝ զոր ուխտեցաք՝ և փրկեսցէ յա՟մ որոգայթից հոգւոյ և մարմնոյ։ Եւ ապա ՚ի ծունկս անկեալ

առ

արտասուօք և բազում պաղատանօք՝ յանձնեցին ա̃յ զինքեանս։ Եւ զկնի աղօթիցն առանձնացեալ զատ 'ի միմեանց ննջեցին. և յորժամ հարին զգիշերային ժամն ; յայնժամ յարուցեալ մանուկն յուսիկ հոգևոր սիրով մխիթարեց զաղջիկն. և յորդորեաց ջերմ սիրով և երկիւղիւ կալ յաղօթս առ ա̃ծ։ Եւ ինքն ելեալ 'ի տանէն ուրախութ̃ գնաց յեկեղեցին 'ի ժամ աղօթիցն։ Եւ այնպէս ահիւն և երկիւղիւն ա̃յ՝ կացին և մնացին 'ի միասին անարատ սրբութ̃՝ զամս ժ̃զ անյայտ 'ի մարդկանէ. բայց միայն ծածկագիտին ա̃յ յայտնի էր։ Եւ ապա քահանայն ստեփաննոս՝ խորհեցաւ ձեռնադրել զորդին իւր քահանայ. վ̃ս որոյ կոչեաց զանանիա վարդապետն, և հանդէս մեծ արարեալ բազմութ̃ եպիսկոպոսաց՝ վարդ̃պտաց՝ քահանայից, որք ա̃մքն կամեցան, և ձեռնադրեցին զյուսիկ քահանայ. և արարին ուրախութ̃ մեծ հոգւոր և մարմնաւոր զուարթ է։ Այս յետ երկուց ամաց ՚ի Թուին ՌՃՀԵ ամի ս՟բ քահանայն ստեփաննոս՝ փոխեցաւ առ ք՟ս։ Այս ս՟բ ք՟հնայն տ՟ր յուսիկ՝ որ աւուր կրթէր զանձն իւր պահօք և աղօթիւք · մաքուր սրբութ՟բ, և ա՟մ առաքինութ՟բ։ Այս յետ ժամանակաց ինչ՝ եղև գալ զօրացն թաթարաց յարևելս ՚ի գերել զք՟ս հայոց։ Այս գեր՟ել զբազումս ՚ի գաւառէն տոսբայ և յրուշտունեաց՝ և դարձան ՚ի տեղիս իւր՟եանց բազում աւարաւ։ Այս ընդ բազմաց գերելոցն՝ գերեցաւ և անուանեալ կինն յուսիկ քահանայն ՚ի գիւղաքաղաքէն արտամետոյ · և տարեալ ՚ի շահաստան քաղաքն Թաւրէզ վաճառեցին զնա կնոջ միոյ բոզաւագի, որ է պոռնկախառնիչ։ Այս կինն այն բոզաւագ՝ էր հաւատով քրիստոնեայ · իբրև գիտաց երեցկինն թէ՝ բոզաւագն քրիստոնեայ է։ Աղաչեց զնա և ասաց թէ՝ ես երեցկին եմ պարկեշտութե̄ կացեալ և անմերձ 'ի խառնակութե̄ անօրինաց։ Զի այն թաթարն՝ որ զիս գերեաց՝ յառաջին օրն հիւանդացաւ, և ա̄ծ իմ պահեց զիս անմերձ 'ի մեղաց. վ̄ս որոյ՝ աղաչեմ զքեզ ո՛վ կին, ո՛չ տալ զիս 'ի գործ մեղաց. զի գիտեմ կերպաս նկարել. այս է՝ աբրշում բանեցնել. և այնու քեզ առաւել վաստակ առնեմ, և՛ի մեղաց զատ մնամ. զի կին քահանայի եմ արդարութե̄ կեցեալ՝ և զարշիմ 'ի խառնակութե̄ անօրինաց։ Զայս իբրև լուաւ բոզաւագն 'ի կնոջէ իրիցուն, արար ը̄ս կամաց ն̄ր։ Եւ երեցն յասիկ՝ է՛ր 'ի խնդիր ամուսնոյն իւրոյ. և գնացեալ եգիտ անդ 'ի շահաստանն քաղաքն Թաւրէզ. և կացեալ առաջի բոզաւագին 'ի կերպ մուրացողի։ Եւ հարցեալ ցնա բոզաւագն ասէ. Ի՞նչ մարդ ես. և նա ասէ. երէց եմ և գերոյ տէր։ Եւ կինն այն եցոյց նմա զիւր ամուսինն. և՛ի խօսիցն իրիցուն ը̄ն կնոջ իւրոյ, տեսանէր բոզ աւագն, զի շունչ քահանային բոցածաւալ լինէր զլոյս ելանէր, և դարձեալ մտանէր 'ի բերանն իւր նշան անմեղուե̅ նց̅: Ո՜վ կինն բոզաւագ՝ հարցեալ և գիտաց թէ՝ դեռևս տղայ ո՛չ է եղեալ նց̅: Յայնժամ ազդմամբ խնամոյն ա̅յ ասաց բոզաւագն ցէրեցն թէ՝ 'ի քեզանէ իրաց մի խնդիր ունիմ, դու զայն ինձ տուր՝ և ես ըզկինդ քո տաց քեզ զ ձրի: Ասէ երէցն· զի՞նչ է խնդիր քո տէ՛ կին· և նա ասաց· քեզ որդի տալոց է ա̅ծ՝ և այն քահանայ լինելոց է: Զայս հայցեմ 'ի քէն՝ տո՛ւր հոգւոյ իմոյ զառաջին պատարագն որդւոյ քո՝ 'ի քաւու̅ի և 'ի թողութ̅ի բազում մեղաց իմոց: Ասէ երէցն· եղիցի ըստ բանի քում· և զխնդրուածս սրտի քո՝ տ̅ր կատարեսցէ: Ասէ բոզաւագն· ահա կին քո անփորձ 'ի չարեաց, և անմերձ 'ի յանօրինաց: Ո՜վ ահա այլ ես ե̅ձ դեկան ձեզ 'ի պէտս շինութե̅, երթայք ողջութբ̅ և խաղաղութբ̅:

Լաւ առե՟լ երէցն յուսիկ զկինն իւր՝ և եկե՟լ ՚ի գիւղն իւրե՟նց արտասմետ՝ արարին շինութ՟ իբրև զամս է՟ ։ և յաւարտ շինուե՟յն ա՟մի, ասէ երէցն ցամուսինն իւր · դու ինքնին գիտես՝ զի ա՟մ շինու՟ծս մեր զորս արարաք , և ա՟մ կահք և կարասիք մեր՝ զոր այժմ ունիմք , այս ա՟մ ՚ի պարգևաց ընչից բազմագին է՝ զոր շնորհեաց մեզ , և հաւատով խնդրեաց · իբր թէ՝ ՚ի մէնջ եղիցի որդւոյ առաջին պատարագն նո՟ր ՚ի քաւութի և ՚ի թողութ՟ մեղաց իւրոց · և զի մեք ուխտեցաք առաջի ա՟յ , զի սրբու՟թ պահեսցուք զկուսութի՟ս մեր մինչև ՚ի մահս մեր · և ուստի՞ ծնանիցի դու որդի՝ որ այն լինիցի քհ՟նայ · և զխնդրուածս տիկնոջն այնորիկ կատարեսցէ ։ Լաւէ երեցկինն · տէ՛ր՝ հանապազ ընդիս ասէս թէ՝ առանց հրամանին ա՟յ տերև մի ՚ի ծառոց ո՛չ անկանի · արդ՝ զոր ինչ հրաման ա՟ծ են՝ օրհնեալ եղիցի յաւիտեանս ։

Ասէ քահանայն յուսիկ. եւ երթայց 'ի ս՟բ եկեղեցին՝ եւ անդ 'ի տուէ և'ի գիշերի աղօթիւք պաշտամամբ եւ պատ՟րգօք աղաչեցից զտ՟ր ա՟ծ. եւ դու 'ի տան քում 'ի սենեկի աղօթեա՛ միշտ ջերմ արտ՟ասու̂օք, թերեւս մարդասէրն ա՟ծ յայտնեսցէ մեզ զհաճոյս կամաց իւրոց։ Ապ̂ 'ի մ՟ջ այսմ ուխտի անցին աւ̂ուրք իբրեւ երեսուն, յազգ՟մանէն ո՟յ եկն նու̂իրակ 'ի ս՟բ էջ՟մայ վարդ՟պտ մի ստեփաննոս անուն, յո՛յժ առաքինի եւ ճգնազգեաց, զգաստ եւ պարկեշտ յամ՟ ճանապարհս ա՟ծայինն՝ յո՛յժ ծերացեալ ալեօք, գոյ 'ի քաղաքն արտամետ, եւ կացեալ անդ զաւ̂ուրս ինչ։ Ապ̂ 'ի կիրակի գիշերի՝ զկնի առանձնական աղօթիցն, տեսանէր տեսիլ երազոյ. զի էր տ՟ր յուսիկ քահանայն զարդարե՟լ սպիտակ եւ պայծառ քահանայական զգեստիւ̂, եւ խաչ գաւ̂ազան ոսկիազօծ՝ ականակուռ ընդելուզեալ մարգարտօք՝ ծաղկե՟լ շուջանօք յաջոյ ձեռին նր̄, և յահեակ ձեռին սբ̄ աւետարանին: Եւ ՚ի գլուխ գաւազանին՝ ետես բուսեալ կանոն [illegible] տերեւով և մեծավայելուչ վարդ մի՝ բոլորազարդ ծիրանածաւալ և կարմրափայլ՝ որպ̄ զհուր ՚ի վառ· և զարհուրեալ ՚ի տեսլենէն զարթեաւ: Եւ զկնի արձակման առաւօտեան ժամուն՝ վարդապետն այն, կոչե̄ց առանձին առ ինքն զե̄ր յուսիկ քահանայն· և պատմեալ յաւանդատունն, և երդմամբ էհարց զնա վ̄ս վարուց և առաքինութե̄ նր̄: Իսկ նա՝ յառաջ ոչ կամեցաւ յայտնել նմա բան ինչ՝ մինչ որ ընդ բանիւ արար զնա վարդապետն· և ապա քահանայն յուսիկ, սկսաւ պատմել նմա խոստովանաբար զամ̄՝ մի ըստ միոջէ: Եւ վարդապետն ստեփաննոս՝ հիացեալ ասէ· օրհնեալ է ած̄՝ որ տայ զօրութի̄ և համբերութի̄ սիրողաց իւրոց: Եւ ապա յետ հոգեւորական մխիթարութե̄ն, ասէ

վար

վարդապետն ցանէր յուսոյն · գիտես, որդեակ՝ զի 'ի սկզբանէ զնախնիքն մեր՝ արու և էգ ստեղծեաց, զի ամուսնութ̅բ աճեսցին և լցցեն զերկիր· ո̅չ և առաքեալն պօղոս ասէ · պատուական է ամուսնութ̅ի· վ̅ա որոյ պատուիրանադրութ̅բ տ̅ն ես տամ ձեզ վերստին հրաման ամուսնութ̅ե ձերոյ։ Ապա յետ աւուրց ինչ, յղացաւ կինն տ̅ր յուսկայ · և ետ ա̅ծ ն̅մ զաւակ արու · զաղաւնին ամբիծ զք̅ն ստեփաննոս , որ կրթ̅ել վարժեցաւ 'ի կրօնս ա̅ծպաշտութ̅ե ։ Նա ջերմափեալ էհաս 'ի գիտութ̅ի բարւոյ և չարի · սկսաւ հետևիլ բարեաց, և խորշիլ 'ի չարեաց պարկեշտ վարուք և ուղիղ գնացիւք · կրթէր զանձն իւր 'ի պահս և յաղօթս սրբութ̅բ · հեռանալով 'ի չարէ և յանմիտ բարուց կանանց 'ի տիս տղայութ̅ե , և 'ի հասակն մանկութ̅ե · զկատարելոցն ունէր զինքեան զգիտութ̅իս · խոհեմ և իմաստուն · ժուժկալ և համբերօղ· ուսում

նա

նաւէր և ողորմած. հլու և հպատակ հ͞րմանաց ծնողացն. հեզ և հանդարտ առ ա͞մնն: Եւ երբ յաւուր միում գնայր նա ՚ի Ջաղացն՝ տանիլ ցորէն ՚ի տանէ իւրեանց ՚ի գիւղն յանդղ, առ ՚ի աղալ յաղօրիսն: Եւ զի էր յաւուրսն յայնոսիկ սովի հացի. և աղքատքն յոյժ տառապէին. և ետես, զի բազում աղքատք հաւաքել էին ՚ի դուռն Ջաղացին: Եւ ինքն բարեսնունդ պատանեկին ստեփաննոս՝ բաժանեաց զա͞մ ցորեանն աղքատաց կուց կուց, և մնաց խորգն դատարկ: Ապա անտես ՚ի մարդկանէ ելից զայն մանր աւազով, և ճերմակ մոխրով. և ասաց ոմանց օգնել ինքեան՝ և բառնալ գրաստուն իւրոյ. և բարձեալ զէշն՝ եբեր յարտամետ, վարեց զէշն ՚ի բակն իւրեանց. և ինքն փախուցեալ գաղտաբար անկաւ ՚ի ճանապարհ, և գնաց ՚ի բերկրի: Իսկ երէցն յուսիկ՝ առեալ զբեռն ՚ի յիշոյն, և տարաւ ՚ի տունն. և մայրն բացեալ զբեռն՝

էհան ալիւր, եւ արար խմոր. եւ հասուցեալ զհացն՝ ասաց խրխցուն. ե՛լ ՚ի դուրս, եւ տե՛սա զտղայն՝ եւ ասամ, որ զայ հաց ուտէ, զի քաղցեալ է. զի կարծէին թէ՝ ընդ տղայան գեղջին ՚ի խաղէ. եւ կամ թէ աշխատեալ ՚ի ճանապարհին՝ եւ ննջեալ է ուրեք յորմտակ, եւ կամ ՚ի տանիս։ Այլ ելեալ յուսաւիկն շրջեցաւ Ժ̅ գիւղն քաղաք՝ եւ ոչ եգիտ։ Այլ մայրն յո՛յժ տագնապէր մտօքն թէ՝ զի՞նչ եղեւ տղայն։ Այլ յերեկոյին հասեալ՝ առաւե՛լ հոգային ծնօղքն, զի մինչ ՚ի յայն մնային՝ թէ ո՛ւր եւ իցէ, երեկոյին հասեալ ՚ի տունն գայցէր. եւ զգիշերն ամ̅ անքուն կացե̅լ ծնօղքն՝ հոգային զտղայն։ Այլ մանաւանդ թէ՝ առաւե՛լ եւս մայրն ըստ մայրական գթոյն աղէկիզեալ լայր դառնապ̅էս. որպ̅ եւ է՛ սովորութի̅ մօր հոգալ զորդւոյս. վա՛յ՝ թէ քաղցեալ է. եւ եղո՛ւկ՝ թէ ծարաւի է. ո՛չ թէ զի՞նչ պատահեցաւ նմա. ո՞ւր է՝ եւ կամ զիա՞րդ կեայ։

Այլ

Եւ սոյնպէս զգիշերն ամ՟ն աղէկիզել՝ լացին դառնապէս հայրն և մայրն։ Եւ 'ի վաղիւն գնացին աստ և անդ, 'ի գիւղ և 'ի քաղաք. գնաց հայրն 'ի յոստան՝ և մայրն 'ի վանս, հարցին և ոչ գտին, դարձան 'ի տունս իւրեանց՝ և լային անմխիթար տրտմութ՟բ ըզցայգ և զցերեկ։ Եւ ապա յետ ժ աւուր հանդիպեցաւ ոմն 'ի ծանօթից նց՟, և ետես զն՟ա 'ի լաց տխուր դիմօք. Եւ հարցեալ՝ գիտաց զպատճառն. և ասաց թէ՝ զստեփաննոսն ես տեսի այս ինչ օր 'ի գիւղն կոչմանի. և ասացի թէ՝ ի՞նչ բանի եկեալ ես աստ. և նա ասաց թէ՝ հայրն իմ յուղարկեաց զիս երթալ 'ի բերկրի 'ի պէտս այս ինչ բանի։ Եւ նոքա ուրախացեալ օրհնեցին զայրն և զճանապարհն նորին։ Եւ յարուցեալ հայրն տէր յուսիկ գնաց 'ի բերկրի. և ել 'ի վանս արգելան, և ետես զտղայն, և խնդութ՟բ լցեալ ասաց. որդեակ՝ զի՞նչ գործեցեր ը՟դ մեզ. մայրն քո՛ և ես՛

տաս

տառապեալ լալոտ աչօք՝ և որոնեալ խնդրեցաք զքեզ 'ի վանս և յաստանս՝ և 'ի գիւղն մ̅ր ։ Եւ ապա ասաց Թէ՝ մայրն քոյ հաց հատոյց՝ և ես եղեալ շրջեցայ ընդ գիւղն մ̅ր , և ո՛չ գտի զքեզ ։ Եւ ասաց ստեփաննոս Թէ՝ ուստի՞ արար մայրն իմ զհացն։

Ասէ երէցն ․ յալիւրէն՝ զոր դու բերիր 'ի ջաղացէն։ Ասէ ստեփաննոս Թէ՝ այն ալիւր ե՞րբ էր։ Եւ հայրն ասէր ․ ո՛րդեակ՝ ցորեան տարար 'ի ջաղացն՝ և ալիւր բերիր ․ զի՞ մ՛րդ չէր ալիւր։ Եւ ապա հաւատարմացաւ բանն 'ի սիրտն ստեփաննոսին ․ և ասէ ցհայրն ․ տ̅ր՝ յորժամ հասի ես 'ի ջաղացն , տեսի անդ բազում աղքատս՝ որք հայցէին յինէն ողորմութի ․ և ես ետու նց̅ կ՛ուց կ՛ուց զցորեանն մ̅ր , և մնաց խորգքն դտ̅րկ։ Ապա հնարս իմացայ , և լցի զնոսա մանր աւազով և գերմակ մոխրով ․ և բարձեալ էշոյն՝ բերեալ 'ի գիւղն՝ արարի զգրաստն բեռամբն 'ի բակն

մեր , և ես փախեայ · զի վախեցայ 'ի
քէն և 'ի մօրէն իմմէ , թէ ծեծէիք
զիս , և կամ տրտնջէիք զինէն · վ̅ն
այնորիկ փախեայ և եկի աստ ։ Յայն
ժամ էրէցն յուսիկ՝ անկաւ յերկիր՝
և արտասուօք գոհանայր զա̅յ · և ա‿
պա ուրախութե̅ լցեալ և ասէ · օրհ
նեալ է ա̅ծ , ո՛րդեակ՝ որ 'ի ձեռն քո
արար զայդ սքանչելիսդ ։ Եւ արդ՝
արի՛ ո՛րդեակ՝ զի երթիցուք 'ի տունս
մեր առ մայրն քո · զի և նա յո՛յժ
տագնապի վ̅ն քո · և 'ի տեսանելն
զքեզ՝ ուրախասցի 'ի վ̅ր քո ։ Ասէ ստե
փաննոս · մի՛ արասցէ ա̅ծ , որ այլ ես
'ի յայս վանացս ելանեմ · աստ կե‿
ցայց՝ որքան եմ կենդանի · և աստ մե‿
ռայց և թաղեցայց ։ Եւ 'ի շատ ողո‿
քելն և 'ի աղաչելն հօրն զորդին
թէ՝ է՛կ , որ երթամք 'ի տունն մեր ·
գան ժողովէին միաբանքն ուխտին՝
և ասեն ցնա · ո՛րդի , ե՛րթ գնա՛ ընդ
հօրն քում , և տես զմայրն քո · և
յետ աւուրց ինչ դարձեալ դու է՛կ

աստ

աստ 'ի վանս առ մեզ։ Ո՜վ Նա ոչ լը
ւաւ նոցա, և ոչ համբերեաց գնալ ընդ
հօրն իւրում։ Ո՜վ խեղճք ոչ կամեցին
համբերեցուցանել զտղայն, այլ ա-
սեն միաբանքն ուխտին ցհայր ման-
կանն։ Տէր յուսաւիկ. արդ՝ արի՛ դու՝ և
երթ գնա՛ 'ի տուն քո՝ և առեալ ըզ
մայր տղայիդ բերցես աստ, զի և նա
տեսցէ զտղայն իւր։ Ո՜վ այնուհետ մնաց
ստեփաննոս 'ի նոյն վանքն արգե-
լան. և վարժեալ ա̄ծային գրոց գի-
տունէ՝ եղև աբեղայ։ Ո՜վ հայրն ա-
սաց նմա զգերելն մօրն և զազատիլն,
և զխնդրելըն բոզաագին։ Ո՜վ Նա 'ի
պատարագին սկսաւ յիշել զբերին,
յայնժամ տեսիլ ահեղ և զարմանա-
լի երևեցաւ նմա. քանզի ափշութի
կալաւ զնա. և տեսանէր զինքն յեզր
արեան ծովու մի. և կինն այն բերեր
'ի մէջ արեան ծովու։ Ո՜վ որքան
նորընծայ քահանայն զաղօթս սրբոյ
պատարագին ասէր՝ կինն այն 'ի դուրս
գայր յարեան ծովէն. և եղեալ ար-

տաքս՝ եղաւ̂ ՚ի կամարքն ամենայն, և մաքուր յարեան ծովէն. և է̄. պատառ բագի չափ յամեցաւ̂, և ապա արձակեաց զպատարագն: Յաւ̂ ՚ի հարցանել ծերոցն զպատճառ յամենայնին, ապա ասաց նա զտեսիլն՝ զոր ետես. և որք լուա̂նն՝ ուրախացեալ փառս ետուն ա̄յ. Յաւ̂ ՚ի վաղիւ̂ն հարկի̂ աղաչեցին զնա ասել՝ և հայցեին ՚ի նմանէ պատարագ մատուցանել. և նա ոչ էառ յանձն. այլ այն մին պատարագաւ̂ն եկաց զա̄մ ժամանակս կենաց իւրոց՝ ասելով թէ արեան ծովուն ոչ եմ կարող ընդդէմ կալ. և կացեալ ՚ի նոյն վանս արգելան. և անդ վարժեալ եղև վարդապ̄տ ձրջ մարտունէ̄ն: Յաւ̂ յերկարել ՚ի բզ̄մ աւ̂ուրս բարի և առաքինասէր վարուք ՚ի հաճոյս կամացն ա̄յ. և եղև ՚ի վերջումանց ժամանակաց և յապատակմանէ հենից պատերազմաց այլազգաց, եղանել մե̄ջ վարդապետին ստեփաննոսի՝ յերկրէն տարբե րունոյ՝ 'ի մէջ մենաստանէն արգելանաց: Այս գնացեալ 'ի մէջ լեառն՝ որ կոչի Խաչ գլուխ: Ուր մարմին առաքելոյն Հայոց Թադէոս, և յետ նոցա մարմինն Գրիգոր Լուսաւորիչն մեր՝ խաչ էին դըրոշմեալ մատամբն 'ի գլուխ լերինն. և օծեալ լերինն 'ի վերայ կարծր վիմին յանապատն մերձն Խաչակայ պարթևի Հայոց հայրապետին. ուր բազում ճգնաւորք և խաչակրօն միանձունք բնակէին անդ: Որոց էր առաջնորդ՝ մեծ վարդապետն Գրիգոր Վկայասէրն՝ Հրեղէն լեզուն. որ էր այր կորովամիտ և բանիբուն, վարժեալ 'ի գիրս աստուածային հին և նոր կտակարանացն: Այս գնացեալ անդ 'ի յանապատն մերձն Խաչակայ՝ մեծ վարդապետն Ստեփաննոս՝ և անդ անտանելի և խստակրօն ճգնութեամբ կատարէր աստուածահաճոյ վարս իւր: Այս քանզի ո՛չ թաքչի քաղաք՝ որ 'ի վերայ լերինն կայցէ. և ո՛չ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ՝ 'ի վերայ

աշ

աշտարակի, զի ամ՟քն՝ որ 'ի տան Յ՟իս իցեն, զլոյսն տեսցեն։ Այլ ելանէր համբաւ ճգնութե՟ վարուց նր՟ ընդ ամ՟ շրջակայ գաւառն եւ յամ՟ հեռաւոր տեղիս. եւ գային առ նա բազում դիւահարք եւ ախտաժէտք եւ պէս պէս ցաւագարք. եւ աղօթիւք սր՟ վարդապետին՝ ամ՟քն ըստ հաւատոց իւրեանց անուամբն Ք՟ի այ՟ գտանէին զբժշկութի՟ եւ զառողջութի՟ հոգւոց եւ մարմնոց. եւ ուրախութ՟ դառնային 'ի տեղիս իւրե՟նց՝ եւ փառաւորելով զՔ՟ս։ Եւ այնքան տարածեցաւ համբաւ սքանչելեաց նր՟ ը՟ ամ՟ երկիր, մինչ զի այլազգիքն եւ մահմետականքն եւս ամենեքե՟ն լուեալ զարմանային։ Եւ ոմանք 'ի նց՟նէ հայհոյէին զնա. սուտ եւ խաբեբայ կարծէին զնա՝ ասելով թէ՝ այսպիսի հրաշագործու՟ի եւ քարամաթ՝ միայն այ՟ է գործ, եւ ոչ հողեղէն մարդոյ։ Եւ մի ոմն 'ի յանհաւատ յանօրինացն, չարագործ եւ ժանտաբարոյ, որոյ անունն էր իւ-

սիւք · 'ի բերդէն յամկոյ · արուեստ-
տին մասգործ, որ էր ղասալ ըստ
չար բարուց իւրոց · կամեցաւ նեն-
գութբ փորձել զմր վարդապետն · և
զնմ հրաշագործութին՝ և զբարի համ-
բաւն սրտել և քամահել: Նա ելեալ
գնաց 'ի վանքն յերերնոյ՝ յանապատն
մեծի խաչակոյ · զինքն քրիստոնեայ
առնելով, զի լաւ գիտէր զլեզու հայ-
ոց · և ասէր 'ի միտս իւրում թէ հոգեւ-
որ բժշկութի և օգտութի ոչ կարեմ
խնամոյ և առնել · այլ՝ կամիմ մար-
մնական ինչ կերպիւ փորձել զսքան-
չելեաց համբաւ քրիստոնէից: Նա
դնէր 'ի միտս իւր զկոճն՝ զոր 'ի վեր
նոր կատարէր զմիան 'ի խանութն, հայր
իւր անուանեց զկոճն՝ և ասէր թէ,
'ի չոր փայտս այս երևեցի նշան
ինչ, ապա հաւատամ թէ՝ ճշմարիտ
է հաւատ քրիստոնէից՝ և համբաւ
սքանչելեացն Քի և սրբոց իւրոց:
Նա մտեալ առ մր վարդպտն ան-
փաննոս իբրև զքրիստոնեայ · երկր

պագու̅ն մատուցանէր, և հայցէր բաժին աղօթից նր̅· տայր մարմնական ինչ պարգևս եկեղեցւոյն՝ և վարդապետին· և քրծնելով աղաչէր, և կեղծաւորութ̅ անէր, աղաչեմ զքեզ՝ յիշել զհայրն իմ յարժանաւոր աղօթս քո 'ի ժամ ս̅բ պատ̅րագին: Ասէ ս̅բ վարդ̅պետն ասէ ցնա· զի՞նչ է անուն հօր քոյ: Ասէ նա ասէ· կոձիկ է անուն հօր իմոյ, տ̅՛ր հոգևոր: Ասէ այն գիշերին, զի էր կիրակէ՝ եյարու̅ե տօն տ̅րունի, ս̅բ վարդապետն ստեփաննոս՝ յառանձնական աղօթս իւր՝ զոր 'ի գիշերի մատուցանէր, արտասուաւա հառաչ պաղատանօք հայցէր յա̅յ ողորմութ̅ի՝ և բժշկութ̅ի՝ և պայծառութ̅ի կոձկին: Ասէ 'ի վաղիւն եկեալ մագործն 'ի վանացն՝ համբուրեց զվարդապետն՝ և գնաց 'ի տուն իւր: Ասէ իբրև էհաս մերձ խանութին՝ էառ զհոտ անուշու̅ե· և բացեալ զդուռն խանութին, ետես զկոձն, զի կանանչացեալ էր ազգի ազգի տերևով· և ուղէշա արձակեալ՝ որ ոչ էր տեսեալ այն մարդոյ։ Այ՟ ապա հոգոց հանեալ՝ եւ արտասուահոս ողբովք երանի՛ տայր քրիստոնէիցն եւ իւրեանց հաւատոցն։ Այ՟ ընթացեալ ՚ի տունն առ ընտանիսն եւ յո՟մ բնակչացն, պատմեաց զմեծ եւ զարմանալի հր՟շն· որ եւ ա՟մքն եկեալ տեսին զքանչէլիսն, եւ հիացեալ փառս ետուն այ՟, եւ երկրպագեցին ՚ի հաւատոցն իւ՟րնց։ Այ՟ ապա մատգործն իւսիւք՝ առեալ զկոճն այնպիսի կանաչացեալ շքեղութ՟՝ եդ ՚ի վե՟ր գլխոյ իւրոյ· եւ ա՟մ ընտանեօքն եւ ազգականօքն գնացին առ ս՟բ վարդապետն ստեփաննոս ՚ի վանքն էրեբոնոյ· անկան առ ոտս նր՟, եւ հայցէին զներողու՟թի եւ զթողութի յանցանաց· եւ ասէր թէ՝ հայր ս՟բ՝ ես խաբէութ՟ փորձեցի զքեզ· եւ ապա խնդրեաց զմկրտութի։ Այ՟ ս՟բ վարդապետն մկրտեաց զնա ա՟մ ընտանեօքն եւ ազգականօքն՝ յաղբիւր անապատին մե՟ծին սահակայ· զոր այն երև տեսին ս՟ աջն , լոյս սաստիկ իջեալ յերկնից 'ի ժամ ս՟բ մկրտութե՟ վերայ սքանչելեացն Այ՟ · և եղև ուրախութ՟ և ցնծութ՟ մեծ ամ՟ քրիստոնէից։ Եւ ապա ս՟բ վարդապետն Ստեփաննոս եմուտ 'ի տաճար ս՟բյն Սահակայ , և արտասուալից պաղատանօք խնդրեաց յԱյ՟ , զի այնու կանանչացեալ կոծին , բազում ցաւոց առողջութ՟ եղիցի։ Եւ ևս ծր՟ ազգի զանազան ախտից առողջութ՟ լիցի · և մանաւանդ թէ կատաղեալ շանց և այլ ամ՟ գազանաց՝ որք խածանեն զմարդիկ։ Նաև ականջացաւոց՝ և ատամնացաւոց՝ բերանացաւոց՝ գլխացաւոց՝ փորցաւոց՝ 'ի ծաղկաբերութ՟ կանանց՝ 'ի ջերմ ցաւոց՝ 'ի դիւահար սուր դողմանց՝ 'ի յախտից չար բորոտութ՟ց՝ և յամ՟ հիւանդութ՟ց · որք հաւատով դիմեալ գան՝ հեռաւորք և մերձաւորաց՝ առցեն զառողջութ՟ իւրաքանչիւր ցաւոցն։ Եւ զկնի աղօթիցն՝ ապա ետես ս՟բ վարդապետն , զի ձեղունք տաճարին բացան ․ և յերկնից սաստիկ լոյս փայլատակե̄լ՝ եմուտ ՚ի տաճարն ․ և ընդ լուսոյն բազմութիւք զօրաց հրեշտակաց՝ և՛ի միջի նոցին ահեղակերպ և զուարթատեսիլ երիտասարդ մի՝ նստեալ ՚ի վ̄ր չորեքկերպեան աթոռոյ , զոր երեք սրբեան քաղցրաձայն բարբառով բերեալ՝ եդին ՚ի վ̄ր ս̄բյ սեղանոյն։ Եւ նա ինքն ք̄ս ձայնեալ առ ս̄բ վարդապետն ստեփաննոս՝ և քաղցր բարբառով ասաց․ կատարեցին խնդրուածք քո՝ զոր հայցեցերն՝ և զոր հայցեսդ, ո՛վ սիրելի իմ․ և այս ամփոփեցաւ տեսիլն։ Եւ յայնմ օրէ մինչև ցայսօր և առ յապայ՝ հաւատացեալք և անհաւատք, որք ՚ի հեռաւորաց և՛ի մերձաւորաց դիմեալ՝ գան հաւատով և յուսով յուխտն ՚ի վանքն ս̄բյն սահակայ , առնուն ըզկատարեալ առողջութ̄ի հոգւոց և մարմնոց․ և զփարատումն ա̄մ ցաւոց՝ շնորհօքն ք̄ի և աղօթիւք տ̄ր յուսա կայ որդւոյն ստեփաննոս վրդ̅պտին։ Ապա ՚ի յաւուրս աղուհացից՝ զկնի տօնի ս̅բյ լուսաւորչին՝ ՚ի կիրակէի առաւօտուն, զկնի գիշերոյին ժամուն՝ ս̅բ վարդապետն ստեփաննոս՝ գնաց առանձին յարեւելեան կող̅մն տաճարին․ և ը̅ս իւրում սովորութ̅են, ՚ի ծունկս անկեալ արտասուաբուղխ աչօք աղօթէր առ ա̅ծ տարածմամբ ձեռաց մինչև ցեր̅րդ ժամ աւուրն։ Ապա ետես զք̅ս մեծաւ փառօք իջեալ ՚ի վերայ բարձր գղեկլին Ամկոյ բերդի եկեղեցւոյն, զոր յառաջագոյն շինեալ էր ս̅բ առաքեալն Թադէոս․ և եկաց մնաց անդ իբրև ժամ մի՝ ՚ի տեսութ̅ի մխիթարութ̅ե ս̅բ վարդապետին, և ապա վերացաւ յերկինս Ապա յետ անցանելոյ ամաց երկոտասանից, յամսեան մայիսի ժ̅ե՝ յաւուր համբարձման փրկչին մերոյ՝ յետ ս̅բյ պատարագին, ելեալ ս̅բ վարդապետն ստեփաննոս՝ և գնաց ՚ի լեառն խաչ գլուխ, ուր ս̅բ առաքեալն

Թա

Թադէոս, և յետ ն՟ր մեծն գրիգոր խաչ դրոշմեալ օծեցին, զոր յառաջագոյն յիշեցաք։ Աւ՜ զի ադամանդք ս՟բ հոգւոյն՝ յառաջագոյն գիտաց զվախճանն իւր. և անդ ՚ի լերինն առաջի ս՟բ խաչացն՝ զծունկսն ՚ի վ՟ր ապառաժ վիմի միոյ եդեալ՝ յորում հետք նշանացն և տեղիքն յայտնապէս երևեին տեսիլ սքանչելեաց առն ա՟յ՝ ս՟բ վարդապետին ստեփաննոսի։ Աւ՜ անդ բազկատարած մաղթանօք և յորդահոս արտասուօք հայցէր յա՟յ, զի առաքեսցէ նմա զհրեշտակ բարի և խաղաղութ՟ե՝ որ քաղցրութ՟բ աւանդեսցէ զհոգի իւր. և անխռով խաղաղութ՟բ անցուսցէ ընդ դասս օդային այսոցն չարութ՟ե, որք են ՚ի ներքոյ երկնից։ Նաև միանգամայն խնդրէր զպէս պէս հայցուածս վ՟ն ա՟զգն. [illegible] խաղաղութ՟ի. քրիստոնէից անդորրութ՟ի. եկեղեցեաց հաստատութ՟ի. հայրապետաց ուղղափառութ՟ի. վարդապետաց անձանձիր քարոզութ՟ի. քահանայից սրբութի · կրօնաւորաց արիութի · այգեստանաց պտղաբերութի · պարտիզաց առաւելութի · խաշանց և անասնոց անսխալ ծննդականութի · տանց շինութի · արանց խոհեմութի · կանանց պարկեշտութի · երիտասարդաց ողջախոհութի · կուսից զգաստութի · տղայոց պահպանութի · բարեաց լիութի · աղբերաց յոլովութի · ծովու խաղաղութի · ամպոց քաղցրութի · անձրևաց յորդութի · գետոց հանդարտութի · թագաւորաց հաշտութի · բանաւորաց խաղաղութի · սողնոց և ամ վնասակար զեռանց՝ և թիւնաբեր ճճեաց վերացումն · հիւանդաց առողջութի · տկարացելոց զօրութիւն · գլորելոց կանգնումն · նեղելոց անդորրութի · և ամ վիրաւորելոց փարատումն և առողջութի · մեղաւորաց դարձ և ապաշխարութի · ննջեցելոց հանգիստ և ողորմութի , և երկնից արքայութի :

Եւ այսպս յետ աղօթիցն եղեւ 'ի վր ծովուն յարևմտեան 'ի հիւսիսոյ կող մանէ ամպ լուսափայլ · և ՚ի վ՟ր ամպոյն տիրամայր ս՟բ ա՟ծածինն , որ ունէր ՚ի գիրկն իւր զորդին միածին լուսափայլ դիմօք · և բ՟ հրեշտակք եղեալ պսակ լուսաճաճանչ և աստղափայլ ՚ի վ՟ր գլխոյ տիրամայր ս՟բ ա՟ծածնին ։ Եւ ձայն եղև ՚ի լուսափայլ ս՟բ մանկանէն առ ս՟բ վարդապետն՝ որ ասէր · կատարեսցին ա՟մ խնդրուածք քո , զորս յառաջագոյն խնդրեցեր · և զոր այժմ խնդրես՝ որք հաւատով աղաչեն զիս՝ ապաւինելով ՚ի բարեխօսութ՟ի քո՝ ես կատարեցից զա՟մ խնդիրս ն՟ց · և դու եկ և վայելեա՛ զանսպառ ուրախութ՟իւն, զոր պատրաստեցեր դու քեզ՝ քոյին անտանելի ձգնու՟բդ ։ Եւ յետ աւետաւոր քաղցր բարբառոյն տեսիլն վերացաւ · և ինքն մեծաւ գոհու՟բ փառաւորելով զք՟ս էջ ՚ի լեռնէն՝ և եմուտ ՚ի տաճարն ս՟բ · և անդ գոհացողական և սրտահառաչ պաղատանս վեր առաքէր առ ամենաս՟բ երրոր-

դուռն , միջնորդ և բարեխօս ունելով զերանուհի կոյսն մարիամ:
Ապ̂ յետ համբարձմանն , 'ի նոյն կիրակէին հրամայեաց միում աշակերտացն իւրոց՝ որ էր յոյժ խստակրօն և ճգնազգեաց ոբեղայ , զի հսկմամբ մատուցանիցէ զսբ̃ պատարագն:
Ապ̂ ինքն հաղորդեցաւ̂ 'ի կենդանարար սբ̃ մարմնոյ և յարենէ որդւոյն այ̃: Ապ̂ անկաւ̂ 'ի մահիճս յաւ̂ուր ե̃ շաբաթի • և պայծառացան երեսք նր̃ որպ̃ս անո̂ւանակցին իւրոյ ստեփաննոսի նախավկային • և բազում խրատս ոգէշահս՝ և բանս մխիթարականս խօսէր առ ամ̃ եղբարսն , որք 'ի կարգաւ̂որ̃ց և յաշ̃ականաց և յամ̃ գաւ̂առաց գային և ը̃ ունէին 'ի նմանէ զօրհնութի̃՝ և զառողջութի̃ պէսպէս ցաւ̂ոց իւրե̃նց՝ և ուր̃խութե̃ դառնային: Ապ̂ հան̃ել 'ի շաբաթ օր կիրակմտի երեկոյին՝ 'ի մեծի հրաշափառ տօնի գալստեան հոգւոյն սբ̃յ՝ հրամայեաց եղբարցն բանալ

ինքն՝ և մուծանել յեկեղեցին ՚ի տաճար ս̄րբյն սահակայ ։ Եւ պատուիրեալ պաշտօնէիցն ա̄մյն՝ զի յերեկօրեայ մինչև ցառաւօտն՝ զգիշերապաշտօն կարգ ժամուցն հակմամբ կատարեսցեն ։ Եւ յորժամ հասին յիւղաբերից աւուրն՝ մտին ՚ի տաճար քահ̄նյքն և սարկաւագունքն, զի զգեցցեն հանդերձս՝ և ընթեռնուցուն զիւղաբերից ս̄բ աւետարանն ։ Եւ տեսին զս̄բ վարդապետն ստեփաննոս՝ ՚ի ծունկս անկեալ՝ և ըզբազուկս յերկինս տարածեալ, և այնպէս աւանդել զհոգին իւր առ ա̄ծ ։ Եւ նք̄ա ոչ ումեք յայտնեցին զայն, մինչև ցարձակել ժամուն · և հոտ անուշ բուրեաց ՚ի քիմս ա̄մյն · և յետ արձակման պ̄տրագին, ապա ազդարարեալ ա̄մ եղբարցն · որք ձայն բարձեալ յոյժ ողբալի սգով և մորմոքմամբ արարին կոծ մեծ ՚ի վ̄ր ն̄ր ։ Եւ ապա պատեցին զնա մաքուր կտաւովք ը̄ս օրինի · բայց զմազեղէնն՝

որ ո՛չ էր փոխեալ երբէք , ոչ հանին յանձնէն ըստ հրամանի նոցա . և զայն օր թողին ՚ի տաճարին անդ ՚ի պատիւ մեծի կնքակէի : Ապա յաւուր Ը շաբթի զկնի նոցա պատարագին՝ զոր դարեցին փոքրիկ այլ մի . և իջուցեալ զՔրիստոսի մաքուր մարմինն եդին ՚ի վերայ սեղանին , զի տարցեն ՚ի վանքն արգելանին՝ և անդ ամփոփեսցեն , որպէս և հրամայեալ էր նոցա յառաջագոյն : Ապա իսկոյն տեսին , զի բազումք աստի և անտի՝ արք և կանայք խածատեալք ՚ի կատաղեալ շանց և վիրաւորեալք . որք և ինքեանք եւս ատամունքն իւրեանց խածատէին զինքեան և վիրաւորէին . որք եկեալ անկան առաջի սեղանին , ուր էր եդեալ Քրիստոսի մարմինն : Ապա տեսին յանկարծակի , զի թափեցան ՚ի բերանոց նոցա որպէս զձագս մկանց՝ և առժամայն սատակեցան . և անդէն արարեալ փոսս՝ և արկին ՚ի ներքս , և ծածկեցին հողով . և ամենայն խածատեալքն և վիրաւորեալքն բժշկեցան ՚ի ցա̂ւոցն, և առողջացան ՚ի հի̂ւանդուե̄ց իւրե̄նց։ Ե̂ւ ապա լծեալ զլուծս եզանց՝ վառեալ լապտերօք և անուշահոտ խնկօք տարեալ ՚ի վանքն արգելան․ և անդ ժողովե̄լ բազում եպիսկոպոսք և վարդապետք և անթի̂ւ քահանայք և ժողովուրդք․ և մեծա̂ւ պատո̂ւով եդին ՚ի դիր հանգստե̄ն։ Ե̂ւ շինեցին ՚ի վ̄ր ն̄ր մարմնոյն մատուռ վայելուչ․ որ մինչև ցայսօր ևառ յապայս առնէ բազում ցա̂ւոց, և ազգի ազգի ախտաժետաց բժշկութի̄ս․ և մանա̂ւանդ կատաղեալ շանց՝ և գայլոց, և ա̄լ չար գազանաց խածատելոց․ որք ՚ի հեռա̂ւորաց և՚ի մերձա̂ւորաց՝ հա̂ւատացեալք և այլազգիք՝ հա̂ւատով և յուսով դիմեալ գան յուխտ ՚ի ն̄ր գերեզմանն և յաղօթատեղ ն̄րյն՝ առնուն զկատարեալ բըժշկուի̄ն, աղօթիւք և բարեխօսուե̄ աստեփաննոսի ն̄ր վարդապետին՝ ն̄ր յուսկայ որդւոյն։

Եւ արդ՝ զմի զօրութի՟ և սքանչելագործութի՟ շնորհեն ամի՟՝ այս է՟ սբ՟ մեծատանքս · ժբ՟ , անապատն սբյն՟ իսահակայ , և վանքն արգելանոց՝ ՚ի փառս ամենազօր տրուէ՟: Եւ զի սբ՟ վրդպտս՟ այս ստեփաննոս՝ ՚ի մանկուէ՟ իւրմէ էր յոյժ պահեցօղ · այնքան՝ մինչ զի յաւուրս քառասնորդաց աղուհացից պահոց , ծբ՟ օրն միանգամ ճաշակէր հաց · և զայն ևս ո՛չ յագ , այլ՝ հոգէպահ մի: Եւ յաւուրս չորեք շաբթի և ուրբաթի՝ և զամ՟ տրունի՟ շաբաթուն անսուաղ անցուցանէր , և էր յոյժ ժուժկալ աղօթասէր և արտասուեղ · լռակեաց և խորհրդական · անձանձիր ուսուցանօղ · և յանդիմանիչ ատհակաց · քաղցրախօս՝ գթած՝ և առատաձեռն · էր կոյսնամիտ և ողորմած , լի՛ ամ՟ շնորհօքն այ՟: Որոյ յիշատակն օրհնութի՟ եղիցի · և աղօթիւք նորին Տէր Յս՟ Քս՟ Ածն՟ ամի՟ մեզ ողորմեսցի ,

Ամէն :

* Բանք պիտանիք և օգտակարք՝ առակաց յառաջնոց ։

Աւա՛ղ մեզ հայել պիտի, յայն արեւան՝ որ լոյս կու ծագէ · շատ կայ ՚ի յարեւ նման, ՚ի պճղին վերայ կու վազէ ։ Գիտուն մարդն յարեւ նըման, խօսքըն զէտ արեւ կու ծագէ · անգէտ մարդն օձու նըման, հանպ̄զ զմարդն կու խածէ ։ Մարդ կայ որ ռ̄ ածէ, ռ̄ կայ որ մէկ մի չածէ · այն մարդն որ ռ̄ ածէ, յանգէտին քով փող մի չածէ ։ …ազան ՚ի յանտառ մորին, Թէպէտ …՝ Թէպէտ բազայ է · ճոհարն ՚ի ծո… միջին, Թէպ̄ քար՝ Թէպ̄ ճոհար է …ելօքն ՚ի յանգէտն ՚ի մօտ, մինչ ա… …է՛ Թէ ինչ նման է · ճրագն ՚ի առաջեւ կուրին, կու վառի՝ ինքըն չըգիտէ ։ Խելօքն է ՚ի ծով նըման, որ քանի չափեն՝ նա տանի · անգէտն է ՚ի տիկ նըման, չափով յա̂ւել լըցուն՝ կու պատռի ։ Աշխարհս ՚ի տօլայ նըման, որ ՚ի վեր ու ՚ի վայր Թա̂ալի · վերինն

այլ 'ի վայր դառնայ, և վարինն 'ի վեր
թաւալի։ Աշխարհս է կամանաց մար-
գեր, մեք 'ի մէջն եմք կաքաւու ձա-
գեր · գըրօղն այլ բազայ եղեր, կու-
կրէ մէկ 'ի մէկ դար 'ի վեր։ Մանկունք
երբ 'ի հաց նստիք, ձեռնեցէք աղքատք
ձեռք ընկեր · մեռանիք ու 'ի անդէնն եր-
թայք, կու նստիք քանց մէկ այլ 'ի
վեր։ Մարդն որ յօտար տեղ երթայ,
շատ մի խելք նորա պիտենայ · ամէն
մարդոյ ցած կենայ, ապա իւր բանն
լինենայ։ Շատ թգաւորաց մեծա
ու իմաստուն արանց լըսեցի · թէ
չար չկշտանայ մարդն, յաւտըն
րէա` մինչ որ մեռանի։ Տանին գերե
մանն դընեն, և հողով իւր աչքն լը
ւի · ապա փոշիմանի ու ասէ, թէ չ
րնքէ ու այլ չի պիտի։ Այս որ հ
ինձ արի, չէ՛ արեր ադամայ որդի
որ շուշամ ոսկի ունէի, 'ի գետինն 'ի
վայր վաթեցի ։ Հազար ձի վազան-
քերի, վազցուցի ու այլ ո՛չ հասուցի ·
Ի՛նչ շահ իմ յետին խելացն, երբ
առջի անուննն աւրեցի։

Մէկ մարդ մի ձոհար ունէր, ՚ի խելաց պահել չկարաց. զինչ խելքն ՚ի վ͞ր եկաւ, նա գընաց ձոհարն ՚ի ձեռաց: Գընաց ինքն ՚ի վայր նստաւ, ծողորմուկ ու խիստ շատ ելաց. ն͞ր լացն այլ ինչ շահէ, երբ գնաց ձոհարն ՚ի ձեռաց: Մ՛աղ ու ո͞ բերան, թ՛ինչ խելօք անխելացայ. ք͞ն զկաթն ցխտտակ էիր. ք͞ն զգարնան ջուր պղտորեցայ: Շարած մարգարիտ էիր, կամ արծաթն անեղէնք փաթեցայ. քանի զապապ ՚ի ծայրն էիր, նա տըրկուկ տըրկուկ կեցայ: Լաւ մարդ ես ն͞ր ասեմ, ր ւ մնայ զբերանըն համով. հանց ոյն լեզուն գինն չունի, թէ լինուն ունն մի ձոհարով: Մ͞ջ երբ զ͞ոս աար, բղհողն ու ջուրն ու զօդն հըրլ. մըթխառն մի աւել չարար, այլ յըղուեց զամէնըն համով: Լեզուն է գործիք բանի, արդարոյն զինչ խալիս ասկի. մարդոյն է մէկ փերթ արուր, և օձին է բ̄ ձըղի: Հանց մարդ որ բ̄ խօսի, զմէկն քաղցր ու զմէկն

լե